ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ -2014

ՀՏԴ 378 (07)
ԳՄԴ 74.58 y7
Զ 431

Ձեռնարկը տպագրվում է
Համաշխարհային բանկի
ֆինանսական միջոցներով և
ԿԳ ԾԻԳ աջակցությամբ

Հեղինակներ՝ Լ.Զաքարյան, պ.գ.թ., դոցենտ
Ծ.Ասատրյան, բ.գ.թ.
Ա.Ներսիսյան

Խմբագիր՝ Գ. Հակոբյան, բ.գ.թ.
Անգլերենի թարգմանիչ՝ Ն.Սրապյան

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ /Լ.Զաքարյան, Ծ.Ասատրյան, Ա.Ներսիսյան,
Զ 431 խմբ.՝ Գ. Հակոբյան.-Եր.: Հյուսիսային համալսարան, 2014, էջ 400:

Որակի ապահովման ձեռնարկում ներկայացված է Հյուսիսային համալսարանի կրթության որակի ապահովման համակարգը: Այն նախատեսված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների համար: Ձեռնարկի նպատակն է բարձրացնել շահակիցների իրազեկությունը մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի, չափանիշների և չափորոշիչների ուղղությամբ, մեթոդական օգնություն ցույց տալ որակի ապահովման համակարգի աշխատակիցներին: Ձեռնարկը արտաքին փորձաքննության ներկայացնելու նպատակով հրատարակվում է երկու լեզուներով՝ հայերեն և անգլերեն:

ՀՏԴ 378 (07)
ԳՄԴ 74.58 y7

ISBN 978-9939-9115-0-2

© Հյուսիսային համալսարան, 2014

© Լ.Զաքարյան, Ծ.Ասատրյան, Ա.Ներսիսյան, 2014

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագրական խորհուրդ

Գրիգոր Ասատրյան, *Հյուսիսային համալսարանի ուսումնական և գիտահրատարակչական գծով պրոռեկտոր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

Մհեր Մակիչյան, *Հյուսիսային համալսարանի բարեփոխումների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու*

Սուսաննա Հովհաննիսյան, *Հյուսիսային համալսարանի հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. **Գլուխ I. Հյուսիսային համալսարանի 2013-2018 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի առաջնահերթությունները**
2. **Գլուխ II. Հյուսիսային համալսարանի որակի ապահովման հայեցակարգ**
   - Որակի ապահովման կայացման ընթացքը Հյուսիսային համալսարանում
   - Որակի ապահովման հիմնական հասկացությունները
   - Որակի ապահովման հայեցակարգի հիմնական նպատակը
   - Որակի ապահովման հայեցակարգի հիմնական խնդիրները
   - Որակի ապահովման հիմնական սկզբունքները
   - Որակի ապահովման հայեցակարգի ապահովման միջոցները
   - Որակի ապահովման հայեցակարգի իրականացման ռազմավարությունը
   - Որակի ապահովման չափանիշները
   - Որակի ապահովման հայեցակարգի իրականացման մեխանիզմները
   - Որակի ապահովման հայեցակարգի իրականացման առաջնահերթ ոլորտները
   - Որակի ապահովման հայեցակարգի քարտեզ
3. **Գլուխ III. Հյուսիսային համալսարանի որակի ապահովման համակարգը**
   - Որակի ապահովման վարչության կանոնադրություն և կառուցվածք
   - Որակի ապահովման համակարգի քարտեզ
4. **Գլուխ IV. Որակի ապահովման գործիքակազմ**
   - Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների գործընթաց 1-ի գնահատման գործիքներ
   - Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների գործընթաց 2-ի գնահատման գործիքներ
   - Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների գործընթաց 3-ի գնահատման գործիքներ

5. Հավելված

1. Հյուսիսային համալսարանի կառավարման մոդելը և կրթական համակարգը
2. Հյուսիսային համալսարանի կառուցվածքը
3. Հյուսիսային համալսարանի 2011-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր
4. Հյուսիսային համալսարանի կրթության որակի շարունակական բարելավման գործողությունների ծրագիր
5. Հյուսիսային համալսարանի կանոնակարգերի ցանկ
6. Որակի ապահովման վարչության կողմից մշակված ուսումնամեթոդական փաստաթղթեր

6.1. Դասախոսների նմուշօրինակ կոմպետենցիաների զարգացման մեթոդական ուղենիշներ

6.2. Մասնագիտական կրթական ծրագրի ձևաթերթ

6.3. Մասնագիտության կրթական ծրագրի մեն նմուշօրինակ

6.4. Բենչմարքինգ էտալոնային համեմատական վերլուծություն

6.5. Մշտադիտարկման ուղեցույց

6.6. Հարցաշար Հյուսիսային համալսարանի դեպարտամենտի աշխատանքների ուսումնասիրության

6.7. Հարցաշար Հյուսիսային համալսարանի ամբիոնի աշխատանքների ուսումնասիրության

7. ՀՀ կրթության որակի ապահովման ոլորտին վերաբերող իրավանորմատիվային փաստաթղթեր

7.1. Կարգ Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման (Հավելված ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի N 978- Ն որոշման)

7.2. Ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշները (հավելված N 1 ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշման)

7.3. Մասնագիտական կրթական ծրագրի հավատարմագրման չափանիշները (Հավելված N 2 ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի N 959-Ն որոշման)

Համառոտագրություններ

ԵԲԿՏ - Եվրոպական բարձրագույն կրթական տարածք

ՀՈԱՇ – Հայաստանի որակավորումների ազգային շրջանակ

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄՈՒՀ – մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱԱԿ – Որակի ապահովման ազգային կենտրոն

ՊԴ կազմ – պրոֆեսորադասախոսական կազմ

ՊԻՄԲ – պլանավորում, իրականացում, ստուգում, բարելավում

ՌԾ – ռազմավարական ծրագիր

ՈՒԱ – ուսումնառության արդյունք

ՈՒԳԱ – ուսանողական գիտական ընկերություն

ՈՒԹՀՎ վերլուծություն – Ու՝ ուժեղ կողմերի, Թ՝ թույլ կողմերի, Հ՝ արտաքին հնարավորությունների, Վ՝ արտաքին վտանգների վերլուծություն (ագլերեն՝ **SWOT** - **S**trengths, **W**eaknesses, **O**pportunities, **T**hreats)

ՈՒՕ կազմ- ուսումնաօժանդակ կազմ

PR - Public Relations (հասարակայնության հետ կապեր)

ՆԱԽԱԲԱՆ

Գլոբալացման պայմաններում մարդկության առջև ծառացան նոր մարտահրավերներ, այդ թվում նաև բարձրագույն կրթության բնագավառում: Անհրաժեշտություն զգացվեց, որ կրթության համակարգը համապատասխանեցվի հասարակության թե՛ ներքին պահանջներին և թե՛ արտաքին մարտահրավերներին, ունենա առաջանցիկ զարգացման միտում, բովանդակությամբ և ձևով լինի ժողովրդավարական: Գլոբալ սոցիալական ցնցումների պայմաններում կարևորվեց կրթության միջոցով մարդասիրության, հանդուրժողականության, քննադատական ընկալման, համագործակցության, անկախության, ճկունության, բաց մտածողության, նախաձեռնողականության որակների ձևավորումը:

Երկրագունդը «հանկարծ այնքան փոքրացավ», որ հնարավոր եղավ կրթությունը սկսել մի երկրում, շարունակել՝ մեկ ուրիշում, իսկ աշխատանքի անցնել աշխարհի այն ծայրում, որտեղ կառաջարկվեն ավելի լավ պայմաններ: Գլոբալ աշխատաշուկան դրեց ուսանողների և դասախոսների շարժունության ու դիպլոմների փոխճանաչման խնդիրը: Առավել քան երբևէ, կարևորվեցին որակավորումների ազգային շրջանակների, մասնագիտական կրթական ծրագրերի համադրելիության խնդիրները:

Ի պատասխան այս մարտահրավերների՝ եվրոպական կրթական տարածքում սկիզբ առավ Բոլոնիայի գործընթացը, որին միացավ նաև Հայաստանի Հանրապետությունը:

Ժողովրդավարական գործընթացները հանգեցրին նրան, որ բարձրագույն կրթությունը դադարեց լինել անհատների կամ առանձին սոցիալական խավերի մենաշնորհը, սակայն դա առաջացրեց նոր պարադոքս՝ կրթության որակի անկում և, հետևապես, նոր մարտահրավեր՝ կրթության որակի անընդհատ մշտադիտարկում, բարելավման համար մեխանիզմերի ստեղծում: Շատ երկրներ ստեղծեցին որակի ապահովման կառույցներ, կարևորեցին բուհերի հավատարմագումը և ծրագրերի գնահատումը: Որակի ապահովման համակարգերի ստեղծման գործընթացները դեռևս շարունակվում են, ընդ որում, տարբեր երկրներում մոտեցումները միանման չեն:

Բոլոր երկրներում կրթության համակարգերը շատ տարբեր են, այդ պատճառով որակի ապահովման համակարգի մոդելը չի կարող ձևով համաեվրոպական լինել, սակայն դա չի նշանակում, որ չի կարելի ունենալ համադրելի չափանիշներ և չափորոշիչներ, ինչպես նաև կրթության որակի ապահովման միասնական սկզբունքներ:

Որակի ապահովման սկզբունքներն են՝ համեմատելիությունը, փոխանցելիությունը, որակի անընդհատ բարձրացումը, հաշվետվողականությունը, թափանցիկությունը: Կարևոր հիմնահարցերից է նաև աշխատաշուկայի դերը այս հարցերում: Փորձագետների գնահատմամբ՝ աշխատաշուկան պետք է միտված լինի կրթության որակի բարձրացմանը, քանի որ դա բխում է նաև իր շահերից: Կարևորվեց բարձրագույն կրթության հաստատություններում կարգավորող մենեջմենթի դերը: Եվ Բուխարեստի կոմյունիկեի սկզբունքներով (2012թ.) հիմնավորվեց որակի ապահովման համակարգի ներդրման կարևորությունը, ավելին՝ որոշվեց մեծ լիազորություններ տալ որակի ապահովման կառույցներին, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն որոշումներ կայացնել:

Կրթության ոլորտի համար նոր մարտահրավեր էր գլոբալ ֆինանսական ճգնաժամը: Ի պատասխան դրա՝ Եվրամիության անդամ երկրների ղեկավարները համաձայնության եկան ԵՄ նոր տնտեսական ռազմավարության՝ «Եվրոպա 2020» նախագծի շուրջ, որում այլ նպատակների կողքին ընդգծվեց նաև հետևյալը՝ երիտասարդների առնվազն 40%-ը պետք է բարձրագույն կրթություն ստանա, ԵՄ երկրների ՀՆԱ-ի 3%-ը պետք է հատկացվի հետազոտություններին և մշակումներին:

2005 թ. միանալով Բոլոնիայի հռչակագրին՝ Հայաստանը որոշակի քայլեր իրականացրեց մասնագիտական կրթական համակարգում միջազգայնորեն համադրելի սկզբունքների ներդրման և եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու ուղղությամբ, իսկ 2008 թ. Հայաստանում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի ստեղծմամբ սկիզբ առավ մեր հանրապետության որակի ապահովման համակարգի ձևավորումը:

Կենտրոնն իր գործունությունը սկսեց ոչ թե հավատարմագրումից և գնահատումից, այլ բուհերի հետ համատեղ քննարկումներից, կրթության ոլորտի չափանիշների և չափորոշիչների ձևակերպումից, ինչը նպաստեց կրթության ոլորտի փորձագիտական հանրույթի ձևավորմանը: Դա մեծապես նպաստեց որակի ապահովման գործընթացների խորացմանն ու շարունակականությանը: Որակի ապահովման գործընթացների շրջանակում կարևորվեց շահագրգռվածության բարձրացումը, ներքին որակի շեշտադրումը, հաշվետվողականությունը, թափանցիկությունը, ենթադրվող և իրական վերջնարդյունքների համապատասխանությունը: Հյուսիսային համալսարանը, որը

հավատարմագրվել էր դեռևս 2001 թ., առաջիններից մեկն էր, որ ընդգրկվեց այդ գործընթացներում:

Որակի ապահովման ներքին համակարգի ներդրման գործընթացները բուհում սկիզբ առան 2010թ., երբ ստեղծվեց Հյուսիսային համալսարանի որակի ապահովման վարչությունը: 2011 թ. վերջին-2012 թ. սկզբին սկսեց ձևավորվել որակի ապահովման ցանցային համակարգը՝ որակի ապահովման ուսումնամեթոդական, ուսանողական և տեխնիկական հանձնաժողովներով: Անցած տարիներին որակի ապահովման վարչության գործունեությունը ուղղված է եղել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ներքին շահակիցների իրազեկվածության բարձրացմանը, Հյուսիսային համալսարանում որակի ապահովման կառույցի ձևավորմանը, կանոնակարգի և քաղաքականության մշակմանը: Սա, ըստ էության, որակի ապահովման գործընթացների համար անցումային շրջան էր, որը զուգադիպեց ենթակառուցվածքային կարողությունների ինքնավերլուծության զեկույցի պատրաստման փուլին: Շահակիցների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով ստեղծվեցին որակի ապահովման մեթոդական փաթեթներ, կազմակերպվեցին քննարկումներ և սեմինարներ:

Համալսարանն այսօր թևակոխել է որակի ապահովման գործընթացների զարգացման մի նոր՝ որակի մշակույթի ձևավորման փուլը: Այս փուլի, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների կատարելագործման հարցում կարևոր դեր ունեցավ 2012 թ. շահած «Որակի ապահովման ներբուհական համակարգերի ներդրման կամ դրանց հետագա բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհների տրամադրման» ՀԲ դրամաշնորհային ծրագիրը, ինչի շնորհիվ իրականացվեց նաև համալսարանի մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակումը:

Համալսարանի որակի ապահովման բարելավման գործում բավական մեծ դեր ունեցավ նաև վերջին տարիներին արտաքին կապերի ուղղությամբ ծավալված ակտիվ աշխատանքը: 2012թ.-ից համալսարանը ուսանողների, վարչական և դասախոսական անձնակազմի փոխանակման ծրագրեր է իրականացնում եվրոպական բուհերի հետ: Ծրագրի շրջանակում ստեղծված կոնսորցիումի մեջ ներգրավված են նաև եվրոպական բուհեր: Համալսարանը համագործակցում է նաև Ռուսաստանի Դաշնության բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:

2013թ. Հյուսիսային համալսարանն ընդգրկվել է Եվրամիության «TEMPUS» ծրագրի երկու նախագծերում: TEMPUS-VERITAS-ի `«Երրորդ ցիկլի կառուցվածքային զարգացումը Զալցբուրգի սկզբունքների հիման վրա» ծրագրով նախատեսվում է բարելավել հետբուհական կրթությունը Եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխանեցնելու միջոցով: Ծրագրի շրջանակում բուհերի միջև կազմակերպվում են համատեղ սեմինարներ, փոխադարձ այցեր, մշակվում են հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր: TEMPUS–GOVERN «Կառավարման համակարգի արդյունավետ կառուցվածքային փոփոխությունների իրականացումը Բոլոնիայի սկզբունքների հիման վրա» ծրագրի շնորհիվ բուհը կատարելագործում է իր կառավարման համակարգը:

Որակի ապահովման սույն ձեռնարկում նկարագրված են համալսարանի՝ վերոհիշյալ ուղղություններով նախատեսած աշխատանքների իրականացման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես նաև նրանց որակի գնահատման մեխանիզմներն ու գործիքները: Որակի ապահովման ձեռնարկը հնարավորություն է ընձեռում հանգամանորեն ծանոթանալու Հյուսիսային համալսարանի որակի ապահովման ներբուհական համակարգին ու նրա կառուցվածքին, ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների ուղղությամբ իրականացվող աշխատանքներին, այդ առաջնահերթությունների հաշվառումով կազմված որակի ապահովման հայեցակարգին, նրա իրականացման ընթացակարգերին, համալսարանի որակի ապահովման ոլորտը կարգավորող ներքին նորմատիվային, ինչպես նաև հանրապետական նշանակություն ունեցող իրավանորմատիվային փաթեթներին: Ձեռնարկում տեղ են գտել նաև համալսարանում մշակված և կիրարկված որակի ապահովման գործիքակազմը, ինչպես նաև աշխատանքային որոշ նյութեր:

Ձեռնարկը բաղկացած է չորս գլխից և հավելվածից: Առաջին գլխում ներկայացված են Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրի (ՌԾ) 2013-2018 թթ. առաջնահերթությունները: Երկրորդ գլուխը ներառում է ՌԾ-ի առաջնահերթությունների հիման վրա կազմված որակի ապահովման հայեցակարգը: Երրորդ գլխում ներկայացված է որակի ապահովման վարչության կանոնադրությունը և կառուցվածքը, որակի ապահովման համակարգի քարտեզը: Չորրորդ գլուխն ամփոփում է հայեցակարգում ներկայացված գործիքակազմը:

Հավելվածի առաջին մասն ընդգրկում է Հյուսիսային համալսարանի կառավարման մոդելը, ռազմավարական ծրագիրը (2011-2015թթ.), ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում որակի ապահովման արտաքին փորձագետների խորհրդատվությունների հաշվառմամբ կազմված և վերանայված գործողությունների ծրագիրը: Հավելվածում տեղ են գտել նաև բուհի որակի ապահովման վարչության կողմից մշակված աշխատանքային նյութերը, որոնք տրամադրվել են համալսարանի ներքին շահակիցներին մեթոդական խորհրդատվություն ապահովելու նպատակով: Զետեղվել են նաև կրթության որակի ապահովման հետ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված իրավանորմատիվային որոշ փաստաթղթեր:

Հաշվի առնելով այն փաստը, որ ձեռնարկը ներկայացվել է արտաքին գնահատման և փորձաքննության, այն թարգմանվել է նաև անգլերեն (բացի հանրապետական իրավանորմատիվային փաստաթղթերից): Այս հանգամանքը հնարավորություն կընձեռի որակի ապահովման գործընթացները բարելավել՝ հաշվի առնելով նաև արտաքին փորձագետների դիտողություններն ու խորհրդատվությունը:

Ձեռնարկի նպատակներն են.

- Ներկայացնել համալսարանում կրթության որակի ապահովման հայեցակարգը և որակի շարունակական բարելավման քաղաքականությունը:
- Ստույգ տեղեկատվություն տրամադրել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին համալսարանի ՌԾ երեք առաջնահերթությունների իրականացման և որակի ապահովման վերաբերյալ:
- Նկարագրել, թե կրթության որակի ապահովման ներբուհական ինչպիսի մեխանիզմներ են ներդրվել համալսարանում, որոնք կարող են նպաստել որակի ապահովման գործընթացների շարունակական զարգացմանն ու կատարելագործմանը:
- Սահմանել որակի ապահովման առաջընթացի այն ցուցանիշները, որոնց հասել է այս պահին համալսարանը:

Որակի ապահովման ձեռնարկում ներկայացված գործիքակազմի մի մասն արդեն անցել է որակի ապահովման շրջափուլով, իսկ մյուս մասը դեռևս փորձարկման և բարելավման փուլում է:

Հույս ունենք, որ այս ձեռնարկը ոչ միայն կբարձրացնի ներքին շահակիցների իրազեկվածությունը, այլ նաև կխթանի նրանց ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:

ԳԼՈՒԽ I

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2013-2018 ԹԹ.
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հյուսիսային համալսարանի 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը հաստատվել է 2011թ. գիտխորհրդի նիստում (14.10.2011թ.) և ընդգրկում է բուհի համակողմանի հեռանկարային զարգացման կարևորագույն 10 ուղղությունները: Ռազմավարական ծրագիրը ներառում է այն քաղաքականությունը և միջոցառումների համախումբը, որոնց իրականացումը պետք է հիմք հանդիսանա բուհի հետագա զարգացման համար:

Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրի եռամյա իրագործումը հնարավորություն տվեց հստակեցնել բուհի առաքելությունն ու նպատակները, վերապատրաստումների միջոցով հզորացնել բուհի մարդկային ու մասնագիտական ռեսուրսները, բարելավել բուհի նյութատեխնիկական հագեցվածությունը, ակտիվացնել բուհի արտաքին կապերը: Սակայն դրա հետ մեկտեղ ակնհայտ դարձան ռազմավարական ծրագրի խոցելի կողմերը, մասնավորապես նոր մարտահրավերների հետևանքով (հանրապետությունում ընդհանուր ժողովրդագրական պատկերի վատթարացում, բուհ ընդունվելու կարգի փոփոխում, բուհերի միջև մրցակցության ուժեղացում, արտաքին պայմանների արագ փոփոխում և այլն) անհրաժեշտություն զգացվեց վերանայել և հստակեցնել ռազմավարական ծրագիրը, ավելի իրատեսական դարձնել այն՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին, առանձնացնել ռազմավարական ծրագրում մի քանի առաջնահերթություններ, որոնք հնարավոր կլինեն իրականացնել առաջիկա 5 տարիների ընթացքում:

Նոր մարտահրավերներին դիմակայելու և մրցունակությունը բարձրացնելու համար Հյուսիսային համալսարանն իր մարտավարության մեջ կատարեց հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

- հաշվի առնելով հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, միգրացիայի աճը և բնակչության վճարունակության անկումը, ինչպես նաև ուսանողական համակազմի ընդլայնման խնդիրները՝ որոշվեց չբարձրացնել

ուսման վարձը, սոցիալապես անապահով խավերի համար ուսման առաջադիմության հաշվառմամբ զեղչել վարձավճարները,

- հաշվի առնելով ընդունելության նոր կարգը՝ թե՛ բովանդակության, թե՛ ձևի առումով փոփոխվեցին հեռակա ուսուցմամբ ուսումնական պլանները և հարմարեցվեցին ուսանողների կարիքներին:

2012-2013 ուսումնական տարում բուհի ընթացիկ վիճակի գնահատման նպատակով կատարված համալսարանի ինքնավերլուծությունը, որակի ապահովման գծով արտաքին փորձագետների խորհրդատվությունները հնարավորություն տվեցին օբյեկտիվորեն գնահատել բուհի առկա վիճակը և որոշել զարգացման առաջնահերթությունները:

Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրի առաջնահերթությունները

Ինքնավերլուծության իրականացումը, ներքին շահակիցների հետ քննարկումները և շրջանավարտների շրջանում կազմակերպված հանդիպումները թույլ տվեցին առանձնացնել համալսարանի առաջիկա գերակայությունները՝ շուկայամետ ՄԿԾ-ների մշակում, գիտահետազոտական աշխատանքի ակտիվացում, բուհի արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ ծրագրերի մշակում: Այդ ամենը միտված է բարձրացնելու մատուցվող կրթական ծառայությունների որակը և ապահովելու բուհի գրավչությունը:

1. Շուկայամետ մասնագիտական կրթական ծրագրերի մշակում

Հյուսիսային համալսարանում անցկացված հարցումները, ներքին շահակիցների հետ ֆոկուս-խմբերը, գործատուների հետ կազմակերպված հանդիպումները բուհին հնարավորություն տվեցին պարզել ՄԿԾ-ների վերափոխման ուղղվածությունը՝ մասնագիտական կրթական ծրագրերի համեմատելիության, համադրելիության և թափանցիկության ապահովումը, ինչը կնպաստի ուսանողների ներպետական և միջպետական շարժունության ապահովմանը:

ՄԿԾ-ները պետք է միտված լինեն շրջանավարտների այն կոմպետենցիաների ձևավորմանը, որոնք պահանջված են հասարակության և աշխատաշուկայի կողմից: Կարևորվում է այն, որ Հյուսիսային համալսարանի շրջանավարտները արագ փոփոխվող

շուկայի պայմաններում գտնեն իրենց տեղը, ցուցաբերեն ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պատրաստակամություն, օժտված լինեն քննադատական և վերլուծական մտածողությամբ, միջանձնային հաղորդակցման հմտություններով, ինչպես նաև մասնագիտության նկատմամբ ստեղծագործական մոտեցումներով:

Բուհի հզորացման և կառավարման արդյունավետության համար անհրաժեշտ է

- Շուկայի պահանջներին համապատասխան, դուբլինյան նկարագրիչների հաշվառմամբ՝ մատնանշել ակնկալվող ուսումնառության արդյունքները՝ նկարագրելով, թե ՄԿԾ-ի ավարտին ի՞նչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել շրջանավարտը:
- Վերանայել ՄԿԾ-ների շրջանակներում դասավանդվող առարկաների ծրագրերը և դրանց կրթական ելքային արդյունքները՝ մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան:
- Դասավանդման և ուսումնառության մեթոդները համապատասխանեցնել ՄԿԾ-ների վերջնարդյունքներին:
- Ստեղծել ՄԿԾ-ների վերջնարդյունքներին ուղղված ուսանողների գնահատման համակարգ:
- Պարբերաբար հավաքագրել և վերլուծել ՄԿԾ-ով բավարարվածության վերաբերյալ ներքին շահակիցների կարծիքները:
- Մշտադիտարկել ուսանողների առաջընթացն ու ձեռքբերումները, ուսումնական գործընթացը հնարավորինս հարմարեցնել ուսանողների կարիքներին:
- Ապահովել գործատուների հետ հետադարձ կապը՝ վերլուծելով և հաշվառելով նրանցից ստացված արձագանքը:
- Հասարակության առջև հաշվետվողականությունը ապահովելու համար հավաստի, անաչառ տեղեկատվություն տրամադրել Հյուսիսային համալսարանի կողմից առաջարկվող ՄԿԾ-ների, դրանցից ակնկալվող արդյունքների, որակավորման աստիճանների, դասավանդման ժամանակ կիրառվող ուսումնառության և գնահատման ընթացակարգերի և կրթական

հնարավորությունների մասին՝ ներառելով շրջանավարտների տեսակետը և ներկա ուսանողական կազմի ընդհանուր նկարագիրը:

Գործատուների հետ կապի ամրապնդման շրջանակներում Հյուսիսային համալսարանի կրթական ծրագրերի վերաբերյալ համապատասխան բնագավառների գործատուների գնահատականը ստանալու նպատակով մասնագիտական կրթական ծրագրերը պետք է ներկայացվեն վերջիններիս քննարկմանը, ստեղծվեն կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:

1.1. ՄԿԾ-ի ուսումնամեթոդական ապահովվածություն

Ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ծրագրային միջոցառումները պետք է կրեն շարունակական բնույթ և միտված լինեն հետևյալին՝ ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման և բարելավման գործընթացում նշված փաստաթղթերի պարբերական փորձաքննության ներկայացում ներքին և արտաքին շահակիցներին՝ միաժամանակ ապահովելով դրանց համապատասխանությունը կրթության բնագավառի իրավանորմատիվային պահանջներին:

Ուսումնամեթոդական ապահովվածության պահանջների բավարարման նպատակով առաջիկայում անհրաժեշտ է՝

- ստեղծել յուրաքանչյուր ՄԿԾ-ի ուսումնամեթոդական փաթեթները,
- նորացնել ուսումնական պլանները՝ ուժեղացնելով դրանցում նախատեսվող ինքնուրույն և խմբային աշխատանքների, գործնական և հետազոտական բաղադրիչները,
- հստակեցնել ՄԿԾ-ների որակի ապահովման համար պրոֆեսորադասախոսական կազմի անհրաժեշտ որակավորումները և կոմպետենցիաները,
- ապահովել յուրաքանչյուր ՄԿԾ-ի գործնական հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ պրակտիկայի բազաները,

- առանձին ՄԿԾ-ների գծով տեղական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ նախատեսել ակտիվ համագործակցության ծրագրեր, իրականացնել ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրեր:

1.2. ՄԿԾ-ների նյութատեխնիկական հագեցվածություն

2011-2015 թթ. ռազմավարական ծրագրում ընդգծվում է, որ համալսարանի կայուն զարգացման ծրագրերն անիրագործելի կլինեն առանց նյութատեխնիկական բազայի շարունակական ընդլայնման: Նախատեսված էր 5 տարիների ընթացքում նյութատեխնիկական հագեցվածության ծավալները ավելացնել տարեկան միջինը 20 տոկոսով, սակայն 2011-2013 թթ. ձեռքբերումների վերլուծությունը ցույց տվեց, որ ցուցանիշը գերազանցվել է: Այս ուղղությամբ ձեռքբերումներն առավել ակնառու են ժամանակակից տեխնոլոգիաների բազայի ընդլայնման առումով: Կրթական ծառայությունների մատուցման բնագավառում նորարարական տեխնոլոգիաներով հագեցվածությունը անխուսափելիորեն դարձել է արդի ժամանակների հրամայականը, որով պայմանավորված՝ յուրաքանչյուր տարի համալսարանը լրացուցիչ միջոցներ է տրամադրում համալսարանի թե՛ նորագույն տեխնոլոգիաներով տեխնիկական վերազինման, թե՛ համապատասխան տեխնոլոգիաների կիրառման նպատակով համապատասխան մասնագետների ներգրավման համար: Ռազմավարական ծրագրի համաձայն՝ համակարգչային դասընթացներ կազմակերպվեցին համալսարանի դասախոսների համար:

Համալսարանում կրթության ժամանակակից ձևերից մեկի՝ հեռավար կրթության ներդրման փորձնական ծրագրին համապատասխան՝ նախատեսվել է համալսարանի նյութատեխնիկական բազան համալրել անհրաժեշտ տեխնիկական նոր միջոցներով:

Առաջիկա տարիներին նախատեսվում է նյութատեխնիկական հագեցվածության ապահովում ըստ ՄԿԾ-ների: Տեխնոլոգիական հագեցվածության պահանջի առումով, որպես ծրագրային միջոցառում, նախատեսվում է՝

- հաշվի առնելով ՄԿԾ-ների առանձնահատկությունները՝ համալսարանի նյութատեխնիկական բազան համալրել ժամանակակից՝ ինտերակտիվ և

հեռավար դասավանդման մեթոդների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով,

- վերազինել համալսարանի կաբինետներն ու լաբորատորիաները ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան:

1.3. ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի անհրաժեշտ մասնագիտական որակների ապահովում

Հյուսիսային համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի գծով արդյունավետ կադրային քաղաքականությունը երկարաժամկետ հատվածում շարունակաբար որակյալ կրթության կազմակերպման համար կարևոր նախապայման է համարվում:

Ծրագրային ժամանակահատվածի համար կադրային քաղաքականության բարելավման ուղղությամբ նախատեսվել էր իրականացնել միջոցառումների համախումբ: 2011-2013 թթ. ընթացքում ՌԾ-ին համապատասխան ՊԴ կազմի վերապատրաստում անցկացվեց հետևյալ ուղղություններով՝ համակարգչային գրագիտություն, օտար լեզվի իմացություն, կրթական բարեփոխումներ: Անցկացվեց համալսարանի հիմնական ՊԴ կազմի ատեստավորում, որը հնարավորություն տվեց՝

- վերագնահատել համալսարանի ՊԴ կազմի ներուժը,
- վերհանել այն կոմպետենցիաների համախումբը, որոնց ուղղությամբ մոտ ապագայում անհրաժեշտ է հետևողական աշխատանք տանել:

Առաջիկայում նախատեսվում է յուրաքանչյուր ՄԿԾ-ի ՊԴ կազմին ներկայացվող պահանջներից ելնելով՝

- իրականացնել կադրերի աշխատանքային ներուժի գնահատում՝ ըստ յուրաքանչյուր ՄԿԾ-ի,
- շարունակական դարձնել մասնագետների վերապատրաստման, որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպումը, ՊԴ կազմի կոմպետենցիաների զարգացումը,

- հետազոտահեն կրթության կազմակերպման նպատակով ակտիվացնել պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական ներուժը, այն հաշվարկով, որ դա նպաստի դասավանդման և ուսումնառության գործընթացների բարելավմանը, հետազոտությունների և կրթական գործընթացի սերտաճմանը,
- որոշ մասնագիտությունների գծով ապահովել հետբուհական կրթություն, ինչը հնարավորություն կստեղծի երիտասարդ դասախոսների աճի համար:

Ելնելով դասախոսների մասնագիտական կոմպետենցիաների կատարելագործման և համալսարանի զարգացման գործընթացների փոխկապակցվածությունից՝ մասնագիտական կոմպետենցիաների այսօրինակ կատարելագործմամբ Հյուսիսային համալսարանում, ըստ առանձին ՄԿԾ-ների, կներդրվի դասախոսական անձնակազմի որակի բարձրացման համակարգ՝ կրթության կազմակերպման նորացվող պահանջների համաձայն, ինչի արդյունքում կձևավորվի անձնային, մանկավարժական, գիտահետազոտական, կազմակերպչական, հաղորդակցական հետևյալ կոմպետենցիաներով պրոֆեսորադասախոսական կազմ՝

- առարկայի խոր իմացությամբ, այդ շրջանակներում գիտության վերջին նվաճումների մասին տեղեկացվածությամբ, առարկայական չափորոշիչների ու ծրագրերի իմացությամբ,
- մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների, գործող օրենսդրական փաստաթղթերի իմացությամբ, ուսուցման գործընթացում ինչպես մարդկային, այնպես էլ նյութական ռեսուրսների ուսումնասիրություն և վերլուծություն անելու, սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու, անհատական և խմբային աշխատանք կազմակերպելու կարողությամբ,
- հետազոտական նախագծերում ընդգրկվելու պատրաստակամությամբ, գիտական աշխատանքներ հրատարակելու, ուսանողների հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններով,
- բանավեճեր, քննարկումներ, ինչպես նաև ուսանողների ակտիվությունը խթանելու այլ կարողություններ ունեցող, տարբեր իրավիճակներում

ինքնադրսևորվելու և ինքնակառավարվելու, ուսումնական գործընթացում հնարավոր պրոբլեմային իրավիճակները հարթելու, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և էթիկայի նորմեր ձևավորելու, ուսումնառողների ներուժը գնահատելու կարողությամբ,

- օտար լեզուների իմացությամբ:

Հյուսիսային համալսարանում անհրաժեշտ է գործարկել աշխատանքի ընդունելու գործընթացի համապատասխան մեխանիզմներ՝ հաշվի առնելով վերոհիշյալը, որոնք կապահովեն աշխատակիցների մասնագիտական պահանջվող պատրաստվածության մակարդակը:

2. Համալսարանի գիտահետազոտական պոտենցիալի զարգացում

Համալսարանի արդյունավետ աշխատանքը և մրցունակության ապահովումը այսօր արդեն հնարավոր չէ պատկերացնել առանց գիտահետազոտական պոտենցիալի զարգացման: Բուհը ոչ միայն պետք է գիտական հետազոտություններ կատարի, այլև տարածի և կիրառի նորարարական նախագծերը կրթական գործընթացում:

Բուհի գիտական պոտենցիալը փուլ առ փուլ բարձրացնելու համար նախատեսվում է՝

- ստեղծել գիտության և նորարարության կենտրոն, որը ամբիոնների հետ միասին կպլանավորի և կիրականացնի արդի պահանջներին համապատասխան հետազոտություններ,
- հետազոտական աշխատանքում ներառել զալցբուրգյան սկզբունքները,
- որոշ մասնագիտությունների գծով ասպիրանտուրա բացել,
- դասախոսներին ներգրավել գիտահետազոտական աշխատանքներում,
- բուհի գիտակրթական ծրագրերում ներգրավել գիտության ոլորտի հայտնի մասնագետներին,
- խորացնել գիտահետազոտական ոլորտում արտաքին կապերը,
- մասնակցել գիտահետազոտական ոլորտում դրամաշնորհային ծրագրերին,
- զարգացնել ուսանողների հետազոտական հմտությունները,
- ներգրավել մագիստրատուրայի ուսանողներին բուհի հետազոտական նախագծերում,

- աշխուժացնել Ուսանողական գիտական ընկերության աշխատանքը:

3. Բուհի արտաքին կապերի զարգացում և միջազգայնացում

Բուհի ռազմավարական ծրագրով նախատեսված է արտաքին կապերի ձևավորում և զարգացում, այդ թվում՝ օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ ակտիվ համագործակցության ծրագրերի իրականացում, բուհի աստիճանական միջազգայնացում:

Այդ ուղղությամբ բուհն արդեն որոշակի քայլեր է կատարել՝ կայուն գործընկերային կապեր հաստատելով Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգի Հյուսիս-Արևմտյան պետական տեխնիկական և Սանկտ Պետերբուրգի կառավարման և էկոնոմիկայի համալսարանների հետ:

2012 թ. Հյուսիսային համալսարանն ընդգրկվել է «Erazmus-Mundus» ուսանողների փոխանակման դրամաշնորհային ծրագրում՝ դառնալով 7 համալսարանների (Լեհաստանի Ադամ Միցկևիչ համալսարան, Շվեդիայի Մալմոյի համալսարան, Իտալիայի Տուրինի համալսարան, Ֆրանսիայի Մոնպելյե 2 համալսարան, Պորտուգալիայի Պորտոյի համալսարան, Իսպանիայի Ռովիրա Վիրգիլիայի համալսարան, Ռումինիայի Բաբեշ-Բոլյայի համալսարան) կոնսորցիումի անդամ և, որպես ասոցիատիվ գործընկեր, ներգրավել ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը: Ծրագրի շրջանակներում ուսանողների փոխանակում է տեղի ունեցել Լեհաստանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի հետ: Նույն ծրագրի շրջանակներում համալսարանի Արտաքին կապերի պատասխանատուն աշխատել է Շվեդիայի, Լեհաստանի և Ռումինիայի համալսարաններում:

2013 թ. վերջին բուհն ընդգրկվել է TEMPUS-ի 2 նախագծերում՝ GOVERN (կառավարման համակարգի կատարելագործման ծրագիր), VERITAS (զալցբուրգյան սկզբունքների ներդնում և կառուցվածքային զարգացում):

Հյուսիսային համալսարանի արտաքին կապերի շարունակական զարգացման համար նախատեսվում է՝

- զարգացնել համալսարանի կապը պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, գործատու

կազմակերպությունների և ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների հետ,

- ապահովել համալսարանի գործընկերությունը միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի հետ:

Հյուսիսային համալսարանի միջազգայնացմանը նպաստելու համար անհրաժեշտ է՝

- ստեղծել միջազգայնացմանն ուղղված նորմատիվային բազա,
- պլանավորել, պարբերաբար վերլուծել և գնահատել բուհի միջազգայնացմանը ուղղված քայլերը,
- ակադեմիական մոբիլության միջազգային ծրագրերում մասնակցելու համար առավել լայնորեն ընգրկել ուսանողներին և դասախոսներին օտար լեզվի ինտենսիվ դասընթացներում,
- զարգացնել գործընկերային կապերն արտասահմանյան բուհերի հետ,
- շարունակել գործընկեր համալսարանների հետ արդյունավետ համագործակցությունը,
- գործնական կապեր հաստատել ՀՀ տարածքում առկա դեսպանատների հետ,
- նպաստել բուհի ուսանողների, ասպիրանտների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամների ընդգրկմանը միջազգային գիտակրթական նախագծերում,
- արտասահմանյան գործընկերներին անաչառ տեղեկատվական նյութեր տրամադրել,
- արտասահմանյան գործընկեր համալսարանների հետ համագործակցության ֆինանսավորման նպատակով կապեր հաստատել միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների հետ,
- կանոնակարգել, կազմակերպել և գնահատել Հյուսիսային համալսարանում սովորող արտասահմանյան ուսանողների հետ գիտակրթական աշխատանքը:

ԳԼՈՒԽ II

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հյուսիսային համալսարանի որակի ապահովման հայեցակարգը ներկայացնում է կրթության որակի ապահովման հիմնարար սկզբունքները, նպատակներն ու խնդիրները, կրթության որակի ապահովմանն ուղղված քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու ընդհանուր ռազմավարությունը: Հայեցակարգը հիմնված է Բոլոնյան գործընթացի սկզբունքների, որակի ապահովման եվրոպական չափանիշների, Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրի և դրա առաջնահերթությունների, նորմատիվային այլ ներքին փաստաթղթերի վրա:

1. Որակի ապահովման համակարգի կայացման ընթացքը Հյուսիսային համալսարանում

Որակի ապահովման ներքին համակարգի ներդրման գործընթացները սկիզբ առան 2010 թ., երբ ստեղծվեց Հյուսիսային համալսարանի որակի ապահովման վարչությունը: Որակի ապահովման ներքին համակարգը վերջնական ձևավորում ստացավ 2012 թ.: Անցած տարիների ընթացքում Որակի ապահովման վարչության գործունեությունն ուղղված է եղել որակի ապահովման համակարգերի վերաբերյալ նյութերի հավաքագրմանը և վերլուծմանը, ներքին շահակիցների իրազեկվածության բարձրացմանը, Հյուսիսային համալսարանում որակի ապահովման ցանցային համակարգի ձևավորմանը, կանոնակարգերի մշակմանը: Որակի ապահովման համակարգի ինստիտուցիոնալ կառույցի ստեղծման համար կարճ ժամանակահատված պահանջվեց, սակայն լիարժեք գործունեություն ծավալելու համար ժամանակ էր հարկավոր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մշակութային փոփոխությունները դանդաղ են ընթանում, երբեմն ընդգրկելով բավականին երկար ժամանակաշրջան, որակի մշակույթի զարգացման համար Հյուսիսային համալսարանում նախատեսվեցին հետևյալ փուլերը՝

- անցումային շրջան,
- որակի մշակույթի ձևավորման շրջան,

- որակի ամբողջական կառավարում:

Անցումային փուլը Հյուսիսային համալսարանում ընդգրկեց 3 տարի: Այդ ընթացքը խիստ արդյունավետ էր, քանի որ այդ սեղմ ժամանակահատվածում որակի ապահովման համակարգը զարգացավ և կատարելագործվեց. որակի ապահովման վարչությունից իր հաստիքային աշխատողներով այն վերաճեց որակի ապահովման ցանցային համակարգի: 2010 թ. հաստատվեց Որակի ապահովման վարչության առաջին կանոնադրությունը, որը վերանայվեց 2011 թ., լրամշակվեց՝ արտացոլելով որակի ապահովման համակարգի ձևավորման գործընթացի ժամանակ առաջացած նոր պահանջները: 2011/2012 ուստարվա ընթացքում ձևավորվեցին որակի ապահովման 3 հանձնաժողովները:

Շահակիցների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով 2011 թ. վերջին ստեղծվեց և հրատարակվեց որակի ապահովման մեթոդական ուղեցույցը, իսկ 2012-2014 թթ. լույս տեսան բազմաթիվ բուկլետներ և մեթոդական ուղենիշներ:

Բուհում աստիճանաբար սկսեց ձևավորվել ինքնաքննադատության մթնոլորտ, վերանայվեցին վաղուց ի վեր հաստատված պատկերացումներն ու մոտեցումները, ինչպես նաև կարգերը: Այսպես, եթե մինչև 2010 թ. բուհն ուներ մոտ 22 կարգ, ապա 2010 թ. որակի վարչության կողմից կարիքների վերհանումից հետո հաստատվեց ևս 18 կարգ, 2011 թ.՝ 8 կարգ, 2012 թ.՝ 6 կարգ: Հին կարգերի շուրջ 30%-ը արդիականացվեց: Եթե սկզբում որակի ապահովումը համարվում էր մեծ մասամբ ղեկավարության և Որակի ապահովման վարչության գործ, այսօր էականորեն ընդլայնվել է գործընթացներում ընդգրկված շահակիցների շրջանակը և աճել հետաքրքրությունը նոր գործընթացների նկատմամբ:

Անցած տարիներին Որակի ապահովման վարչության գործունեությունը ուղղված է եղել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ներքին շահակիցների իրազեկվածության բարձրացմանը, Հյուսիսային համալսարանում որակի ապահովման կառույցի ձևավորմանը, կանոնակարգի և քաղաքականության մշակմանը, որակի ապահովման 3 հանձնաժողովների (ուսումնամեթոդական, տեխնիկական և ուսանողական) միջոցով ցանցային կառուցվածքի ստեղծմանը:

Բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով Որակի ապահովման վարչությունը համադասել է Հյուսիսային համալսարանի 2011/2012 ուստարվա ինստիտուցիոնալ ինքնավերլուծության կատարումը:

Այսպիսով, անցումային շրջանում որակի ապահովման քաղաքականությունը եղել է բավական արդյունավետ, մշակվել են բուհի առաջիկա տարիների գործողությունների ծրագիրն ու հաշվետվողականության ծրագիրը, կանոնակարգվել է բուհի փաստաթղթային բազան, բարձրացվել է ներքին շահակիցների իրազեկվածությունը, կատարվել է բուհի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն, կատարելագործվել է ուսանողների գնահատման համակարգը, հիմքեր են ձևավորվել ուսանողակենտրոն համակարգին անցնելու համար, վերապատրաստվել է հիմնական պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմը, հիմքեր են ստեղծվել այլ բուհերի հետ փորձի փոխանակման և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ձևավորման համար:

Այժմ բուհը թևակոխել է երկրորդ՝ որակի մշակույթի ձևավորման շրջան:

2. Որակի ապահովման հիմնական հասկացությունները

Կրթության որակը բուհի կրթական գործունեության համապատասխանությունն է բուհի առաքելությանը, իր առջև դրված ռազմավարական նպատակներին, մասնագիտությունների կրթական ծրագրերի վերջնարդյունքներին, ուսանողների, հասարակության սոցիալ-տնտեսական և մշակութային պահանջներին: Կրթության որակը ներառում է տնտեսական, սոցիալական, ճանաչողական, մշակութային, պատմական տեսանկյուններ:

Կրթության որակի ապահովումը նշանակում է, որ բուհը հնարավորություն է ընձեռում ուսանողին ուսումնառության ընթացքում ձեռք բերելու այնպիսի կոմպետենցիաներ՝ գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևով, որոնք համապատասխանում են թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկայի պահանջներին, անձի և հասարակության տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային ձգտումներին: Որակի ապահովումն ունի երկու չափում՝ ներքին և արտաքին:

Որակի արտաքին ապահովումը կրթության որակի համապատասխանությունն է ժամանակակից աշխարհի մարտահրավերներին, եվրոպական կրթական տարածքի

պահանջներին, ինչպես նաև կրթության ոլորտում Հայաստանի քաղաքականությանը, ՀՀ որակավորումների ազգային շրջանակին, ՀՀ որակավորումների սեկտորալ շրջանակին:

Որակի ներքին ապահովումը կրթության որակի համապատասխանությունն է բուհի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին, մասնագիտական կրթական ծրագրերի պահանջներին:

Որակի մշակույթի ձևավորումը բուհում այնպիսի աշխատառճի որդեգրումն է, որն ընդհանրապես կբացառի ոչ որակյալ աշխատանքը: Այն նաև ենթադրում է բուհի գործունեության SWOT վերլուծության վրա հիմնված ռազմավարական մտածելակերպի զարգացում, ներբուհական ստորաբաժանումների բարձր պատասխանատվություն, ինքնակառավարում և ինքնագնահատում, բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ (ներառյալ անձնակազմի վերապատրաստումը):

Որակի ամբողջական կառավարումը (Total Quality Management) ուղղված է կրթության որակի բարձրացման միջոցով բուհի ռազմավարական ծրագրի իրագործմանը: Ընդ որում, «ամբողջական» բառը շեշտում է, որ այդ գործընթացի մեջ ընդգրկված պետք է լինեն բոլոր ներքին շահակիցները:

Որակի ամբողջական կառավարման նպատակն է՝ շահակիցների պահանջների բավարարումը, բուհի նյութական վիճակի բարելավումը, աշխատակիցների բավարարվածության ապահովումը աշխատանքով: Որակի ամբողջական կառավարումը ներառում է երկու գործընթաց՝ որակի վերահսկում (Quality Assurance), որակի բարելավում (Quality Improvements):

3. Որակի ապահովման հայեցակարգի հիմնական նպատակը

Ուրվագծել որակի ապահովման ներբուհական համակարգի հայեցակարգային-մեթոդաբանական այն հիմքերը, որոնք կնպաստեն որակի մշակույթի ձևավորմանը, որակի ամբողջական կառավարման համակարգի ներդրմանը, բուհի ռազմավարական առաջնահերթությունների իրագործման նկատմամբ վերահսկելիության, գնահատման և բարելավման մեխանիզմների ապահովմանը, մասնագիտական կրթության որակի բարձրացմանը:

4. Որակի ապահովման հայեցակարգի հիմնական խնդիրները

- Որակի ապահովման ամբողջական համակարգին անցնելու համար նախադրյալների ստեղծում,
- բուհի առաքելության և ռազմավարական նպատակների իրագործման արդյունավետ վերահսկողություն, ծավալվող գործընթացների անընդհատ մշտադիտարկում, գնահատման մեխանիզմների և գործիքակազմի ստեղծում,
- շուկայամետ ՄԿԾ-ների ստեղծման, դրանց համընթեռնելիության և նմանատիպ այլ համեմատելի ծրագրերի հետ համահունչության, ուսանողների շարժունության ապահովման վերահսկման և գնահատման արդյունավետ մեխանիզմների ձևավորում,
- գիտահետազոտական և նորարարական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման համար արդյունավետ մեխանիզմների ձևավորում,
- բուհի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ծրագրերի և գործընթացների մշտադիտարկման և գնահատման գործիքների ստեղծում,
- մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում:

5. Որակի ապահովման հիմնական սկզբունքները

- Համակարգված մոտեցում որակի ապահովման գործընթացների նկատմամբ,
- որակի ապահովման գործընթացների շուրջ ժողովրդավարական և բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում,
- որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների թափանցիկություն,
- բոլոր մակարդակներում հաշվետվողականություն,
- որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների անընդհատություն,
- բուհի բոլոր գործընթացներում որակի ապահովման շրջափուլի ինտեգրում,
- ծրագրերի որոշակիություն, չափելիություն, հասանելիություն, իրագործելիություն, ժամանակի մեջ հստակ կանխորոշվածություն:

6. **Որակի ապահովման հայեցակարգի կիրարկման միջոցները**

- ***Նորմատիվային՝*** *համապատասխան կարգերի և ընթացակարգերի ստեղծում կամ բարելավում,*

- ***կազմակերպչական՝*** *հստակ ղեկավարվող ցանցային կառուցվածքի ստեղծում, որը կնպաստի ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների իրագործմանը, գնահատմանը, անհրաժեշտության դեպքում՝ վերանայմանը և բարելավմանը,*

- ***իրազեկման-կրթական՝*** *ամբողջ ընթացքում իրազեկության բարձրացման միջոցառումների անցկացում, վերապատրաստման դասընթացների կազմակերպում,*

- ***տեղեկատվական-քարոզչական՝*** *ամբողջ ընթացքում թափանցիկության ապահովում, տեղեկատվության տրամադրում բոլոր շահակիցներին,*

- ***կադրային՝*** *որակի ապահովման գործընթացների շուրջ կադրային ռեսուրսի համախմբում:*

7. **Որակի ապահովման հայեցակարգի իրականացման ռազմավարությունը**

- Որակի ապահովման շրջափուլի համաձայն[1] պարբերաբար բարելավել որակի ապահովման ներքին համակարգը,
- նպատակաուղղված աշխատանք տանել շահակիցների տեղեկատվությունն ու ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ապահովելու համար, հստակեցնել և հրապարակել նպատակները: Նպատակները բոլոր աշխատողների համար պետք է լինեն հասանելի և պարզ: Դա կհանգեցնի պատասխանատվության բարձրացմանը, որակի ապահովման նկատմամբ գիտակցված մոտեցման ձևավորմանը: Աշխատանքի վերստուգումը պետք է ծառայի ոչ թե թերությունների վերհանմանը (քանի որ թերություններով աշխատելն ի սկզբանե պետք է բացառվի), այլ գործընթացների կատարելագործմանը, ծախսերի կրճատմանը,

[1] «Որակի ապահովման շրջափուլ» (մասնագիտական գրականության մեջ հանդիպում է Դեմինգի շրջափուլ անվամբ կամ PDCA շրջափուլ, հայերեն՝ ՊԻՍԲ) ասելով նկատի ունենք բոլոր ծրագրերի պլանավորումը, անշեղ իրագործումը, ստուգումը/ գնահատումը և բարելավումը:

- ձևավորել այնպիսի գիտակցություն, որ որակի ապահովման գործընթացը շարունակական է: Կարգախոսը պետք է լինի՝ որակի անվերջ բարելավում,
- բուհում ընթացող բոլոր գործընթացները (կադրային քաղաքականություն, ռեսուրսային բազայի հարստացում, ֆինանսական միջոցների վերաբաշխում և այլն) գնահատել որակի ապահովման տեսանկյունից,

1. ստեղծել սերտ կապ ստորաբաժանումների միջև: Դա պետք է լինի ոչ թե մրցակցություն, այլ փոխօգնություն,

- խուսափել դատարկ կարգախոսներից,
- ստեղծել բարենպաստ պայմաններ որակի արտաքին գնահատման համար:

Այսպիսով, որակի ապահովման մեր հարացույցն է՝ բուհի բոլոր մակարդակներում և ոլորտներում անցում արտաքին վերահսկողությունից ինքնավերահսկողության:

8. Որակի ապահովման չափանիշները

- Կրթական գործընթացի համապատասխանություն բուհի առաքելությանը, ռազմավարական ծրագրին և այլ նորմատիվային փաստաթղթերին: Օրինականության պահպանումը, մշակված իրավական փաստաթղթերի նկատմամբ հարգանքի սերմանումը հայ հասարակության համար լուրջ մշակութային խնդիր է: Այս չափանիշը կարելի է ապահովել ոչ անմիջապես, այլ հստակ մշակած մեխանիզմների և տեխնոլոգիաների միջոցով, ուստի այս պայմաններում խիստ կարևորվում է կառավարման արդյունավետությունը:
- Բուհի արդյունավետ կառավարում, որը ենթադրում է դրված ֆինանսական ռեսուրսների հաշվառմամբ նպատակներին հասնելու համար ճիշտ պլանավորում, պլանավորվածի անշեղ իրագործում, իրագործման ընթացքում անընդհատ գնահատում և թերությունների դեպքում գործընթացի բարելավում: Բուհի արդյունավետ կառավարման համար կարևորվում է մարդկային ներուժի և նյութական ռեսուրսների համապատասխանությունը դրված նպատակներին: Արդյունավետ կառավարումն անհնար է առանց հավաստի տվյալների հավաքագրման, վերլուծման և գնահատման հստակ մեխանիզմների առկայության:

- Բուհի կառավարման էթիկայի պահպանում, ինչը մեզ համար նշանակում է որոշումների կայացմանը ներքին շահակիցների ներգրավում, բուհի նպատակների և խնդիրների մեջ նրանց կարիքների հաշվառում, գնահատման և մշտադիտարկման մեխանիզմների միջոցով անընդհատ բարելավման ապահովում, վերից վար հաշվետվողականություն:
- Մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բովանդակության և ձևի համապատասխանություն բուհի առաքելությանը, որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ), շուկայի պահանջներին, հասարակության հոգևոր և մշակութային կարիքներին (ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը ՄԿԾ վերջնարդյունքներին, որակավորումների ազգային շրջանակին և որակավորումների սեկտորալ շրջանակին համապատասխան բակալավրի, մագիստրոսի, ասպիրանտի կրթական արդյունքների ապահովում և այլն):
- Մարդկային, նյութատեխնիկական, մեթոդական ռեսուրսների համապատասխանությունը ՄԿԾ-ի վերջնարդյունքներին:
- Դասավանդման, ուսումնառության և գնահատման համապատասխանություն ուսումնառության արդյունքներին, ակադեմիական ազնվության ապահովում:
- Գիտական հետազոտությունների պատշաճ որակի և դրանց արդյունքների՝ կրթության ոլորտ ներմուծման ապահովում :
- Բուհի արտաքին կապերի զարգացում, արտաքին գործընկերների թվի ավելացում, նրանց հետ արդյունավետ համագործակցության ապահովում:
- Բուհի կողմից ուսանողների սոցիալական աջակցություն:

9. Որակի ապահովման հայեցակարգի իրականացման մեխանիզմները

Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների իրագործման և արդյունավետության գնահատման համար հստակ ցուցիչների և գործիքակազմի մշակում և ներդրում:

10. Որակի ապահովման հայեցակարգի իրականացման առաջնահերթ ոլորտները

- Մասնագիտական կրթական ծրագիր,

- բուհի գիտահետազոտական պոտենցիալ,
- արտաքին կապեր և միջազգայնացում:

I. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ռազմավարական ծրագրի առաջնահերթություն 1՝

Մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) մշակում, իրականացում և մշտադիտարկում:

Գործընթաց 1՝

ՄԿԾ-ների ստեղծման համար մասնագիտական խմբերի ձևավորում: Յուրաքանչյուր խմբում մեկ հոգի պետք է լինի որակի ապահովման որևէ հանձնաժողովի անդամ: Շուկայամետ ՄԿԾ-ների մշակում:

Ընթացակարգեր

1.1. Շուկայի պահանջներին համապատասխան դուբլինյան նկարագրիչների հաշվառմամբ նախագծել ակնկալվող ուսումնառության արդյունքները՝ նշելով, թե ՄԿԾ-ի ավարտին ի՞նչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել շրջանավարտը:

- ՄԿԾ մշակում,
- ՈԱՇ-ին համապատասխանելիության մեթոդական ուղեցույցի ստեղծում,
- ՄԿԾ այլ նմանատիպ ծրագրերի հետ համեմատելիության ապահովման համար մեթոդական ուղեցույցի ստեղծում,
- ՄԿԾ ակնկալվող վերջնարդյունքներին համապատասխան առարկայացանկի հստակեցում և ուսումնական պլանի վերանայում,
- Ուսանողների պրակտիկայի ծրագրի վերանայում, դրա համապատասխանեցում ՄԿԾ ելքային արդյունքներին,

- Ծրագրային ինքնավերլուծություն:

1.2. ՄԿԾ վերջնարդյունքներին համապատասխան առարկայական ծրագրերի և դրանց կրթական ելքային արդյունքների վերանայում՝

- առարկայական ծրագրերի վերանայում ՄԿԾ ելքային արդյունքներին համապատասխան,
- առարկայական ծրագրերում ըստ ելքային արդյունքների դասավանդման և ուսումնառության մեթոդների և գնահատման մեխանիզմների հստակ ներկայացում:

1.3. ՄԿԾ-ի և դասավանդվող առարկաների ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ներդրում՝

- ՊԴ կազմի վերապատրաստում և խորհրդատվական օգնության ապահովում,
- դասավանդման և ուսումնառության մեթոդների մեթոդական բազայի ստեղծում:

1.4. ՄԿԾ-ի և դասավանդվող առարկաների ուսումնառության արդյունքներին համապատասխան ուսանողների գնահատման համակարգի ստեղծում՝

- ՊԴ կազմի վերապատրաստում և խորհրդատվական օգնության ապահովում,
- ուսանողների գնահատման գործընթացի ազատականացում:

Գործընթաց 1-ի որակի գնահատման գործիքները

1.1. Շուկայի պահանջներին և դուբլինյան նկարագրիչներին համապատասխան ՄԿԾ-ների համար՝

1.1.1. արտաքին փորձագետի կարծիքի ապահովում,

1.1.2. դասախոսների հարցումների արդյունքների ուսումնասիրություն,

1.1.3. ավարտական ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հանձնաժողովի նախագահի հաշվետվության վերլուծություն,

1.1.4. շրջանավարտների հարցումների արդյունքների վերլուծություն,

1.1.5. գործատուների կարծիքների վերլուծություն:

1.2. Առարկայական ելքային արդյունքների ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներին համապատասխանության համար մշակել և կիրառել՝

1.2.1. դասախոսների կողմից միմյանց առարկայական ծրագրերի փոխգնահատման ձևաչափ,

1.2.2. ըստ ՄԿԾ ելքային արդյունքների՝ ուսանողների մնացորդային գիտելիքների և կարողությունների ստուգման ձևաչափ:

1.3. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներին համապատասխանության համար մշակել և կիրառել՝

1.3.1.պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման մշտադիտարկման ձևաչափ,

1.3.2. պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման գործընթացի գնահատման հարցաշար,

1.3.3. դասավանդման և ուսումնառության մեթոդների՝ դասախոսների

փոխգնահատման ձևաչափ,

1.3.4. ուսանողների կողմից դասավանդման մեթոդների գնահատման հարցաթերթիկ,

1.3.5. ուսանողների ֆոկուս-խմբի հարցաշար,

1.3.6. որակի ապահովման ուսումնամեթոդական հանձնաժողովի վերլուծություններ:

1.4. ՄԿԾ-ի և դասավանդվող առարկաների ուսումնառության արդյունքներին համապատասխան ուսանողների գնահատման համար կիրառել՝

1.4.1. դասախոսների կողմից ուսանողների գնահատման մեթոդների՝ ուսանողների հարցման և ֆոկուս-խմբերի հարցաշարեր,

1.4.2. որակի ապահովման ուսումնամեթոդական հանձնաժողովի վերլուծություններ:

1.5. ՄԿԾ-ների ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բազայի ապահովման համար `

1.5.1. ներքին և արտաքին շահակիցների ՄԿԾ-ով բավարարվածության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն,

1.5.2.արտաքին փորձագետի կարծիք,

1.5.3.ուսանողների հարցման կամ ֆոկուս–խմբի հարցաշար,

1.5.4.դասախոսների հարցման կամ ֆոկուս–խմբի հարցաշար:

1.6. ՄԿԾ-ների պահանջների համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի անհրաժեշտ մասնագիտական որակների ապահովման համար՝

1.6.1. իրականացնել կադրերի աշխատանքային ներուժի գնահատում՝ ըստ յուրաքանչյուր ՄԿԾ-ի,

1.6.2. Հյուսիսային համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորման ձևաչափ,

1.6.3. ՊԴ կազմի ատեստավորման արդյունքների վերլուծություն,

1.6.4. վերապատրաստման մշտադիտարկում և արդյունավետության գնահատման հարցաշարեր և ձևաչափեր,

1.6.5. դասավանդման և ուսումնառության ընթացքում գիտական հետազոտությունների ներդրման գնահատման ձևաչափ:

II. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏ ԲՈՒՀԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ

Ռազմավարական ծրագրի առաջնահերթություն 2՝

Համալսարանի գիտահետազոտական պոտենցիալի զարգացում

Գործընթաց 2՝

Բուհում գիտական հետազոտությունների կատարում, տարածում և նորարարական նախագծերի կրթական գործընթացում կիրառում: Հետազոտահեն կրթական համակարգի ձևավորում:

Ընթացակարգեր

2.1. Ստեղծել գիտության և նորարարության կենտրոն, որը ամբիոնների հետ միասին կպլանավորի և կիրականացնի արդի պահանջներին համապատասխան հետազոտություններ, մասնավորապես՝

- գիտության և նորարարության կենտրոնի բացում և նորմատիվային փաստաթղթերի նախապատրաստում,
- հետազոտությունների գերակա ուղղությունների որոշում և Գիտխորհրդի կողմից հաստատում,
- հետազոտական խմբերի ձևավորում,
- հետազոտական խմբերի պլանների մշակում և հաստատում:

2.2. Դասախոսների մեծ մասին ներգրավել գիտահետազոտական աշխատանքներում, մասնավորապես՝

- դասախոսների գիտահետազոտական աշխատանքների պլանների կազմում,
- դասախոսների համար պարբերաբար գիտական ընթերցումների, խորհրդաժողովների կազմակերպում,
- գիտահետազոտական աշխատանքների համար մրցույթների անցկացում,
- լավագույն հետազոտական աշխատանքների հրատարակում:

2.3. Ներգրավել հետազոտությունների գերակա ոլորտների հայտնի մասնագետներին բուհի գիտակրթական ծրագրերում, մասնավորապես՝

- բուհում կազմակերպվող խորհրդաժողովներին ոլորտի հայտնի մասնագետների մասնակցություն,
- բուհի հետազոտությունների գերակա ուղղություններով փորձագետների դասախոսությունների կազմակերպում, ուսանողների ներգրավմամբ կլոր սեղանների անցկացում:

2.4. Որոշ մասնագիտությունների գծով ասպիրանտուրա բացել՝

- ՀՀ ԿԳ նախարարությունից ասպիրանտուրայի բացման թույլտվության ստացում,
- ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպում,
- գիտխորհրդի կողմից գիտական թեմաների հաստատում:

2.5. Խորացնել արտաքին կապերը գիտահետազոտական ոլորտում՝

- Ռուսաստանի Դաշնության բուհերի հետ կնքված պայմանագրերով և համաձայնագրերով նախատեսված կապի շարունակական իրագործում,
- արտասահմանյան բուհերի հետ գործընկերային հարաբերությունների ստեղծում,
- գիտահետազոտական ոլորտում դրամաշնորհային ծրագրերի հայթայթում:

2.6. Զարգացնել ուսանողների հետազոտական հմտությունները՝

- դասավանդվող առարկաների շրջանակում հետազոտական բաղադրիչի ներդրում,
- հետազոտությունների խրախուսման համար գնահատման մեխանիզմների կիրառում,
- հետազոտությունների մեջ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ներգրավում,
- ուսանողական գիտական ընկերության աշխատանքի աշխուժացում:

Գործընթաց 2-ի գնահատման գործիքները

Բուհում իրականացվող հետազոտությունների որակի գնահատման համար մշակվել են հետևյալ գործիքները՝

2.1. Գիտության և նորարարության կենտրոնի աշխատանքի գնահատման համար՝

2.1.1. գործունեությունը կարգավորող նորմատիվային փաստաթղթերի փորձաքննություն,

2.1.2. պլանավորված հետազոտությունների իրականացման մշտադիտարկման ձևաչափ,

2.1.3. գիտության և նորարարության կենտրոնի հաշվետվությունների գնահատման ձևաչափ:

2.2. Դասախոսների՝ գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկվածությունը գնահատելու համար՝

2.2.1. Հյուսիսային համալսարանի դասախոսի հաշվետվության ձևաչափ,

2.2.2. դասախոսների գիտահետազոտական աշխատանքների պլանների կատարողականի գնահատում,

2.2.3. ոլորտի մասնագետների կողմից հրատարակվող հետազոտական աշխատանքների գրախոսում:

2.3. Հետազոտությունների գերակա ոլորտներում հայտնի մասնագետների ներգրավման արդյունավետությունը գնահատելու համար՝

2.3.1. դասախոսների և ուսանողների հարցման և գնահատման թերթիկներ:

2.4. Ասպիրանտուրայի արդյունավետությունը գնահատելու համար՝

2.4.1. ասպիրանտուրա ընդունված հետազոտողների թվաքանակի շարժընթացի ձևաչափ,

2.4.2. հետազոտողների հարցման կամ ֆոկուս-խմբի հարցաշար:

2.5. Գիտահետազոտական ոլորտում արտաքին կապերի հաստատման արդյունավետությունը գնահատելու համար՝

2.5.1. կնքված պայմանագրերի և համաձայնագրերի իրագործման մշտադիտարկման ձևաչափ,

2.5.2. արտաքին գործընկերների թվաքանակի շարժընթացի ձևաչափ,

2.5.3. դրամաշնորհային ծրագրերի իրագործման մշտադիտարկման ձևաչափ:

2.6. Ուսանողների հետազոտական հմտությունների զարգացման հաջողությունների գնահատման համար՝

2.6.1. առարկայական ծրագրերի և ըստ դրանց ելքային արդյունքների հետազոտական բաղադրիչի գնահատման մեխանիզմների փորձաքննություն,

2.6.2. հետազոտությունների մեջ ընդգրկված բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների թվաքանակի շարժընթացի թերթիկ,

2.6.3. ուսանողական գիտական ընկերության աշխատանքային պլանի կատարողականի գնահատում:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏ

ԲՈՒՀԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

Ռազմավարական ծրագրի առաջնահերթություն 3՝

Բուհի արտաքին կապերի զարգացում և միջազգայնացում

Գործընթաց 3՝

Զարգացնել բուհի արտաքին կապերը: Ապահովել բուհի տեղեկատվությունը բոլոր գործընթացների վերաբերյալ: Բուհի միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն վարել:

Ընթացակարգեր

Բուհի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման համար անհրաժեշտ է՝

ապահովել և զարգացնել համալսարանի կապը պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, գործատու կազմակերպությունների և ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝

- գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի կնքում,
- համալսարանում կազմակերպվող միջոցառումներին գործընկեր կազմակերպություններից մասնակիցների ներգրավում,

• բուհի ուսանողների և աշխատակիցների մասնակցություն հանրապետական և քաղաքային միջոցառումներին:

3.1. Ապահովել համալսարանի գործընկերությունը միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, գիտական հիմնարկների, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի հետ: Մասնավորապես՝

• գործընկեր ուսումնական և գիտական հաստատությունների հետ համագործակցության պայմանագրերի կնքում,
• համալսարանում կազմակերպվող միջոցառումներին գործընկեր ուսումնական և գիտական հաստատություններից մասնակիցների ներգրավում:

3.2. Ստեղծել միջազգայնացմանն ուղղված նորմատիվային բազա, մասնավորապես՝
• վերանայել արտաքին կապերի ստորաբաժանման կարգը,
• կնքել համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր հանրապետության և արտասահմանյան բուհերի հետ,
• այլ բուհերի հետ համագործակցելու ընթացակարգեր մշակել:

3.3. Պլանավորել, պարբերաբար վերլուծել և գնահատել բուհի միջազգայնացմանն ուղղված քայլերը, մասնավորապես՝
• մշակել արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագիր, կազմել աշխատանքային պլան:

3.4. Ակադեմիական մոբիլության միջազգային ծրագրերին մասնակցելու համար առավել լայնորեն ընդգրկել ուսանողներին և դասախոսներին օտար լեզվի ինտենսիվ դասընթացներում, մասնավորապես՝
• օտար լեզվի ինտենսիվ դասընթացների ծրագրի մշակում և անցկացում:

3.5. Զարգացել գործընկերային կապերը արտասահմանյան բուհերի հետ, մասնավորապես՝

- արտասահմանյան բուհերի հետ համագործակցության պայմանագրերի կնքում՝
  - ուսանողների փոխանակման,
  - դասախոսների փոխանակման,
  - գիտակրթական նախագծերի իրագործման:

3.6. Շարունակել գործընկեր համալսարանների հետ արդյունավետ համագործակցությունը, մասնավորապես՝

- կնքված պայմանագրերի արդյունավետության մշտադիտարկում:

3.7. Գործնական կապեր հաստատել ՀՀ տարածքում առկա դեսպանատների հետ, մասնավորապես՝

- օտար լեզվի վերապատրաստման դասընթացներին դեսպանատների աշխատակիցների մասնակցության ապահովում,
- դեսպանատների կազմակերպվող ուսանողների և դասախոսների վերապատրաստման դասընթացներին մասնակցության ապահովում,
- բուհում ուսումնասիրվող լեզվի երկրի օրերի կազմակերպում:

3.8. Նպաստել բուհի ուսանողների, ասպիրանտների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամների ընդգրկմանը միջազգային գիտակրթական դրամաշնորհային նախագծերում, մասնավորապես՝

- մասնակցել հայտարարվող դրամաշնորհային մրցույթներին,
- արտասահմանյան գործընկեր համալսարանների հետ համագործակցության ֆինանսավորման նպատակով կապեր հաստատել միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների հետ,
- տեղյակ պահել բուհի աշխատակիցներին և ուսանողությանը անհատական դրամաշնորհային ծրագրերի մասին,
- խորհրդատվական օգնություն ցույց տալ դրամաշնորհային ծրագրերում ընդգրկվողներին:

3.9. Արտասահմանյան գործընկերների համար տեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում, մասնավորապես՝

- համալսարանի կայքում օտար լեզվով նյութերի անընդհատ թարմացում, տեղեկատվական բուկլետների պատրաստում, հասցեական տեղեկատվության տրամադրում:

3.10. Կանոնակարգել, կազմակերպել և գնահատել Հյուսիսային համալսարանում սովորող արտասահմանյան ուսանողների հետ գիտակրթական աշխատանքը, մասնավորապես՝

- արտասահմանյան ուսանողների ընդունելության կարգի և ընթացակարգերի մշակում,
- արտասահմանյան ուսանողների համար մշակութային երկխոսության կամրջի ստեղծում,
- արտասահմանյան ուսանողների գոհունակության վերաբերյալ հարցման անցկացում,
- արտասահմանյան ուսանողների կողմից տրամադրվող ծառայությունների գնահատում:

Գործընթաց 3-ի գնահատման գործիքները

3.1. Պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, գործատու կազմակերպությունների և ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների հետ համալսարանի կապի արդյունավետության գնահատման համար՝

3.1.1. գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից համագործակցության արդյունավետության գնահատման ձևաչափ:

3.2. Միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, գիտական հիմնարկների, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի հետ համագործակցության արդյունավետության գնահատման համար՝

3.2.1. գործընկեր ուսումնական և գիտական հաստատությունների ներկայացուցիչների կողմից համագործակցության արդյունավետության գնահատման ձևաչափ:

3.3. Միջազգայնացմանն ուղղված նորմատիվային բազայի որակի գնահատման համար՝

3.3.1. բուհի արտաքին կապերի հարստացմանն ու միջազգայնացմանն ուղղված աշխատանքային պլանի կատարողականի գնահատման ձևաչափ,

3.3.2. Հյուսիսային համալսարանում սովորող արտասահմանյան ուսանողների հետ տարվող աշխատանքի արդյունավետության գնահատման հարցաշար,

3.3.3. փոխանակման և շարժունության ծրագրերի (ա.թ.՝ դրամաշնորհով) մասնակիցների թվաքանակի շարժընթացի վերլուծություն,

3.3.4. գործընկեր համալսարանների հետ համագործակցության արդյունավետության գնահատման ձևաչափ:

3.4. Միջազգային գիտակրթական դրամաշնորհային նախագծերում բուհի ուսանողների, ասպիրանտների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ընդգրկվածության արդյունավետության համար՝

3.4.1. հայտարարվող դրամաշնորհային մրցույթներին մասնակիցների թվաքանակի շարժընթացի վերլուծություն, ա.թ.՝ դրամաշնորհը շահածների,

3.4.2. դրամաշնորհային ծրագրերում ընդգրկվողների հարցում՝ արտաքին կապերի ստորաբաժանման աշխատանքի արդյունավետության վերաբերյալ:

3.5. Հյուսիսային համալսարանում սովորող արտասահմանյան ուսանողների հետ գիտակրթական աշխատանքի արդյունավետության գնահատման համար՝

3.5.1. Հյուսիսային համալսարանում սովորող արտասահմանյան ուսանողների հետ տարվող աշխատանքի արդյունավետության գնահատման հարցաշար:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՔԱՐՏԵԶ




Հյուսիսային համալսարանի ՌԾ առաջնահերթություններ
Որակի ապահովման հայեցակարգ
Գործընթաց 2
Ընթացակարգեր
Որակի ապահովման գնահատման գործիքներ
2.1. Ստեղծել գիտության և նորարարության կենտրոն, որը ամբիոնների հետ միասին կպլանավորի և կիրականացնի արդի պահանջներին համապատասխան հետազոտություններ
Գործիքներ 2.1.1, 2.1.2…
2.2. Դասախոսների մեծ մասին ներգրավել գիտահետազոտական աշխատանքներում
Գործիքներ 2.2.1,2.2.2,2.2.3…
2. Համալսարանի գիտահետազոտական ներուժի զարգացում
2.3. Ներգրավել հետազոտությունների գերակա ոլորտների հայտնի մասնագետներին բուհի գիտակրթական ծրագրերում
Գործիքներ 2.3.1, 2.3.2, 2.3.3…
2.4. Ասպիրանտուրայի զարգացում
Գործիքներ 2.4.1, 2.4.2, 2.4.3, 2.4.4…
2.5. Խորացնել արտաքին կապերը գիտահետազոտական ոլորտում
Գործիքներ 2.5.1, 2.5.2, 2.5.3, 2.5.4…
2.6. Զարգացնել ուսանողների հետազոտական հմտությունները
Գործիքներ 2.6.1, 2.6.2, 2.6.3, 2.6.4…
Որակի ապահովման ձեռնարկ


Հյուսիսային համալսարանի ՌԾ առաջնահերթություններ
Որակի ապահովման հայեցակարգ
Գործընթաց 3
Ընթացակարգեր
Որակի ապահովման գնահատման գործիքներ
3.1. Ապահովել և զարգացնել բուհի կապը պետական իշխանության մարմինների, ՏԻՄ, գործատու կազմակերպությունների և ձեռնարկությունների, ՀԿ-ների հետ
Գործիքներ 3.1.1, 3.1.2…
3.2. Ապահովել կապերը միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, գիտական հիմնարկների, ՀՀ բուհերի հետ
Գործիքներ 3.2.1,3.2.2,3.2.3...
3.3. Ստեղծել միջազգայնացմանն ուղղված նորմատիվային բազա
Գործիքներ 3.3.1, 3.3.2, 3.3.3…
3.4. Պլանավորել բուհի միջազգայնացմանն ուղղված քայլերը
Գործիքներ 3.4.1,3.4.2,3.4.3…
3.5 Մասնակցել ակադեմիական մոբիլության միջազգային ծրագրերին
Գործիքներ 3.5.1,3.5.2,3.5.3,3.5.4…
3.6. Զարգացել գործընկերային կապերը արտասահմանյան բուհերի հետ
Գործիքներ 3.6.1, 3.6.2, 3.6.3, 3.6.4…
3.7. Շարունակել գործընկեր համալսարանների հետ արդյունավետ համագործակցությունը
Գործիքներ 3.7.1, 3.7.2, 3.7.3…
3.8. Գործնական կապեր հաստատել ՀՀ տարածքում առկա դեսպանատների հետ
Գործիքներ 3.8.1, 3.8.2, 3.8.3…
3.9. Նպաստել ուսանողների, ասպիրանտների, ՊԴ և վարչական անձնակազմի անդամների ընդգրկմանը միջազգային գիտակրթական դրամաշնորհային նախագծերում
Գործիքներ 3.9.1,3.9.2,3.9.3, 3.9.4…
3.10. Արտասահմանյան գործընկերների համար տեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում
Գործիքներ 3.10.1, 3.10.2, 3.10.3…
3.11. Կանոնակարգել և կազմակերպել արտասահմանյան ուսանողների հետ գիտակրթական աշխատանքը
Գործիքներ 3.11.1, 3.11.2, 3.11.3…
3. Բուհի արտաքին կապերի զարգացում և միջազգայնացում
Որակի ապահովման ձեռնարկ

ԳԼՈՒԽ III

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Որակի ապահովման վարչությունը (այսուհետև՝ Վարչություն) Հյուսիսային համալսարանի (այսուհետ՝ Համալսարանի) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, ներպետական և միջազգային այլ նորմատիվ իրավական ակտերի (այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն) պահանջներին համապատասխան՝ սույն կանոնադրության, համալսարանի կանոնադրության և համալսարանի ներքին այլ նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:

1.2 Վարչությունը ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի ներքին նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների և արտահամալսարանական (ներառյալ արտասահմանյան) տարբեր կազմակերպությունների հետ:

1.3 Վարչության գործունեությունը ֆինանսավորվում է Համալսարանի միջոցներից և այլ աղբյուրներից (ՀՀ օրենսդրությամբ չարգելված):

1.4 Սույն կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ, ինչպես նաև Վարչության կարգավիճակի փոփոխություն (վերակազմավորում, լուծարում), կարող է իրականացնել Համալսարանի գիտխորհուրդը՝ ռեկտորի կամ նրա կողմից լիազորված որակի ապահովման գործընթացը համակարգող պրոռեկտորի նախաձեռնությամբ և Վարչության պետի առաջարկով:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վարչության առաքելությունն է՝ աջակցել Համալսարանում որակի ապահովման մշակույթի ձևավորմանը, որակի ամբողջական կառավարման համակարգի ներդրմանը, բուհի ռազմավարական առաջնահերթությունների

իրագործման նկատմամբ վերահսկելիության, գնահատման և բարելավման մեխանիզմների ապահովմանը, նպաստել մասնագիտական կրթության որակի բարձրացմանը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3.1. Նպաստել Հյուսիսային համալսարանի առաքելության և ռազմավարական ծրագրի իրագործմանը, բուհի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

3.2. Համալսարանում որակի ապահովման մշակույթի ձևավորման, որակի ամբողջական կառավարման համակարգի ներդրման միջոցով նպաստել Համալսարանի կրթության որակի բարելավմանը և Համալսարանի մրցունակության բարձրացմանը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4.1.Որակի ապահովման ամբողջական համակարգի անցնելու համար նախադրյալների ստեղծում, համալսարանի ստորաբաժանումներում /դեպարտամենտներում և ամբիոններում/ որակի ապահովման տեղական կառույցների ձևավորում,

4.2. որակի կառավարման նորարարական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման ապահովում,

4.3. բուհի առաքելության և ռազմավարական նպատակների իրագործման արդյունավետ վերահսկողություն, ծավալվող գործընթացների անընդհատ մշտադիտարկում, գնահատման մեխանիզմների և գործիքակազմի ստեղծում, բարելավման ծրագրերի առաջադրում,

4.4. շուկայամետ ՄԿԾ-ների ստեղծման, դրանց համընթեռնելիության և նմանատիպ այլ համեմատելի ծրագրերի հետ համահունչության, ուսանողների շարժունության ապահովման վերահսկման և գնահատման արդյունավետ մեխանիզմների ձևավորում,

4.5. գիտահետազոտական և նորարարական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման համար արդյունավետ մեխանիզմների ձևավորում,

4.6. բուհի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ծրագրերի և գործընթացների մշտադիտարկման և գնահատման գործիքների ստեղծում,

4.7. բուհի գործունեության վերաբերյալ հաշվետվողականության ապահովում,

4.8. արտաքին գնահատում իրականացնող կառույցների հետ համագործակցում,

4.9. համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծության աշխատանքների համադասում, արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին օժանդակում:

V.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1. Վարչության կազմում պետք է ընդգրկված լինի առնվազն երեք աշխատակից:

5.1.1. Վարչության աշխատանքների համակարգումը իրականացնում է Վարչության պետը, որի բացակայության դեպքում՝ գիտական աստիճան ունեցող ավագ մասնագետը: Այս հանգամանքի համընկնման կամ այդպիսի աստիճանի բացակայության դեպքում Վարչությունը կառավարում է տարիքով ավագ մասնագետը:

5.1.2. Վարչության կառուցվածքում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել համալսարանի ռեկտորի հրամանով:

5.2. Վարչությունը բուհի որակի կառավարման գործընթացը իրականացնում է մշտական և ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:

5.2.1. Որակի ապահովման մշտական հանձնաժողովներն են՝ ուսումնամեթոդական, տեխնիկական և ուսանողական հանձնաժողովները:

5.2.2. Վարչության ուսումնամեթոդական հանձնաժողովում ընդգրկված են բուհի բոլոր ամբիոններից ներկայացուցիչներ, Վարչության ուսումնամեթոդական հանձնաժողովի ավագ մասնագետը գլխավորում է սույն հանձնաժողովը:

5.2.3. Վարչության ուսումնամեթոդական հանձնաժողովի որոշումների կատարումը պարտադիր է ամբիոնների համար:

5.2.4. Վարչության տեխնիկական հանձնաժողովում ընդգրկված են բուհի բոլոր վարչական ստորաբաժանումների ներկայացուցիչները, Վարչության տեխնիկական հանձնաժողովի ավագ մասնագետը գլխավորում է սույն հանձնաժողովը:

5.2.5. Վարչության տեխնիկական հանձնաժողովի որոշումների կատարումը պարտադիր է բուհի վարչական ստորաբաժանումների համար:

5.2.6. Ուսանողական հանձնաժողովում ընդգրկված են ուսանողներ, և այն ղեկավարում է Վարչության պետը:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ

6.1. Վարչության պետին նշանակում և պաշտոնից ազատում է Համալսարանի ռեկտորը:

6.2. Վարչության պետը՝

6.2.1. ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է Վարչության առջև դրված նպատակների և խնդիրների իրականացման համար,

6.2.2. ղեկավարում է որակի ապահովման նորմատիվային փաստաթղթերի մշակման և դրանց իրագործման գործընթացը,

6.2.3. ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և համալսարանի ներքին նորմատիվ բնույթի այլ փաստաթղթերով նախատեսված գործունեության բնագավառի նպատակների ու խնդիրների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Համալսարանի կառավարման մարմիններին,

6.2.4. իր իրավասության սահմաններում Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից, դեպարտամենտներից (ֆակուլտետներից) ու ամբիոններից պահանջում և ստանում է որակի ապահովմանը վերաբերող տեղեկատվություն,

6.2.5. կազմում է որակի ապահովման գծով տեղեկատվության բարձրացման սեմինարների, կլոր սեղանների ծրագրեր,

6.2.6. կազմակերպում է Համալսարանի ինքնավերլուծության շարունակական իրականացումը,

6.2.7. ռեկտորին կարող է ներկայացնել առաջարկություններ Վարչության աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

6.2.8. ներկայացնում է Վարչությունը արտաքին հարաբերություններում,

6.2.9. աջակցում է Որակի ներքին ապահովմանն ուղղված ուսանողական շարժման ձևավորմանը:

6.2.10. Վարչության պետը վարչության աշխատանքների համար հաշվետու է համալսարանի ռեկտորին, նրա կողմից լիազորված որակի ապահովման գործընթացը համադասող պրոռեկտորին և գիտխորհրդին:

VII. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳԾՈՎ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԸ

7.1 Ուսումնամեթոդական հանձնաժողովը գլխավորում է ուսումնամեթոդական հանձնաժողովի ավագ մասնագետը: Ուսումնամեթոդական հանձնաժողովի նախագահին Որակի վարչության պետի առաջարկությամբ նշանակում է Համալսարանի ռեկտորը:

7.2 Ուսումնամեթոդական հանձնաժողովի նախագահը՝

7.2.1. մշակում է որակի ապահովման հետ կապված ուսումնամեթոդական փաստաթղթերը,

7.2.2. ամբիոններին խորհրդատվություն է ապահովում ՄԿԾ-ների վերջնարդյունքներին համապատասխան մեթոդաբանության, դասախոսների կոմպետենցիաների զարգացման ուղղությամբ,

7.2.3. մշակում է ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմների մեթոդիկա, շահակիցների կողմից բուհի գնահատման մեխանիզմներ և զորձիքակազմ, կրթական ծրագրերի որակի գնահատման նոր մեխանիզմներ,

7.2.4. մեթոդական օգնություն է ցուցաբերում ամբիոններին հետևյալ աշխատանքների ուղղությամբ՝

- ամբիոններում դասախոսների թղթապանակների ստեղծում,
- ամբիոնների աշխատանքի որակի ապահովման գործընթացների գնահատման չափանիշների և մեխանիզմների մշակում,
- գիտական հետազոտությունների որակի ապահովման գործընթացների գնահատման չափանիշների և մեխանիզմների մշակում:

7.2.5. Ուսումնամեթոդական հանձնաժողովի ավագ մասնագետը ի պաշտոնե հաշվետու է Վարչության պետին:

VIII. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾՈՎ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԸ

8.1. Տեխնիկական հանձնաժողովը գլխավորում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը, ով ի պաշտոնե հանդիսանում է տեխնիկական հանձնաժողովի նախագահը:

8.2 Տեխնիկական հանձնաժողովի նախագահին Որակի վարչության պետի առաջարկությամբ նշանակում է Համալսարանի ռեկտորը:

8.3. Տեխնիկական հանձնաժողովի նախագահը՝

8.3.1. համակարգում է տեխնիկական հանձնաժողովի աշխատանքները,

8.3.2. մշակում է բուհերի համար պարտադիր, ինչպես նաև Համալսարանում գործող իրավանորմատիվային փաստաթղթերի իրագործման արդյունավետության գնահատման մեխանիզմներ,

8.3.3. հետևում է, որ ուսանողների և դասախոսների շահերը արտահայտող կարգերը տեղադրվեն համապատասխան ցուցատախտակներին և համալսարանի կայքում,

8.3.4. կազմակերպում է յուրաքանչյուր կիսամյակում առնվազն մեկ անգամ ուսանողների կողմից դասախոսների գնահատման գործընթացը:

IX. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՂԵԿԱՎԱՐԸ

9.1. Ուսանողական հանձնաժողովում ընդգրկված են դեպարտամենտների ուսանողները:

9.2. Ուսանողական հանձնաժողովը ղեկավարում է Որակի ապահովման վարչության պետը:

9.3. Ուսանողական հանձնաժողովը՝

9.3.1. գնահատում է, թե որքանով են ուսանողները տեղյակ իրենց իրավունքներից և պարտականություններից,

9.3.2. կազմակերպում է ուսանողական քննարկումներ կրթության որակը խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ՝ Որակի վարչություն ներկայացնելով համապատասխան առաջարկություններ,

9.3.3. աջակցում է որակի ապահովման մեխանիզմների և ընթացակարգերի ուղղությամբ իրականացվող աշխատանքներին,

9.3.4. մասնակցում է որակի ապահովման հետ կապված մշտադիտարկման աշխատանքներին:

X. Եզրափակիչ դրույթներ

10.1. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

10.2. Սույն կանոնադրության ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 03.11.2011թ. Համալսարանի ռեկտորի կողմից հաստատված Հյուսիսային համալսարանի որակի ապահովման վարչության կանոնադրությունը:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՐՏԵԶ



ԳԼՈՒԽ IV

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Հյուսիսային համալսարանում իրականացվում է ուսումնական գործընթացը կազմակերպող տարաբնույթ ոլորտների գործունեության գնահատում, որը պատասխանատու և բարդ գործընթաց է և պետք է բազմակողմանիորեն նախապատրաստել: Գնահատման գործընթացի կազմակերպման նպատակը աշխատանքի ոչ միայն թույլ, այլև ուժեղ կողմերի վերհանումն է: Իսկ կատարված աշխատանքի և նրան ներկայացվող պահանջների համապատասխանությունն ու որակը գնահատելու համար անհրաժեշտ է մշակել հստակ գործիքակազմ: Հյուսիսային համալսարանում որակի ապահովման վարչության կողմից մշակվել և կիրարկվել են բազմաթիվ ձևաչափեր, ձևաթերթեր, հարցաշարեր, հարցաթերթիկներ: Ստեղծված բոլոր գործիքները բխում են որակի ապահովման հայեցակարգից և միտված են գնահատելու բուհի ռազմավարական ծրագրի երեք առաջնահերթությունների ուղղությամբ իրականացվող գործընթացների, ենթագործընթացների որակը և դրա հիման վրա բարելավման քայլեր մշակելու:

Վերջին տարիներին վերանայվեցին բուհերին, մասնավորապես մասնագիտությունների կրթական ծրագրերին ներկայացվող պահանջները, հարց, որը նաև Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրի առաջնահերթություններից է: Այնպիսի հարցեր, ինչպիսիք են ՄԿԾ-ների՝ ըստ ուսումնառության ելքային հստակ ու միանգամայն չափելի արդյունքների մշակումը, որակավորումների ազգային շրջանակի և դուբլինյան բնութագրիչների հաշվառումով, ուսանողակենտրոն միջավայրի ապահովումը, ուսումնառության ելքային արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանության մշակումն ու կիրառումը, ստիպեցին վերանայել որակի ապահովման գործիքակազմը, ստեղծել նոր հացաշարեր և ձևաչափեր:

Հաշվի առնելով վերոհիշյալ պահանջները՝ Հյուսիսային համալսարանի որակի ապահովման վարչությունը վերանայել է դասախոսի գործունեության գնահատման հարցաթերթիկը, որում տեղ են գտել այնպիսի հարցադրումներ, որոնք նպատակ ունեն պարզելու, թե դասախոսի կիրառած դասավանդման, ոսումնառության և գնահատման մեթոդները որքանո՞վ են նպաստում դասընթացի ելքային արդյունքների ձևավորմանը,

որքանո՞վ է կարողանում սովորողների մեջ զարգացնել համապատասխան հմտություններ, քննադատական և վերլուծական մտածողություն, համագործակցային հարաբերություններ, ուսումնառության նկատմամբ ստեղծագործական մոտեցում և անհրաժեշտ հետաքրքրություններ:

Դասախոսի գործունեության արդյունավետությունը կախված է մի շարք հանգամանքներից՝ անընդհատ վերապատրաստվելու, մասնագիտական և մեթոդական առումով կատարելագործվելու ներքին պահանջներից ու մղումներից, համալսարանի ընձեռած վերապատրաստվելու հնարավորություններից, համալսարանի նյութատեխնիկական ռեսուրսներից, բարոյահոգեբանական մթնոլորտից, ուսանողների ընդհանուր մակարդակից, աշխատանքի կայունության երաշխավորությունից, աշխատավարձից և այլն: Անժխտելի է, որ աշխատանքի որակի ապահովումը հնարավոր չէ իրականացնել այսօրինակ հարցերը շրջանցելով: Այդ իսկ պատճառով համալսարանի որակի ապահովման վարչությունը մշակել է նաև համալսարանի ուսումնամեթոդական ապահովվածությունը, տեխնիկական հագեցվածությունը գնահատող հարցաթերթ՝ նախատեսված և՛ ուսանողական, և՛ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հարցման համար:

ՄԿԾ-ի որակի վերաբերյալ շատ հարցեր կարող են պարզաբանել շրջանավարտների շրջանում անցկացված հարցումները, մանավանդ եթե նրանք արդեն մասնագիտությամբ զբաղվածություն են գտել: Այդ իսկ պատճառով վերանայվել է նաև նրանց հարցման համար նախատեսված հարցաթերթիկը:

Ուսումնառության արդյունավետությունը պայմանավորված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների պահանջների հաշվառումով: Պետք է նշել, որ այս հարցում արտաքին շահակիցների, մասնավորապես գործատուների շահագրգռվածությունը թույլ է: Այնուամենայնիվ, համալսարանում մշակվել և մշակվում են նաև նրանց պահանջները արտացոլող մեխանիզմներ:

Գնահատման համար կարևորում ենք նաև տարբեր հիմնախնդիրների շուրջ կազմակերպած թիրախային ֆոկուս-խմբերի անցկացումը և դրանց արդյունքների վերլուծումը, քանակական և որակական ցուցանիշների համադրումը:

Գնահատման գործիքակազմը մշակելիս համալսարանի որակի ապահովման վարչությունը առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով.

- Գործիքները կազմված են նպատակային ձևով, այսինքն՝ այնպես, որ հնարավորություն են ընձեռում խորությամբ պարզաբանել այս կամ այն գործընթացի որակն ամբողջությամբ և որքանով է այն բխում որակի ապահովման հայեցակարգի պահանջներից:
- Գործիքների նկատելի մասը մտահղացված է հաշվետվողականություն ապահովելու նպատակով, բայց հնարավորություն է ընձեռում նաև խորքային վերլուծություն կատարելու համար:
- Հարցաթերթիկներում նշված հարցադրումները ձևակերպված են հնարավորինս հստակ, հասկանալի, որպեսզի լրացնողը թյուրիմացության մեջ չհայտնվի, և նրանց պատասխաններն էլ երկդիմի չլինեն: Շատ դեպքերում հարցաթերթիկում կան ծանոթագրություններ:
- Հարցաշարերը կազմված են սեղմ և լրացնողից մեծ ժամանակ չեն պահանջում:
- Կազմված են այն սկզբունքով, որ միևնույն գործիքը հնարավոր է օգտագործել նաև այլ շահակիցների կարիքները վերհանելու կամ կատարված աշխատանքի որակը գնահատելու նպատակով:
- Դրանք հավաստի, անկողմնակալ և թարմ նյութ են տրամադրում որակի ապահովման վարչությանը և հանձնաժողովներին վերլուծություն կատարելու, թույլ և ուժեղ կողմերը բացահայտելու, արտաքին հնարավորությունները հաշվառելու, հնարավոր վտանգները չեզոքացնելու կամ մեղմացնելու համար:

Ինչպես ցանկացած գործընթաց, այնպես էլ նրա գնահատումը կարիք ունի մշտադիտարկման, վերանայման և բարելավման: Հարկ է նշել, որ համալսարանի գործիքակազմի մի մասը ոչ միայն կիրարկված է, այլև արդեն վերանայվել ու լրամշակվել է: Կան գործիքներ, որոնք դեռևս փորձարկված չեն: Ստորև բերված գործիքները համալսարանում կիրառվող բոլոր գործիքները չեն. կան համալսարանի կառավարման ոլորտին վերաբերող բազմաթիվ գործիքներ, որոնք ձեռնարկում տեղ չեն գտել:

Որակի ապահովման գործիքների մի մասի ստեղծման համար հիմք են ծառայել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի մշակած աշխատանքային նյութերը, մասնագիտական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափը, Կրթության ազգային ինստիտուտի ուսումնամեթոդական փաթեթները:

I. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ 1-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հյուսիսային համալսարանում իրականացվող հետազոտությունների որակի գնահատման համար մշակվել են հետևյալ գործիքները՝

1.1. մասնագիտական կրթական ծրագրերի ելքային արդյունքներին միտված մեթոդաբանության և որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչների համադրելիության գնահատման ձևաթերթ,

1.2. մասնագիտական կրթական ծրագրի որակի վերաբերյալ պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածությունը ստուգող հարցաթերթ,

1.3. մասնագիտական կրթական ծրագրի որակի վերաբերյալ շրջանավարտների բավարարվածությունը ստուգող հարցաթերթ,

1.4. մասնագիտական կրթական ծրագրի որակի վերաբերյալ գործատուի բավարարվածությունը ստուգող հարցաթերթ,

1.5. դասախոսների գնահատողների կողմից առարկայական ծրագրերի փոխգնահատման ձևաչափ,

1.6. ըստ ՄԿԾ ելքային արդյունքների՝ ուսանողների մնացորդային գիտելիքների և կարողությունների ստուգման ձևաչափ,

1.7. պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման մշտադիտարկման ձևաչափ,

1.8. պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման գործընթացի գնահատման հարցաշար,

1.9. դասավանդման և ուսումնառության մեթոդների՝ դասախոսների փոխգնահատման ձևաչափ,

1.10. ուսանողների կողմից ուսուցման որակի գնահատման հարցաթերթիկ,

1.11. ֆոկուս-խմբերի անցկացման ուղեցույց,

1.12. ֆոկուս-խմբերի հարցաշարերի նմուշօրինակներ,

1.13. կադրերի աշխատանքային ներուժի գնահատում՝ ըստ յուրաքանչյուր ՄԿԾ-ի,

1.14. Հյուսիսային համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորման ձևաչափ:

1.1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՄԻՏՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ[2]ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅԱՆ

Ստորև բերված աղյուսակը հնարավորություն է տալիս ստուգելու՝

- ՄԿԾ ելքային արդյունքների համապատասխանությունը ՈԱՇ-ի պահանջներին,
- ՄԿԾ ելքային արդյունքները ապահովող առարկաները ըստ ուսումնական պլանի,
- դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխանությունը ՄԿԾ ելքային արդյունքներին,
- գնահատման մեթոդների համապատասխանությունը ՄԿԾ ելքային արդյունքներին:

Աղյուսակի առաջին սյունակում ըստ կրթական աստիճանների ներկայացված են ՈԱՇ-ից դուրս գրված բանալի բառերը՝ ձեռք բերվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների բաժանմամբ: Երկրորդ սյունակում ներկայացվում են ՄԿԾ-ի նախատեսվող ելքային արդյունքները, որի հիման վրա անցկացվում է համեմատական վերլուծություն: Երրորդ սյունակում ներկայացվում են ուսումնական պլանով տվյալ մասնագիտության համար նախատեսված այն առարկաները, որոնց վերջնարդյունքները միտված են ՄԿԾ-ի համապատասխան ելքային արդյունքների ապահովմանը: Աղյուսակի չորրորդ և հինգերորդ սյունակներում ներկայացվում են նաև այս կամ այն վերջնարդյունքը ապահովող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները:

Գնահատման այս ձևաթերթը որակի ապահովման ուսումնամեթոդական հանձնաժողովին հնարավորություն կտա վերլուծել և մշտադիտարկել ՄԿԾ իրագործումը ՈԱՇ-ի բնութագրիչներին համապատասխան:

[2] Հայաստանի որակավորումների ազգային շրջանակը հաստատվել է ՀՀ կառավարության 31 մարտի 2011 թվականի N 332-Ն որոշմամբ: Այժմ գտնվում է լրամշակման փուլում:

Ո Ա Շ	Մ Կ Ծ վերջնարդյունք	Առարկաների անվանում	Ուսուցման մեթոդներ	Գնահատման մեթոդներ
1	2	3	4	5
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ				
ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ				
Ոլորտի և մասնագիտու թյան հիմնական ժամանակակից հասկացություններ				
Ոլորտի և մասնագիտության հիմնական տեսություններ				
Ոլորտի և մասնագիտության հիմնական մեթոդներ				
Հ Մ Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն				
Կարող է մասնագիտական գործունեություն ծավալել և կատարել առաջադրանքներ ղեկավարության ներքո				
Կարող է որոշումներ կայացնել սահմանափակ ինքնուրույնության պայմաններում				
Կարող է ստանձնել պատասխանատվու թյուն թիմում				
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ				
Կարող է կիրառել քննադատական մտածողություն, օժտված է վերլուծելու և եզրահանգումներ անելու ունակությամբ				
Կարող է դրսևորել				

որոշակի ստեղծագործական մոտեցում բարդ մասնագիտական խնդիրների լուծումները առաջարկելու համար				
Կարող է բացատրել և մեկնաբանել տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվությունը, գաղափարները, խնդիրները, փաստարկները և իրավիճակները մասնագետներին և ոչ մասնագետներին				
Կարող է օգտագործել մի շարք ՏՀՏ կիրառություններ աշխատանքը դյուրինացնելու, արագացնելու ու խնդիրներ լուծելու համար				
Կարող է հավաքել, մշակել և մեկնաբանել մասնագիտական բնագավառին առնչվող քանակական և որակական տվյալները՝ հիմնավոր դատողություններ անելու համար				
Կարող է կիրառել ոլորտի հիմնարար սկզբունքները և մեթոդները՝ ծանոթ իրադրություններում խնդիրներ լուծելու համար				

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ				
ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ				
Տվյալ բնագավառի և փոխհատվող ոլորտների տեսությունների վերաբերյալ				
Տվյալ բնագավառի և փոխհատվող ոլորտների մեթոդների վերաբերյալ				
Մասնագիտացման բնագավառի վերջին ձեռքբերումները, որոնք հիմք են հանդիսանում հետագա հետազոտական աշխատանքի համար				
ՀՄՏՈՒԹՅՈՒՆ				
Կարող է կատարել բարդ առաջադրանքներ և լուծել հիմնախնդիրներ մասնագիտացված ոլորտում				
Կարող է ինքնուրույն կառավարել անկանխատեսելի աշխատանքային իրադրություններ, որոնք պահանջում են նոր մոտեցումներ				
Կարող է նպաստել մասնագիտական գործունեության և հետազոտության առաջընթացին				
Կարող է պատասխանատվություն ստանձնել թիմում այլոց աշխատանքի համար և ղեկավարել				

այն				
Ունակ է բացահայտելու իր սեփական կրթական կարիքները և ինքնուրույն շարունակելու ուսումնառությունը				
Կ Ա Ր Ո Ղ ՈՒ Թ Յ ՈՒ Ն				
Կարող է հետազոտել, մտահղել ու սինթեզել մասնագիտությանը առնչվող նոր գաղափարները, մոտեցումները, տեսությունները և հետազոտական հիմնախնդիրները				
Կարող է առաջարկել մասնագիտական ոլորտը ընդլայնող նորարարական ու ստեղծարար լուծումները				
Կարող է օգտագործել հատուկ լեզվական արտահայտչամիջոց ներ և համապատաս խան մեթոդներ՝ նոր իրավիճակները, եզրահանգումները ներկայացնելու համար				
Կարող է օգտագործել մի շարք ՏՀՏ կիրառություններ նոր բարդ խնդիրներ լուծելու և հետազոտությանը օժանդակելու համար				
Կարող է վերլուծել և գնահատել ոլորտի քանակական և որակական տվյալները՝ ոչ				

ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության հիման վրա եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու համար				
Կարող է համակողմանիորեն կիրառել ոլորտի հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները՝ մասնագիտական բնագավառում ոչ ամբողջական տեղեկատվությամբ կամ նոր և անծանոթ իրադրություններում տեսական և գործնական խնդիրներ լուծելու համար				

1.2.ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՒԳՈՂ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարցաշարի նպատակը

Պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴ կազմ) շրջանում անցկացվող հարցման նպատակն է պարզել ՊԴ կազմի կարծիքը մասնագիտության կրթական ծրագրի (ՄԿԾ) որակի վերաբերյալ, ինչը կնպաստի ՄԿԾ-ի որակի բարելավմանը:

Հարցաշարի բովանդակությունը և վերլուծության մեթոդները

Հարցաշարը բաղկացած է 2 մասից, որտեղ կիրառված են փակ և բաց հարցեր:

Առաջին մասում՝ ՊԴ կազմի անձնական տվյալներին վերաբերող հարցերում, մասնակիցները պետք է նշեն իրենց անունն ու ազգանունը, սեռը, տարիքը, ամբիոնը, պաշտոնը, դասավանդվող առարկաների տեղը ուսումնական պլանում: Ստացված տվյալները պետք է վերլուծել և համեմատել հարցաշարի երկրորդ մասից ստացված տվյալների հետ:

Հարցաշարի **երկրորդ մասը** բացահայտում է ՊԴ կազմի վերաբերմունքը տվյալ մասնագիտական կրթական ծրագրի որակի վերաբերյալ:

Արդյունքների վերլուծության միջոցով հնարավոր կլինի պարզել ՄԿԾ-ի թույլ և ուժեղ կողմերը, որոնց հիման վրա կմշակվեն ՄԿԾ-ի բարելավման ուղիներ:

Հարցաշարի կիրարկման հաճախականությունը

ՊԴ կազմի հարցումը իրականացվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ:

Մասնագիտական կրթական ծրագրի որակի վերաբերյալ պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածությունը ստուգող հարցաթերթ

Հարգելի՛ գործընկեր, պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴ կազմ) շրջանում անցկացվող հարցման նպատակն է պարզել Ձեր կարծիքը մասնագիտական կրթական

ծրագրի (ՄԿԾ) որակի վերաբերյալ: Ձեր գնահատականները կօգնեն վերացնել նկատված թերությունները և բարելավել մասնագիտական կրթական ծրագրի որակը:

Մաս 1

1. Դասախոսի անուն, ազգանուն:

   _____

2. Խնդրում ենք նշել Ձեր սեռը:
   ա)____ Ար. բ)____ Իգ.

3. Խնդրում ենք նշել Ձեր տարիքը:
   ա)_____մինչև 30 տարեկան
   բ) _____30-ից 45 տարեկան
   գ) ____ 45-ից 63 տարեկան
   դ)____ 63-ից բարձր

4. Ամբիոնի անվանումը_____
5. Պաշտոնը, կոչումը, գիտական աստիճանը_____

   _____

6. Ձեր կողմից դասավանդվող առարկաները ուսումնական պլանի ո՞ր բլոկում են ներառված:

	Դասընթացներն ըստ ուսումնական պլանի	Նշում
ԲԱԺԻՆ 1	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ	
ԲԱԺԻՆ 2	Մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ	
ԲԱԺԻՆ 3	Ընդհանուր մասնագիտական դասընթացներ	
ԲԱԺԻՆ 4	Հատուկ մասնագիտական դասընթացներ	
ԲԱԺԻՆ 5	Պրակտիկա	

Մաս 2

7. Ձեր կարծիքով՝ հստա՞կ են նկարագրված և չափելի՞ են արդյոք ՄԿԾ-ի ելքային արդյունքները Ձեր դասավանդած առարկայի տեսանկյունից:

	Այո	Ոչ	Մասամբ
ԲԱԺԻՆ 1			
ԲԱԺԻՆ 2			
ԲԱԺԻՆ 3			
ԲԱԺԻՆ 4			
ԲԱԺԻՆ 5			

8. Ձեր կարծիքով՝ ՄԿԾ-ում տեսական և գործնական բաղադրիչների հարաբերակցությունը ճի՞շտ է ներկայացված:

	Այո	Ոչ	Մասամբ
ԲԱԺԻՆ 1			
ԲԱԺԻՆ 2			
ԲԱԺԻՆ 3			
ԲԱԺԻՆ 4			
ԲԱԺԻՆ 5			

9. Եթե ոչ, ապա ի՞նչ թերություններ կառանձնացնեք /խնդրում ենք նկարագրել:

---

10. ՄԿԾ-ի շրջանակում մշակված գնահատման համակարգն արդյո՞ք հնարավորություն տալիս է Ձեզ՝ մշակելու ուսանողների գնահատման Ձեր սանդղակը:

	Այո	Ոչ	Մասամբ
ԲԱԺԻՆ 1			
ԲԱԺԻՆ 2			
ԲԱԺԻՆ 3			
ԲԱԺԻՆ 4			
ԲԱԺԻՆ 5			

11. Բուհի տրամադրած նյութատեխնիկական միջոցները ՄԿԾ-ի ելքային արդյունքները ձևավորելու հնարավորություն ընձեռո՞ւմ են արդյոք:

    ա) այո

    բ) ոչ

    գ) մասամբ

12. Խնդրում ենք հիմնավորել Ձեր կարծիքը:

---

13. Բուհն ունի՞ ուսումնաօժանդակ կազմ, որը նպաստում է Ձեր առարկայի գծով ՄԿԾ-ի ելքային արդյունքները ձևավորելուն:

    ա) այո

    բ) ոչ

14. Բացասական պատասխանի դեպքում խնդրում ենք մասնավորեցնել՝ ինչպիսի՞ հավելյալ օժանդակության կարիք է զգացվում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

1.3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՒԳՈՂ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարցաշարի նպատակը

Շրջանավարտների շրջանում անցկացվող հարցման նպատակն է ստանալ անցյալ տարիների շրջանավարտների կարծիքը մասնագիտական կրթական ծրագրի (ՄԿԾ) վերջնարդյունքների ձեռքբերման վերաբերյալ, ինչպես նաև շուկայի պահանջներին դրանց համապատասխանության վերաբերյալ: Հարցումը նպատակ ունի նաև ձեռք բերելու տեղեկատվություն շրջանավարտների աշխատանքային կարգավիճակի մասին, ինչը հնարավորություն կտա գնահատելու վերջիններիս աշխատանքային հաջողությունները:

Հարցաշարի բովանդակությունը և վերլուծության մեթոդները

Հարցաշարը բաղկացած է 3 մասից, որտեղ կիրառված են և՛ փակ և՛ բաց հարցեր:

Առաջին մասում՝ շրջանավարտների անձնական տվյալներին վերաբերող հարցերում, մասնակիցները պետք է նշեն սեռը, բնակության վայրը, բուհ ընդունվելու և ավարտելու տարեթիվը: Ստացված տվյալները ոչ միայն պետք է պատկերել գրաֆիկներով և վերլուծել, այլ նաև համեմատական անցկացնել հարցաշարի երկրորդ և երրորդ մասերում ներկայացված հարցերի հետ՝ բացահայտելու համար յուրաքանչյուր կրթական նպատակի և ուսումնառության վերջնարդյունքի ձեռքբերման աստիճանը և աշխատանքային ընդհանուր հաջողությունների կապը՝ կախված մասնակիցների սեռից, բուհն ավարտելու տարեթվից և բնակության վայրից:

Հարցաշարի երկրորդ մասը վերաբերում է շրջանավարտների կողմից տվյալ մասնագիտության կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանը: Հարցման մասնակիցները պետք է գնահատեն ուսումնառության վերջնարդյունքի ձեռքբերման աստիճանը 1-4 սանդղակով:

Արդյունքների վերլուծության միջոցով հնարավոր կլինի պարզել, թե մասնագիտության կրթական ծրագրի իրականացման ժամանակ ո՞ր վերջնարդյունքները չեն ապահովվել կամ մասամբ են ապահովվել: Կարելի է համեմատական վերլուծություն կատարել տարբեր տարիների շրջանավարտների պատասխանների միջև՝ հասկանալու համար կրթական վերջնարդյունքների ձեռքբերման հետ կապված շարժընթացը:

Հարցաթերթի երրորդ մասը վերաբերում է շրջանավարտների աշխատանքային պայմաններին, որտեղ ընդգրկված հարցերը վերաբերում են շրջանավարտների աշխատանքային կարգավիճակին, զբաղեցրած դիրքին, զբաղվածության ոլորտին՝ մասնավորեցնելով աշխատանքային հիմնական պարտականությունները, ինչը շատ կարևոր է, քանի որ այն ուղղակիորեն կապված է կրթական ծրագրի նպատակների և ուսումնառության վերջնարդյունքների հետ: Շրջանավարտների աշխատանքին վերաբերող հարցերում կարող են ընդգրկվել նաև հարցեր, որոնք վերաբերում են աշխատավարձի չափին, բուհն ավարտելու և աշխատանքի անցնելու միջև ընկած ժամանակահատվածին՝ պարզելու, թե որքա՞ն ժամանակ է պահանջվել շրջանավարտից աշխատանք գտնելու համար:

Հարցաշարի կիրարկման հաճախականությունը

Շրջանավարտների շրջանում անցկացվող հարցումն իրականացվում է բուհի նախորդ տարիների շրջանավարտների շրջանում յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ:

Մասնագիտական կրթական ծրագրի որակի վերաբերյալ շրջանավարտների բավարարվածությունը ստուգող հարցաթերթ

Հարգելի՛ շրջանավարտ, այս հարցաշարի նպատակն է իմանալ Ձեր կարծիքը ստացված մասնագիտության կրթական ծրագրի (ՄԿԾ) վերջնարդյունքների ձեռքբերման վերաբերյալ: Ձեր անկեղծ պատասխանները օգտակար կլինեն ՄԿԾ-ի բարելավման համար: Այն անանուն է և ստացված տեղեկատվությունը կօգտագործվի միմիայն ընդհանրացված տեսքով:

Կանխավ շնորհակալ ենք ՄԿԾ-ի բարելավման հարցում աջակցելու համար:

Մաս 1

1. Ե՞րբ եք ընդունվել բուհ:

   _____

2. Ե՞րբ եք ձեռք բերել բակալավրի/մագիստրոսի կրթական աստիճան:

   _____

3. Խնդրում ենք նշել Ձեր սեռը:

ա)____ Ար. բ)____ Իգ.

4. Խնդրում ենք նշել Ձեր տարիքը:
   ա)____ մինչև 30
   բ)____ 30-ից բարձր

5. Խնդրում ենք նշել Ձեր ներկայիս բնակության վայրը /պետություն/ մարզ, քաղաք/գյուղ:
   _____

Մաս 2

6. Խնդրում ենք գնահատել ՄԿԾ-ի նշված ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման աստիճանը 1 - 4 սանդղակով՝
   1 = անբավարար
   2 = բավարար
   3 = լավ
   4 = գերազանց

ՄԿԾ-ի վերջնարդյունքներ				
Վերջնարդյունք 1	1	2	3	4
Վերջնարդյունք 2	1	2	3	4
Վերջնարդյունք 3	1	2	3	4
Վերջնարդյունք 4	1	2	3	4
Վերջնարդյունք 5	1	2	3	4
Վերջնարդյունք 6	1	2	3	4
Վերջնարդյունք 7	1	2	3	4

Մաս 3

7. Խնդրում ենք նշել՝ ե՞րբ եք Ձեր մասնագիտությամբ աշխատանքի անցել՝

   ա. աշխատել եք մինչև բուհ ընդունվելը,
   բ. բուհում ուսումնառության շրջանում,
   գ. ավարտելուց հետո մինչև մեկ տարի ժամանակահատվածում,
   դ. ավարտելուց հետո 1 -ից 3 տարի ժամանակահատվածում,
   ե. ավարտելուց հետո 3 տարի անց:

8. Խնդրում ենք նշել Ձեր կարգավիճակը՝
   ա. պայմանագրով աշխատող /մասնավոր ոլորտ/,
   բ. պետական/հանրային ծառայող,
   գ. անհատ ձեռներեց,

դ. գործազուրկ,
ե. այլ _____

9. Խնդրում ենք նշել Ձեր պաշտոնը:
_____

10. Խնդրում ենք ներկայացնել Ձեր աշխատանքային պարտականությունները:
_____
_____
_____

11. Ներկայիս ամսական աշխատավարձը:

ա)____ մինչև 50000 դրամ
բ)____ 50000-100000 դրամ
գ)____ 100000 – 200000 դրամ
դ)____200000 – 300000 դրամ
ե)____ 300000 դրամ և ավելի

12. Խնդրում ենք գրել Ձեր առաջարկությունները ՄԿԾ-ի բարելավման ուղղությամբ:

13. Խնդրում ենք թողնել Ձեր մեկնաբանություններն ու առաջարկությունները հարցաթերթի բովանդակության վերաբերյալ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

1.4. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԱՏՈՒԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՒԳՈՂ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարցաշարի նպատակը

Գործատուների շրջանում անցկացվող հարցման նպատակն է պարզել գործատուների կարծիքը Հյուսիսային համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) որակի վերաբերյալ:

Հարցաշարի բովանդակությունը և վերլուծության մեթոդները

Հարցաշարը բաղկացած է 3 մասից, որտեղ կիրառված են փակ և բաց հարցեր:

Առաջին մասում՝ գործատուների անձնական տվյալներին վերաբերող հարցերում, մասնակիցները պետք է նշեն իրենց անունն ու ազգանունը, սեռը, տարիքը, կազմակերպության անունը, պաշտոնը:

Հարցաշարի **երկրորդ մասը** պարզում է գործատուների ակնկալիքները շրջանավարտների մասնագիտական, հաղորդակցական, համակարգչային գիտելիքներից և կարողություններից: Արդյունքների վերլուծության միջոցով հնարավոր կլինի պարզել ՄԿԾ-ի թույլ և ուժեղ կողմերը, որոնց հիման վրա կմշակվեն ՄԿԾ-ի բարելավման ուղիներ:

Հարցաշարի **երրորդ մասը** պարզում է ՄԿԾ-գործատու հնարավոր համագործակցության ուղղությունները: Արտաքին շահակիցների ներգրավումը ՄԿԾ-ի կատարելագործման գործում կնպաստի շուկայամետ ՄԿԾ-ների ստեղծմանը:

Հարցաշարի կիրարկման հաճախականությունը

ՊԴ կազմի հարցումը իրականացվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ:

Մասնագիտական կրթական ծրագրի որակի վերաբերյալ գործատուի բավարարվածությունը ստուգող հարցաթերթ

Հարգելի՛ գործընկեր, գործատուների շրջանում անցկացվող հարցման նպատակն է պարզել Ձեր կարծիքը Հյուսիսային համալսարանի մասնագիտական կրթական ծրագրի (ՄԿԾ) որակի վերաբերյալ՝ թե որքանո՞վ է այն համապատասխանում շուկայի այսօրվա պահանջներին: Ձեր անկեղծ դիրքորոշումը և գնահատականները կօգնեն վերացնելու

նկատված թերությունները և բարելավելու Հյուսիսային համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի որակը՝ դարձնելով առավել շուկայամետ:

Մաս 1

1. Գործատուի անուն, ազգանուն:
_____

2. Խնդրում ենք նշել Ձեր սեռը:
ա)____ Ար. բ)____ Իգ.

3. Խնդրում ենք նշել Ձեր տարիքը:
ա)____մինչև 45 տարեկան

բ)_____45-ից բարձր

4. Խնդրում ենք նշել Ձեր ղեկավարած կազմակերպության անվանումը:
_____

5. Խնդրում ենք նշել Ձեր պաշտոնը:
_____

Մաս 2

6. Ինչպե՞ս եք աշխատանքի ընդունում՝

ա) մրցույթով,

բ) հարցազրույցով,

գ) այլ_____

7. Աշխատանքի ընդունելիս նախապատվությունը տալիս եք այն դիմորդներին, որոնք՝

ա) ունեն գիտական աստիճան,

բ) ունեն աշխատանքային ստաժ,

գ) սովորել կամ վերապատրաստվել են արտասահմանում,

ե) այլ_____

8. Շրջանավարտների աշխատանքի ընթացքում նրանց մոտ մասնագիտական ինչպիսի՞ որակների պակաս եք նկատել՝

ա) մասնագիտական-տեսական գիտելիքների պակաս,

բ) մասնագիտական հմտությունների պակաս,

գ) այլ_____

9. Բացի մասնագիտական որակներից՝ ինչպիսի՞ հմտություններ են պահանջվում շրջանավարտից աշխատանքի ընդունելու համար՝

ա) Համակարգչային գիտելիքներ (խնդրում ենք մասնավորեցնել՝ ինչպիսի՞ ծրագրերի իմացություն):

_____

_____

բ) Օտար լեզուների իմացություն (խնդրում ենք մասնավորեցնել՝ ի՞նչ լեզուների պետք է տիրապետի շրջանավարտը և ի՞նչ մակարդակով):

_____

_____

գ) Հաղորդակցական հմտություններ. խնդրում ենք մասնավորեցնել՝ ի՞նչ հմտություններ՝

ա) խոսքի բարձր կուլտուրա,

բ) ունկնդիրների, գործընկերների հետ քննարկումներ անցկացնելու կարողություն,

գ)անսպասելի իրավիճակներում կոնֆլիկտներ հարթելու կարողություն,

դ) թիմում աշխատելու կարողություն,

ե) այլ_____

Մաս 3

10. Կցանկանայի՞ք արդյոք համագործակցել բուհի հետ հետևյալ ուղղություններով՝

ա) համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացում,

բ) ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպում,

գ) աշխատաշուկայի ժամանակակից պահանջների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,

դ) շրջանավարտների և ուսանողների համար ստաժավորման, կամավոր աշխատանքի, վերապատրաստման և փորձի ձեռքբերման ժամանակակից այլ ձևերի ու միջոցների իրականացում,

ե) այլ_____

1.5. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈԽԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Ձևաչափի նպատակը

Ձևաչափի հիմնական նպատակը բուհի կողմից մշակված պահանջներին համապատասխան առարկայական ծրագրերի նորացումն ու թարմացումն է: Այն կարող է նպաստել նաև տարբեր ամբիոնների միջև համագործակցության եզրեր ստեղծելուն, դասախոսների մշակած մեթոդաբանության քննարկմանը, լավագույն փորձի տարածմանը, ինչպես նաև համեմատական վերլուծություն անցկացնելուն:

Նույն ձևաչափի լրացումը արտաքին գնահատողի կողմից հնարավորություն կտա առավել օբյեկտիվ վերլուծություն կատարելու առարկայական ծրագրերի տարբեր բաղադրիչների որակի և նպատակայնության վերաբերյալ:

Դասախոսների գնահատողների կողմից
առարկայական ծրագրերի փոխգնահատման ձևաչափ

	Հարցադրում	Այո	Ոչ	Մասամբ
1.	Դասընթացի կրթական ելքային արդյունքները միտվա՞ծ են ՄԿԾ-ի արդյունքների ձևավորմանը[3]:			
2.	Նախանշված կրթական ելքային արդյունքները չափելի՞ են[4]:			
3.	Դասավանդման մեթոդները միտվա՞ծ են կրթական ելքային արդյունքների ձևավորմանը[5]:			
4.	Ուսումնառության մեթոդները միտվա՞ծ են կրթական			

[3]Այս հարցին պատասխանելու համար անհաժեշտ է ստուգել, թե տվյալ առարկայական ծրագրում դասախոսը նշե՞լ է, թե ՄԿԾ-ի ո՞ր վերջնարդյունքների ձևավորմանն է միտված տվյալ դասընթացը:

[4]Այս դեպքում անհրաժեշտ է ուշադիր լինել վերջնարդյունքները բնութագրող բայերի նկատմամբ. դրանք որոշակի գործողություններ՞ են արտահայտում, թե՞ խիստ վերացական են:

[5]Առհասարակ մեթոդաբանությանը վերաբերող հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է հետևել, թե ծրագրում տարանջատվա՞ծ են արդյոք դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները, և այդ մեթոդների կիրառմամբ հնարավո՞ր է արդյոք ապահովել նշված վերջնարդյունքների ձևավորումը:

	ելքային արդյունքների ձևավորմանը:			
5.	Գնահատման մեթոդները միտվա՞ծ են կրթական ելքային արդյունքների ձևավորմանը:			
6.	Ծրագրում զետեղվա՞ծ են ուսանողի հանձնարարության կատարման չափանիշները[6]:			
7.	Ծրագրում ներառվա՞ծ է դասընթացի ընթացիկ գնահատման սանդղակը:			
8.	Նշվա՞ծ են դասընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները:			
9.	Նշվա՞ծ են ուսանողի անհատական աշխատանքի համար նախատեսված թեմաները[7]:			
10.	Հանձնարարվող գրականության ցանկը նորացվա՞ծ է[8]:			
11.	Քննական հարցաշարերը զետեղվա՞ծ են առարկայական ծրագրում[9]:			
12.	Առարկայական ծրագրի հավելվածում կա՞ն արդյոք գրավոր կամ բանավոր հարցման հարցաթերթիկների/թեստերի նմուշօրինակներ:			

Ամբիոնի անվանումը_____

Դասընթացի անվանումը_____

Առարկայական ծրագիրը կազմող դասախոսի անուն, ազգանուն_____
Գնահատում իրականացնող խմբի անդամների անուն, ազգանուն
Ստորագրությունը ----------

[6]Առարկայական ծրագրերում սովորաբար կատարման չափանիշները գնահատման հետ միասին նշվում են միևնույն սանդղակում (ռուբրիկ):
[7]Ուսանողը կրեդիտ է ստանում ոչ միայն լսարանային, այլև ինքնուրույն աշխատանքի համար, ուստի պետք է համակարգված լինի ոչ միայն նրա լսարանային աշխատանքի, այլ նաև ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը: Ծրագրում պետք է հստակ երևա, թե ի՞նչ թեմաներով ռեֆերատ, հետազոտական կամ վերլուծական աշխատանք է նախատեսվում տվյալ առարկայից:
[8]Պետք է հաշվի առնել, թե արդյոք ներառվա՞ծ են վերջին տարիների հրատարակությունները և համացանցային կայքէջերի հասցեներ:
[9]Պետք է ներառված լինեն ինչպես կիսամյակային քննությունների, այնպես էլ ստուգարքների և միջանկյալ քննությունների հարցաշարերը:

1.6. ԸՍՏ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Նպատակը

Ուսանողի մնացորդային գիտելիքների և կարողությունների ստուգման նպատակն է պարզել, թե առարկայի ավարտից որոշ ժամանակ անց ի՞նչ չափով են պահպանվել ուսանողի ստացած գիտելիքները՝ ՄԿԾ-ի ելքային արդյունքներին միտված լինելու տեսակետից:

Խնդիրները

Մնացորդային գիտելիքների պարբերաբար ստուգումը հնարավորություն կտա՝

- գնահատել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների նպատակային լինելը,
- հաջողության դեպքում ամրապնդել ստացված արդյունքները,
- ցածր արդյունքների դեպքում ուսուցման ընթացքում իրականացնել պատճառների համակողմանի ուսումնասիրություն, ինչը հնարավորություն կտա անհրաժեշտ շտկումների միջոցով բարելավել ուսումնական գործընթացը:

Մեթոդաբանությունը

Ուսանողի մնացորդային գիտելիքների և կարողությունների ստուգում կարող են անցկացնել ինչպես դասախոսները, այնպես էլ համալսարանի ուսումնական գործընթացը կազմակերպող և վերահսկող ստորաբաժանումները (ամբիոններ, ուսումնական վարչություն, որակի ապահովման վարչություն և այլն):

Մնացորդային գիտելիքների և կարողությունների ստուգման համար որպես թիրախային խումբ կարող է լինել ինչպես ամբողջ կուրսը, այնպես էլ պատահական կամ նպատակային ընտրությամբ խմբեր: Նպատակային ընտրության դեպքում գնահատվում են առանձին ուսանողներ, որոնց ստացված ցուցանիշները համեմատվում են առարկայի ավարտից անմիջապես հետո ստացված ցուցանիշի հետ: Կախված դրված նպատակից՝ որպես թիրախային խումբ կարող են ընտրվել տարբեր առաջադիմություն ունեցող ուսանողներ կամ միայն բարձր առաջադիմություն ունեցողները:

Մնացորդային գիտելիքների և կարողությունների ստուգման ձևը կախված է առարկայի առանձնահատկություններից:

Ըստ ՄԿԾ ելքային արդյունքների՝ ուսանողների մնացորդային գիտելիքների և կարողությունների ստուգման ձևաչափ

Առարկայի անվանումը	Կոմպետենցիա	Որքան ժամանակ է անցել դասընթացի ավարտից հետո	Առարկայի ամփոփիչ գնահատականը դասընթացի ավարտից անմիջապես հետո	Առարկայի մնացորդային գիտելիքների և կարողությունների գնահատականները
	Գիտելիք			
	Կարողություն և հմտություն			
Առարկայի անվանումը	Կոմպետենցիա	Որքան ժամանակ է անցել դասընթացի ավարտից հետո	Առարկայի ամփոփիչ գնահատականը դասընթացի ավարտից անմիջապես հետո	Առարկայի մնացորդային գիտելիքների և կարողությունների գնահատականները
	Գիտելիք			
	Կարողություն և հմտություն			
Առարկայի անվանումը	Կոմպետենցիա	Որքան ժամանակ է անցել դասընթացի ավարտից հետո	Առարկայի ամփոփիչ գնահատականը դասընթացի ավարտից անմիջապես հետո	Առարկայի մնացորդային գիտելիքների և կարողությունների գնահատականները
	Գիտելիք			
	Կարողություն			

	և հմտություն			
Առարկայի անվանումը	Կոմպետենցիա	Որքան ժամանակ է անցել դասընթացի ավարտից հետո	Առարկայի ամփոփիչ գնահատականը դասընթացի ավարտից անմիջապես հետո	Առարկայի մնացորդային գիտելիքների և կարողությունների գնահատականները
	Գիտելիք			
	Կարողություն և հմտություն			

1.7.ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Նպատակը և խնդիրները

Հյուսիսային համալսարանում ռազմավարական ծրագրի համապատասխան նախատեսվում է պարբերաբար անցկացնել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում: Սույն ձևաչափի նպատակն է ապահովել այդ գործընթացի արդյունավետությունը, բացահայտել վերապատրաստման ծրագրերում առկա թերությունները, վերհանել դասախոսների կարիքները:

Մշտադիտարկման տեսակը

Մշտադիտարկումը կարող է իրականացվել երկու տարբերակով՝ մի դեպքում՝ արտաքին փորձագետի կողմից նախապես մշակված ծրագրի համապատասխան, մյուս դեպքում՝ ներքին շահակիցների կողմից տրվող ինքնագնահատականով, որի նպատակը սոցիալ-մասնագիտական, անհատական-անձնային մակարդակներում դասախոսների վերապատրաստման դասընթացների արդյունավետության՝ որպես կրթության որակի բարձրացման միջոցի գնահատումն է:

Մշտադիտարկման փուլերը	**Մշտադիտարկման փուլի նկարագիրը**
Մշտադիտարկման աշխատանքային խմբի ձևավորում	Մշտադիտարկումն իրականացնելու նպատակով ձևավորել աշխատանքային խումբ (նշել կազմը):
Մշտադիտարկման նպատակների հստակեցում	Մշտադիտարկման վերջնանպատակը սոցիալ-մասնագիտական, անհատական-անձնային մակարդակներում դասախոսների վերապատրաստման դասընթացների արդյունավետության՝ որպես կրթության որակի բարձրացման միջոցի գնահատումն է:
Մշտադիտարկման կազմակերպման ձևերը	Նախատեսվում է մշտադիտարկման ձևերից կիրառել նախնական, ընթացիկ և վերջնական ձևերը:

Մշտադիտարկման խնդիրները	• **Նախնական մշտադիտարկման** հիմնական խնդիրը մասնակիցների անհատական պահանջմունքների ու կարիքների վերհանումն է, որն անհրաժեշտ է վերապատրաստման դասընթացների, սեմինարների բովանդակությունն ու ծավալը որոշելու հարցում, ինչպես նաև վերապատրաստվողների մասնակցության դրդապատճառները հստակեցնելն է: • **Ընթացիկ մշտադիտարկման** հիմնական խնդիրն է պարզել ունկնդիրների բավարարվածությունը սեմինարների ընթացքից: • **Վերջնական մշտադիտարկման** հիմնական խնդիրը ուսումնական գործընթացի որակի և արդյունավետության գնահատումն է:
Մշտադիտարկման օբյեկտը	Որպես մշտադիտարկման օբյեկտ ծառայելու են՝ • ուսուցման գործընթացի կազմակերպումը, • ուսուցման բովանդակությունը (ուսումնական նյութի ծավալը, գիտելիքների կիրառական արժեքը և նորարարական աստիճանը), • ուսուցման գործընթացի ծավալումը (դասավանդման մակարդակը, շարադրանքի մատչելիությունը, ուսուցման արդյունավետությունը, ուսուցման նոր տեխնոլոգիաների կիրառումը, պարապմունքների տեխնիկական հագեցվածությունը), • հարաբերությունների համակարգը (վերապատրաստող-ունկնդիր, ունկնդիր-ունկնդիր):
Մշտադիտարկման կարգավիճակը	Մշտադիտարկումը նախատեսվում է անցկացնել պարբերաբար:
Մշտադիտարկման մեթոդաբանությունը, գործիքակազմը	Տեղեկատվության հավաքագրման, մշակման և վերլուծության նպատակով մշակված են հարցաշարեր հարցման և

	գնահատման, հարցազրույցների և ֆոկուս- խմբերի համար:

Միջոցառումների պլան

Սեմինարների կազմակերպման փուլերը	Իրականացվող աշխատանքի բովանդակությունը	Աշխատանքի պատասխանատուն	Մշտադիտարկման գործիքակազմ, մեխանիզմներ	Կատարված աշխատանքի մասին նշում և արդյունքների համառոտ ներկայացում
Նախնական դիտարկում	Հարցումների անցկացում՝ վերապատրաստվողների կարիքների վերհանման նպատակով	Որակի ապահովման վարչություն	Ֆոկուս-խմբերի անցկացում	
Նախապատրաստական փուլ	Թեմայի, նպատակների և խնդիրների հստակեցում և ներկայացում, բովանդակային նյութին համապատասխան ռազմավարության և մեթոդների մշակում՝ ժամանակի և մասնակիցների քանակի հաշվառումով, աշխատանքի մանրակրկիտ պլանի մշակում և ներկայացում, սեմինարների անցկացման աշխատակարգի և ժամանակացույցի որոշում	Վերապատրաստող խումբ	Կլոր սեղան-քննարկումներ, որոնց ընթացքում որպես անկյունաքար են ընդունվում նախնական դիտարկման արդյունքները	
Սեմինարի ընթացքը	Բացատրություն Ցուցադրում	Վերապատրաստող անձ	Հարցաթերթիկներ,	

	Փորձարկում Վարժանք		դասալսումնե ր	
Սեմինարից հետո	Գնահատում Ամփոփում	Վերապատր աստող անձ	Հարցաթերթիկ ներ, ֆոկուս-խմբերի անցկացում	

1.8.ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Նպատակը

ՊԴ կազմին ներկայացվող ՄԿԾ-ի պահանջներին համապատասխան դասախոսների վերապատրաստման գործընթացի անընդհատ կատարելագործում, վերապատրաստվողների հետ հետադարձ կապի ապահովում, նրանց կարիքների վերհանում:

Խնդիրները

- Պարզել վերապատրաստողների և վերապատրաստվողների միջև հետադարձ կապի առկայությունը,
- պարզել վերապատրաստվողների կարիքները և սպասելիքները,
- պարզել, թե արդյո՞ք փոխանցվել է տեղեկատվություն մանկավարժության և հարակից գիտությունների ոլորտում նորարարական գաղափարներ վերաբերյալ,
- պարզել դասախոսների վերապատրաստման ուսումնամեթոդական հագեցվածությունը,
- պարզել դասախոսների վերապատրաստման տեխնիկական հագեցվածությունը,
- պարզել վերապատրաստման ընթացքում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը,
- գնահատել վերապատրաստման որակը:

Հարցաշարի բովանդակությունը

Հարցաշարը բաղկացած է 2 մասից, որտեղ կիրառված են փակ և բաց հարցեր:

Առաջին մասում մասնակիցները պետք է նշեն անունն ու ազգանունը, ամբիոնը, պաշտոնը, դասավանդվող առարկաները, ի՞նչ գծով են վերապատրաստվել: Նրանք, ըստ էության, վերապատրաստման բազմագործոն գնահատում են իրականացնում:

Հարցաշարի **երկրորդ մասը** նախատեսված է առաջարկությունների համար:

Հարցաշարի կիրարկման հաճախականությունը՝ յուրաքանչյուր վերապատրաստումից հետո:

Վերապատրաստման գործընթացի գնահատման հարցաշար

Մաս 1

1.1 Վերապատրաստվողի անուն, ազգանուն: _____

1.2 Խնդրում ենք նշել Ձեր ամբիոնը:

_____

1.3 Խնդրում ենք նշել Ձեր պաշտոնը:

_____

1.4 Խնդրում ենք նշել՝ ո՞ր թեմայով եք վերապատրաստվել:

_____

1.5 Խնդրում ենք նշել Ձեր կողմից դասավանդվող առարկաները:

_____

_____

_____

1.6 Ապահովվե՞լ է արդյոք հետադարձ կապը վերապատրաստողի հետ:

- այո
- ոչ
- մասամբ

1.7 Դասընթացի իրականացման ընթացքում նյութատեխնիկական հագեցվածությունը բավարա՞ր է եղել:

- այո
- ոչ
- մասամբ

1.8 Արդյունավե՞տ էր արդյոք ուսուցման ժամկետը:

- այո

- ոչ
- մասամբ

1.9 Ինչպիսի՞ն է եղել ուսումնական խմբում սոցիալ-հոգեբանական մթնոլորտը:

- դրական
- բացասական

1.10 Դասընթացների կազմակերպչական ձևերը քննարկվե՞լ են արդյոք մասնակիցների հետ:

- այո
- ոչ
- մասամբ

1.11 Վերապատրաստողները մշակե՞լ են արդյոք համապատասխան մեթոդներ՝ հաշվի առնելով մեծահասակների կրթության առանձնահատկությունները:

- այո
- ոչ
- մասամբ

1.12 Ուսուցումն ունեցե՞լ է արդյոք գործնական ուղղվածություն:

- այո
- ոչ
- մասամբ

Մաս 2

1.13 Լրացուցիչ առաջարկներ և ցանկություններ

_____

_____

_____

1.9.ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ՝ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՓՈԽԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Փոխգնահատման նպատակը

Դասախոսների կողմից միմյանց մեթոդների փոխգնահատումը նպատակ ունի պարզելու, թե նրանց մշակած և կիրառած մեթոդաբանությունը որքանո՞վ է միտված դասախոսի կողմից նախանշված ելքային արդյունքների ձևավորմանը: Այն հնարավորություն կընձեռի լավագույն փորձի տարածման միջոցով բարելավել համալսարանում դասավանդման որակը ու կանխել դասավանդման գործընթացում հնարավոր անհաջողությունները:

Հայտնի է, որ համալսարանը որդեգրել է ուսանողակենտրոն ուսուցում կազմակերպելու մոտեցումը, և նման փոխգնահատում իրականացնելով՝ հնարավոր կլինի պարզել, թե որքանո՞վ են կիրառվող մեթոդները նպաստում ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների՝ դասախոսների փոխգնահատման ձևաչափ

Մասնագիտությունը_____

Կուրսը_____

Առարկան_____

Թեման_____

Դասախոսի անուն, ազգանունը_____

Դասալսման նպատակը_____

_____

_____

Ուսանողների թիվը_____

Դասի կահավորումը[10]

_____

_____

Դասի ընթացքում կիրառված մեթոդները

Նոր նյութի հաղորդման համար կիրառված մեթոդները

_____

_____

_____

Նյութի յուրացման համար կիրառված մեթոդները

_____

_____

_____

Հարցման ձևերը և գնահատման մեթոդները

_____

_____

_____

Դասի ՈՒԹՀՎ (SWOT)[11] վերլուծություն

Դասի ուժեղ կողմեր	Դասի թույլ կողմեր

[10]Դասի համար անհրաժեշտ էլեկտրոնային և տեխնիկական միջոցներ, դիդակտիկ նյութեր և այլն:

[11] SWOT վերլուծությունը կազմակերպության ներքին ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև արտաքին գործոնների՝ հնարավորությունների և վտանգների ուսումնասիրությունն է: Արտաքին գործոնների՝ վտանգների և հնարավորությունների ընկալումը՝ զուգակցված ուժեղ և թույլ կողմերի ներքին ուսումնասիրությամբ, թույլ է տալիս հաստատությանը ճիշտ գնահատել իրադրությունը և ձևավորել իր զարգացման ուղիներ:

Հնարավորություններ	Արտաքին վտանգներ

Հետևություններ

_____

_____

_____

Դասը լսեց

_____

1.10. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարցման նպատակը

Վերհանել ուսանողների կարծիքը ուսուցման որակի վերաբերյալ:

Հարցման խնդիրները

- Պարզել դասախոսների կիրառած դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները,
- ստուգել, թե որքանով են դրանք նպաստում ՄԿԾ-ի յուրացմանը, ուսանողների մոտ անհրաժեշտ կոմպետենցիաների ձևավորմանը,
- անուղղակիորեն վերհանել դասախոսների վերապատրաստման կարիքները:

Հարցաշարի կառուցվածքը

Հարցաշարը կազմված է փակ հարցերից: Դրանք համապատասխանում են բուհի առաքելությանը, ռազմավարական նպատակներին և որակի ապահովման հայեցակարգին: Հարցերը գնահատվում են 5 բալանոց համակարգով, որտեղ 1-ը նշվում է ամենացածր ցուցանիշի, իսկ 5-ը՝ ամենաբարձրի դեպքում: Հարցերը բաժանվում են 3 խմբերի՝

- դասավանդմանը վերաբերող հարցեր/ներառում է դասավանդման կազմակերպչական և որակական կողմերը/,
- ուսումնառությանը վերաբերող հարցեր /հնարավորություն են տալիս պարզելու, թե դասախոսը ուսանողին սովորեցնո՞ւմ է ինչպես ինքնուրույն սովորել, բանավիճել, պաշտպանել սեփական կարծիքը/,
- գնահատմանը վերաբերող հարցեր/համապատասխանո՞ւմ են արդյոք գնահատման մեթոդները առարկայի վերջնարդյունքների ձևավորմանը, անաչա՞ռ են, բազմագործո՞ն, ուսանողին մասնակի՞ց են դարձնում գնահատմանը:

Ուսանողների կողմից ուսուցման որակի գնահատման հարցաթերթիկ

1 - չի կիրառվում, 2 - մասամբ է կիրառվում, 3-հաճախ է կիրառվում, 4 - միշտ է կիրառվում		առարկայի անվանումը		առարկայի անվանումը		առարկայի անվանումը		առարկայի անվանումը		առարկայի անվանումը		առարկայի անվանումը		առարկայի անվանումը		առարկայի անվանումը	
1	Դասընթացի սկզբում ուսանողին տրվում է արդյոք առարկայի ուսումնամեթոդական փաթեթը	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
2	Դասընթացի սկզբում ներկայացնում է դասավանդած առարկայի վերջնարդյունքները	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
3	Բացատրում է՝ ինչպես տեսական գիտելիքը կիրառել մասնագիտական ոլորտում	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
4	Մատուցվող նյութը ներառում է գիտության վերջին ձեռքբերումները	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
5	Դասավանդման մեթոդները նպաստում են ուսանողների միջև համագործակցության զարգացմանը (զույգերով և խմբային աշխատանք)	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
6	Կազմակերպում է քննարկում կամ բանավեճ դասերի ընթացքում	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
7	Ուսանողին մղում է ինքնուրույն, հետազոտական, վերլուծական աշխատանքի	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
8	Ուսանողին ծանոթացնում է առարկան յուրացնելու մեթոդներին	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
9	Անհատական աշխատանք է տանում նյութը դժվար յուրացնող ուսանողների հետ	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
10	Գնահատում է ուսանողին անկողմնակալ, նախապես ներկայացված չափանիշներով	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
11	Գնահատում է ուսանողի ձեռք բերված գիտելիքները	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
12	Գնահատում է ուսանողի ձեռք բերված կարողություններն ու հմտությունները	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
13	Դասախոսի գնահատման մեխանիզմները նպաստում են ուսանողի առաջադիմության բարձրացմանը	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④
14	Ուսանողներին ներգրավում է գնահատման գործընթացին	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④	① ③	② ④

1.11. ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ֆոկուս-խումբը տեղեկատվության ստացման որակական հետազոտության տեսակ է: Այս մեթոդը կիրառվում է շահակիցների դիրքորոշումների և կարծիքների բացահայտման, կարիքների վերհանման նպատակով: Ֆոկուս-խմբեր անցկացնելով՝ մենք փորձում ենք գտնել «ինչու» հարցի պատասխանները: Ցանկալի է, որ ֆոկուս-խումբ անցկացնելիս վարողի հետ լինի նաև օգնական:

Ֆոկուս-խմբի անցկացման առավելությունները

- Հետազոտության այս մեթոդը առավել «տնտեսող» է. լրացուցիչ նյութական ռեսուրսների գործածման կարիք չկա,
- այն հնարավորություն է տալիս խնայել ժամանակը,
- որպես որակական հետազոտության տեսակ՝ ֆոկուս-խումբը հնարավորություն է տալիս ուղղակիորեն դիտարկելու թիրախային լսարանը:

Ֆոկուս-խմբի անցկացման հաջողությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝

- թիրախային լսարանի վստահության ձեռքբերում, անկեղծ և անկաշկանդ մթնոլորտի ստեղծում,
- հարգալից վերաբերմունք նույնիսկ անընդունելի կարծիքների նկատմամբ,
- ֆոկուս-խմբի նպատակին համապատասխան հարցերի նախնական մշակում,
- ինչեցվող հարցերի հստակություն,
- Ստուգող հարցերի առկայություն:

Ֆոկուս-խմբի վարողը պետք է կարողանա ակտիվ լսել հարցվողներին և հընթացս վերլուծել նրանց ասածները: Դա կարևոր է, քանի որ երբեմն ֆոկուս-խմբի ընթացքում կարող են նոր հարցեր առաջանալ, որոնք նախապես ներառված չեն եղել հարցաշարում, բայց քննարկման ընթացքում ծագել է դրանց կարիքը: Վարողի ճկունությունից է կախված, թե այդ պայմաններում որքանով կկարողանա ճիշտ ձևակերպել հարցը:

Ֆոկուս-խմբային քննարկման մեթոդը առավել լայնորեն կիրառվում է հետևյալ նպատակներով՝

- եթե շահակիցների հարցման ընթացքում պարզաբանման կարիք ունեցող խնդիրներ են առաջացել,
- եթե քանակական հարցումից առաջ հարցաշարի հստակեցման կարիք կա, քանի որ ֆոկուս-խումբը նպաստում է հարցերի ճիշտ ձևակերպմանը,
- բուհի կառավարման կամ որևէ մասնավոր խնդրի համար նոր և արժեքավոր մտքերի, նոր գաղափարների հավաքագրման կարիք կա,
- եթե թիրախային խմբի կարիքների վերհանումը կնպաստի այս կամ այն ծրագրի մշակմանը:

Ֆոկուս-խմբային հետազոտության անցկացման վերաբերյալ մի քանի խորհուրդներ

- Նախապես հստակ պլանավորեք ֆոկուս-խմբային քննարկումը,
- ֆոկուս-խմբի մասնակիցների հստակ քանակը պետք է լինի 6-12 հոգի,
- ֆոկուս-խմբի մասնակիցների ներկայացուցչության ապահովում, ինչը կախված է ֆոկուս-խմբի նպատակից,
- պետք չէ բավարարվել մեկ ֆոկուս-խմբով, ցանկալի է իրականացնել մի քանի խմբային քննարկումներ՝ արդյունքների արժանահավատությունը ստուգելու համար:

Ֆոկուս-խմբային քննարկման ուղեցույցի/հարցաշարի մշակում

Անհրաժեշտ է որոշել ֆոկուս-խմբի նպատակը և խնդիրները՝ դրանց հիման վրա կազմելով քննարկման հարցաշարը: Այն հետազոտության կարևոր մասն է կազմում, քանի որ տեղեկատվության ստացման անհրաժեշտ գործիք է: Եթե հարցաշարը ճիշտ է կազմված, ապա ֆոկուս-խմբի անցկացումը արդյունավետ կլինի:

Անհրաժեշտ է քննարկումը վարել ուղեցույցի բոլոր թեմաների շուրջ: Հարցաշարի ծավալը չպետք է մեծ լինի, որպեսզի չհոգնեցնի և չձանձրացնի մասնակիցներին:

Հարցաշարը կազմելիս կարելի է գնալ ընդհանուր հարցերից մասնավորի կամ հակառակը: Երբեմն նույն հետազոտության շրջանակում անհրաժեշտություն է զգացվում

փոփոխել հարցաշարը ըստ թիրախային խմբերի: Օրինակ, տարբեր մասնագիտությունների ուսանողների համար, բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների համար կարելի է մշակել տարբեր կամ որոշ թեմաներով իրարից տարբերվող հարցաշարեր:

Ֆոկուս-խմբային քննարկման համար անհրաժեշտ է ունենալ առանձնացված վայր և ձայնագրման սարք:

Ֆոկուս-խմբային քննարկման փուլերը

1. Ֆոկուս-խմբային քննարկումը սկսում է կարճ նախաբանով: Դա անհրաժեշտ է մասնակիցներին հոգեբանորեն նախապատրաստելու, աշխատանքային կանոնները խմբին ներկայացնելու (խոսել առանձին-առանձին, բանավիճել առանց մեկը մյուսին ընդհատելու) և մասնակիցների հետ ընկերական հարաբերություններ հաստատելու համար:
2. Քննարկում, որի ընթացքում պետք է խրախուսել տարակարծությունը:
3. Ամփոփում:

Ֆոկուս-խմբային քննարկման արդյունքների վերլուծություն և ներկայացում

Քննարկումներն իրականացնելուց, տվյալները ստանալուց հետո պետք է ամփոփել արդյունքները և վերլուծություն կատարել: Վերլուծության մեջ անհրաժեշտ է գրել հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության մեթոդաբանությունը, հարցաշարը և այլն: Ֆոկուս-խմբի ձայնագրությունը անհրաժեշտ է այնուհետև սղագրել և վերլուծել: Վերլուծության արդյունքները պետք է ընդգրկվեն հաշվետվության մեջ:

1.12.ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԵՐԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿՆԵՐ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԻ ՀԱՐՑԱՇԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր ձևակերպումներն է հնարավոր ներառել ուսանողների կողմից ուսուցման որակի գնահատման հարցաթերթիկում, առաջանում է ֆոկուս-խմբի անհրաժեշտություն, որի նպատակն է պարզել հարցման ընթացքում չհստակեցված հիմնախնդիրները:

1. Դուք ինչպե՞ս եք ծանոթացել ուսուցանվող դասընթացների վերջնարդյունքներին:
2. Գիտե՞ք դասընթացի կարևորությունը ընդհանուր մասնագիտական ծրագրի համատեքստում: Ո՞րն է եղել Ձեր տեղեկատվության աղբյուրը:
3. Լսարանում բոլո՞րն են մասնակցում կազմակերպվող բանավեճերին և քննարկումներին: Դրանց կազմակերպումը նպաստո՞ւմ է արդյոք նյութի յուրացմանը:
4. Դասախոսն ընդգրկե՞լ է Ձեզ հետազոտական կամ վերլուծական որևէ աշխատանքում: Դա ազդե՞լ է ձեր գնահատականի ձևավորման վրա:
5. Դասախոսը բացատրո՞ւմ է, թե ինչ կապ ունի իր դասավանդած առարկան Ձեր ընտրած մասնագիտության հետ:
6. Ուսանողին ծանոթացնո՞ւմ է դասընթացը յուրացնելու մեթոդներին:
7. Ի՞նչ աշխատանք է տարվում նյութը դժվար յուրացնող ուսանողների հետ: Պարզաբանեք, խնդրեմ:

ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԻ ՀԱՐՑԱՇԱՐ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր ձևակերպումներն է հնարավոր ներկայացնել ուսանողների կողմից ուսուցման որակի գնահատման հարցաթերթիկում, առաջանում է ֆոկուս-խմբի անհրաժեշտություն, որի նպատակն է պարզել հարցման ընթացքում չհստակեցված հիմնախնդիրները: Հարցաշարը նախատեսված է ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների՝ ռեսուրսներով բավարավածությունը ստուգելու համար:

1. Լսարանների կահավորումը համապատասխանո՞ւմ է արդյոք փոխներգործուն մեթոդներով աշխատելուն:
2. Համալսարանում կա՞ն լսարաններ՝ նախատեսված խմբային աշխատանքների համար:
3. Մասնագիտության էլեկտրոնային ռեսուրսների բազան համապատասխանու՞մ է արդյոք ուսումնառության պահանջներին:
4. Համալսարանի գրադարանից մասնագիտական գրականություն կարողանո՞ւմ եք ձեռք բերել:
5. Գո՞հ եք արդյոք էլեկտրոնային գրադարանից:
6. Ի՞նչ փոփոխություններ կառաջարկեիք:

ՖՈԿՈՒՍ- ԽՄԲԻ ՀԱՐՑԱՇԱՐ

ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարցաշարի նպատակն է պարզել, թե արդյո՞ք դասախոսների կողմից կիրառված ուսանողների գնահատման համակարգը նպաստում է դասավանդվող առարկաների ելքային վերջնարդյունքների ձևավորմանը:

Հարցաշար

1. Գո՞հ եք արդյոք Հյուսիսային համալսարանում գործող գնահատման համակարգից:
2. Ուսանողը գնահատվում է միայն դասը վերարտադրելո՞ւ համար, թե՞ խրախուսվում է նաև վերլուծական և ինքնուրույն աշխատանքը:
3. Գնահատումը նպաստում է նոր գիտելիքներ ձեռք բերելո՞ւն, թե՞ միայն գնահատական ստանալու միջոց է:
4. Գնահատվում եք միայն գիտելիքի՞ համար, թե՞ հաշվի են առնվում նաև Ձեր կողմից ձեռքբերված կարողություններն ու հմտությունները:
5. Ներկայացրեք, խնդրեմ, թե գնահատման ի՞նչ մեթոդներ են կիրառվել Ձեր դասախոսների կողմից:
6. Գնահատեք դրանց արդյունավետությունը դասավանդվող նյութի յուրացման տեսանկյունից:
7. Դասախոսը Ձեզ մասնակից դարձնո՞ւմ է դասավանդվող առարկայից ձեռքբերված գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման չափանիշների մշակման աշխատանքներին:

1.13.ԿԱԴՐԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

Ելնելով դասախոսների մասնագիտական կոմպետենցիաների կատարելագործման և համալսարանի զարգացման գործընթացների փոխկապակցվածությունից՝ մասնագիտական կոմպետենցիաների կատարելագործմամբ Հյուսիսային համալսարանում, ըստ առանձին ՄԿԾ-ների, մշակվել է ՊԴ կազմին ներկայացվող պահանջների համախումբ՝ կրթության կազմակերպման նորացվող պահանջների հաշվառումով: Այս ձևաթուղթը նպատակ ունի պարզելու պրոֆեսորադասախոսական կազմի իրական վիճակը և այն համեմատելու ՄԿԾ-ում նախատեսվածի հետ:

ՊԴ կազմին ներկայացվող պահանջները՝ ըստ ՄԿԾ-ի	Կադրային ներուժի վիճակը բուհում					
	Գիտական աստիճան	Գիտական կոչում	Տվյալ մասնագիտության ոլորտում աշխատանքի փորձ	Օտար լեզուների իմացություն	Համակարգչային ծրագրերի իմացություն	Այլ
Գիտական աստիճան						
Գիտական կոչում						
Տվյալ մասնագիտության ոլորտում աշխատանքի փորձ						
Օտար լեզուների իմացություն						
Համակարգչային ծրագրերի իմացություն						
Այլ						

1.14.ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Ամբիոնի անվանումը ----------

Ամբիոնի աշխատակցի աշխատանքային բնութագիր

Ա.Ա.Հ.

Ծննդյան ամսաթիվը և տեղը

Գիտական աստիճան_____

Գիտական կոչում_____

Աշխատանքային ստաժը (ընդհանուր) _____ _____

Աշխատանքային ստաժը Հյուսիսային համալսարանում _____

1. Ուսումնադաստիարակչական աշխատանք

Դասախոսի ուսումնական ծանրաբեռնվածության վերաբերյալ նյութեր

դասաժամեր /տարեկան ծավ/	պրակտիկայի ղեկավարում /պրակտիկայի կայր այցելությունների քանակը/	ղեկավարած կուրսային աշխատանքների քանակը	ղեկավարած ավարտական աշխատանքների կամ մագիստրական թեզերի քանակը	ուսանողներին անհատական խորհրդատվության տրամադրում, /նշել՝ ինչ աշխատանք/	ուսանողների հետազոտական միջոցառումների կազմակերպում /մի-ջոցառումների անվանումը/

2. Ուսումնամեթոդական աշխատանք

№	Դասավանդվող առարկաների անվանում	Առարկայական ծրագրի առկայություն /նշել ամբիոնի կողմից հաստատման ամսաթիվը/		Էլեկտրոնային դասախոսությունների կամ այլ նյութերի առկայություն /նշել՝ ինչ նյութեր. օրինակ, դիդակտիկ նյութեր/	Ուսուցման նոր տեխնոլոգիաների կիրառում, ա.թ. տեսաձայնային /աուդիովիզուալ/ միջոցների
		տպված	էլեկտր.		
1					
2					
3					

Ուսումնամեթոդական աշխատանքներ վերջին 3 տարիների ընթացքում

№	Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, /անվանումը, հրատարակման ամսաթիվը, էջաքանակը, պատրաստ է հրա-տարակման, նշել էջաքանակը/	Ուսումնամեթոդական հոդվածներ /վերնագիրը, որտեղ է տպագրվել և երբ/	Մասնակցություն դասագրքերի խմբագրմանը կամ այլ ուսումնամեթոդական աշխատանքներ	Մասնակցություն առարկայական ծրագրի նորացման աշխատանքներին

Տվյալներ դասախոսների փոխանակման ծրագրերի մասնակցության վերաբերյալ /նշել մանրամասները/

_____
_____
_____
_____
_____
_____

3. Կազմակերպչական-մեթոդական աշխատանք

Դասախոսի մասնակցությունը համալսարանի ստորաբա-ժանումների աշխատանքին	Մասնակցել է բոլոր նիստերին	Հիմնականում մասնակցել է	Չի մասնակցել կամ ունի շատ բացթողումներ
Գիտական խորհրդի նիստերին /նշումը կատարել, եթե ԳԽ անդամ է/			
Ֆակուլտետային խորհուրդների նիստերին /նշումը կատարել, եթե ՖԽ անդամ է/			
Ամբիոնի նիստերին			
Պրոֆեսորադասախոսական կազմի ժողովներին			

3.1. Այլ նշում /օրինակ, դասախոսը նորարարական առաջարկներ է ներկայացրել և այլն/:

_____
_____

3.2. Դասախոսի մասնակցությունը որակի ապահովման հանձնաժողովների աշխատանքին /լրացնում է որակի ապահովման վարչության պետը/

Մասնակցել է բոլոր նիստերին	Հիմնականում մասնակցել է	Չի մասնակցել կամ ունի շատ բացթողումներ

3.3. Դասախոսի մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին /լրացնում են պարապմունքավարները/

Դասախոսի մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին	Մասնակցել է բոլոր դասերին	Հիմնականում մասնակցել է	Չի մասնակցել կամ ունի շատ բացթողումներ
Համակարգչային գործ			
Օտար լեզու			
Կրթական բարեփոխումներ			

3.4. Դասախոսի մասնակցությունը որակավորման բարձրացման այլ ձևերին /նշել համապատասխան վանդակում/

Դոկտորանտուրա	Ասպիրանտուրա	Ստաժիրովկա	Սեմինարներ կամ դասընթացներ /նշել ժամաքանակը/	Կազմակերպությունը, անցկացման վայրը, ամսաթիվը

3.5. Դասախոսի մասնակցությունը լսարանից դուրս կազմակերպվող դասընթացներին / վերջին 3 տարվա ընթացքում/

Ծրագրի անվանումը	Ունկնդիրներ /նշել ովքեր են/	Ժամաքանակը	Մասնակցության ձևը

3.6. Գիտահետազոտական աշխատանքը վերջին 3 տարիների ընթացքում

№	Մենագրություններ, հրատարակման ամսաթիվ, տեղը, էջաքանակը, պատրաստ է	Գիտական հոդվածներ հայրենական և արտասահմանյան գիտական	Մասնակցություն դասագրքերի խմբագրմանը կամ այլ ուսումնամեթոդական աշխատանքներ	Մասնակցություն առարկայական ծրագրի նորացման աշխատանքներին

	հրատարակման, /նշել էջաքանակը/	ամսագրերում /վերնագիրը, որտեղ է տպագրվել և երբ/		

Մասնակցությունը դրամաշնորհային ծրագրերին /վերջին 3 տարվա ընթացքում/

	Դրամաշնորհային ծրագիրը	Ում կողմից է տրված	Կատարման ժամանակահատվածը	Ելքային արդյունքը

Մասնակցությունը գիտական խորհրդաժողովներին, սիմպոզիումներին, քննարկումներին

	Միջոցառման անվանումը	Կազմակերպիչը	Ամսաթիվը	Ելքային արդյունքը

Մասնակցությունը որպես փորձագետ ՀՀ ԿԳՆ կամ այլ գիտակրթական կառույցների աշխատանքին

	Կազմակերպության անունը	Կատարած կամ կատարվող աշխատանքը	Ամսաթիվը	Ելքային արդյունքը

Մագիստրական աշխատանքի, թեկնածուական կամ դոկտորական թեզի պաշտպանություն

Աշխատանքի բնույթը	Թեման	Պաշտպանության ամսաթիվը	Ելքային արդյունքը

Մագիստրական աշխատանքի, թեկնածուական կամ դոկտորական թեզի ընդդիմախոսություն

Կազմակերպությունը	Աշխատանքի բնույթը	Թեման	Գրախոսման տարեթիվը

Կարող եք ավելացնել տեղեկություններ Ձեր մասին, որոնք կարևոր եք համարում ատեստավորման համար _____

Դասախոսի՝ ուսանողների կատարած գնահատման միջին ցուցանիշը /վերջին 3 տարիներ/

2010-2011	2011-2012	2012-2013

Ամբիոնի վարիչ՝ / /

Ընդունման ամսաթիվ՝

Ատեսավորման հանձնաժողովին հանձնելու ամսաթիվ՝

2. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ 2-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գիտական աշխատանքը՝ որպես համալսարանի գործունեության առաջնահերթություն ուժեղացնելու, համալսարանում իրականացվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքները ակտիվացնելու, դրանց որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բուհում մշակվել են հետևյալ գործիքները՝

2.1. Հյուսիսային համալսարանում գիտական հետազոտությունների և նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթական կենտրոնի թեմատիկայի գնահատման ձևաչափ,
2.2. պլանավորված հետազոտությունների իրականացումը մշտադիտարկող ձևաչափ,
2.3. գիտության և նորարարության կենտրոնի հաշվետվությունները գնահատող ձևաչափ,
2.4. ասպիրանտուրա ընդունված հետազոտողների թվաքանակի շարժընթացի ձևաչափ,
2.5. հետազոտողների ֆոկուս-խմբի հարցաշար,
2.6. գիտահետազոտական ոլորտում արտաքին կապերի իրականացումը մշտադիտարկող ձևաչափ,
2.7. Հյուսիսային համալսարանի դասախոսի հաշվետվության ձևաչափ,
2.8. հետազոտությունների մեջ ընդգրկված՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների թվաքանակի շարժընթացի ձևաչափ:

2.1. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Ձևաչափի նպատակը

Բարձրացնել բուհում կատարվող հետազոտությունների որակը, հետևել ընտրված թեմաների արդիականությանն ու կիրառական նշանակությանը:

Ձևաչափի խնդիրները

- Ուժեղացնել ամբիոնների և հետազոտողների պատասխանատվությունը հետազոտական թեմաների ընտրությունը կատարելիս,
- խրախուսել նոր, չուսումնասիրված թեմաների ընտրությունը,

- կասեցնել բազմիցս ուսումնասիրված թեմաների հաստատման արատավոր պրակտիկան,
- խրախուսել կիրառական նշանակություն ունեցող թեմաների ընտրությունը,
- խրախուսել գիտության նորարարությունների ներդրումը կրթության ոլորտում:

Թեմայի վերնագիրը	Գիտխորհրդի կարծիքը հետևյալ հարցերի վերաբերյալ
Թեմայի արդիականությունն ու կարևորությունը	
Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը	
Ուսումնասիրությունից ակնկալվող գործնական կամ տեսական արդյունքները	

2.2.ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՁԵՎԱՉԱՓ

Ձևաչափի նպատակը

Մշտադիտարկել հետազոտությունների կատարման ընթացքը՝ բարձրացնելով պլանավորված թեմաների կատարման ցուցանիշը:

Դասախոսի կողմից պլանավորված աշխատանքը	1-ին կիսամյակ/ հաշվետվության հիման վրա կատարման աստիճանի մասին	2-րդ կիսամյակ/ հաշվետվության հիման վրա կատարման աստիճանի մասին
Նյութերի հավաքում		
Նյութերի համակարգում		
Թեմայի վերաբերյալ հոդվածների հրատարակում		
Թեմայի ամբողջական շարադրանքի վիճակը		

2.3.ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Ձևաչափի նպատակն է հաշվետվողականության մշակույթի ձևավորումը, կենտրոնի պատասխանատվության բարձրացումը, պլանավորված աշխատանքների իրականացումը:

Կենտրոնի կողմից պլանավորված	Ամբիոնների կողմից	Գիտխորհրդի կողմից քննարկման	Արտաքին փորձագետների կամ

հետազոտությունները	քննարկման առկայություն և դրա արդյունքները	առկայություն և դրա արդյունքները	գործատուների կողմից գնահատման առկայություն և դրա արդյունքները

2.4.ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ՁԵՎԱՉԱՓ

Չհաչափի նպատակն է վերլուծության համար անընդհատ և թարմ տվյալներ ունենալ ասպիրանտուրայի գործունեության վերաբերյալ, դիտարկել հետազոտողների թվի շարժընթացը, հաշվարկել հետազոտություն կատարողների «հաջողության գործակիցը» (պաշտպանածների տեսակարար կշիռը ասպիրանտուրա ավարտածների թվում):

Տարեթիվ	Մասնագիտությունը	Ուսանողների քանակը	Պաշտպանած հետազոտողների քանակը
2014			
2015			
2016			
2017			

2.5.ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԻ ՀԱՐՑԱՇԱՐ

Ֆոկուս-խմբի նպատակը

Ստացված տվյալների վերլուծության հիման վրա բարելավել ասպիրանտուրայում ուսման որակը:

Ֆոկուս-խմբի խնդիրները

- Վերհանել ասպիրանտների կարիքները,
- վերհանել ասպիրանտուրայում ուսուցման ընթացքում ծագող խնդիրները /ՊԴ կազմի որակը, նյութատեխնիկական և ուսումնամեթոդական ռեսուրսների առկայությունը/,
- ստեղծել «առաջարկությունների բանկ», որը կնպաստի ասպիրանտուրայի աշխատանքի բարելավմանը:

Ֆոկուս-խմբի հարցաշար

1. Դուք սովորում եք Հյուսիսային համալսարանի ասպիրանտուրայում: Որքանո՞վ են արդարացվել Ձեր սպասումները ասպիրանտուրայից:
2. Գո՞հ եք արդյոք դասավանդող պրոֆեսորադասախոսական կազմից:
3. Ինչպե՞ս եք ընտրել Ձեր հետազոտության թեման:
4. Արդյունավե՞տ եք համարում արդյոք Ձեր հետազոտական աշխատանքի՝ ղեկավարի կողմից ուղղորդումը:
5. Բուհի ռեսուրսային բազան բավարարու՞մ է արդյոք ասպիրանտական կրթություն ստանալուն:
6. Ի՞նչ դժգոհություններ ունեք:
7. Ի՞նչ առաջարկություններ ունեք ասպիրանտական կրթությունը բարելավելու ուղղությամբ:

2.6. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Ձևաչափի նպատակն է մշտադիտարկել գիտական հրատարակություններում համալսարանի դասախոսների հրատարակած աշխատանքների շարժընթացը:

Ձևաչափը կազմված է երկու մասից: Ձևաչափի առաջին մասը կարևոր նյութ կտրամադրի հետազոտությունների թվի, հրապարակման աշխարհագրության վերաբերյալ, ինչը կնպաստի բուհի արտաքին կապերի բարելավմանը:

Ձևաչափի երկրորդ մասը հնարավորություն կտա վերլուծել համագործակցության ոլորտները, գործընկերների հետ կապի ապահովումը, դիտարկել արդյունքները: Այն բուհի որակի ապահովման վարչությանը հնարավորություն կտա բարելավման առաջարկներ անել բուհի արտաքին կապերի զարգացման ուղղությամբ:

1.Գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումները

	Հոդվածների քանակը	Որ ամսագրերում է հրատարակվել	Ա.թ.՝ վարկանիշ ունեցող	Որ երկրների ամսագրերում
2014				
2015				
2016				

Գիտահետազոտական ոլորտում արտաքին գործընկերների թվաքանակի շարժընթացի ձևաչափ

Գիտահետազոտական ոլորտում արտաքին գործընկերների հետ համագործակցության ոլորտը	Երկիրը	Բուհը կամ գիտական այլ հիմնարկ	Մասնակիցների քանակը	Արդյունքը
Համագործակցության պայմանագրի առկայություն				
Հետազոտական ծրագրերի համատեղ հաստատում				
Միմյանց գիտխորհուրդներում մասնակցություն				

Գիտական կոնֆերանսներին մասնակցություն				
Հետազոտական հոդվածների կամ աշխատությունների փոխանակում				

2.7.ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԴԱՍԱԽՈՍԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Դասախոսի հաշվետվության ձևաչափի նպատակն է բարձրացնել դասախոսների պատասխանատվությունը պլանավորած աշխատանքի կատարման ուղղությամբ:

Դասախոսի հաշվետվության ձևաչափի խնդիրները

- Նպաստել հաշվետվողականության մշակույթի ձևավորմանը,
- համապարփակ տեղեկատվություն ունենալ դասախոսի գործունեության բոլոր ուղղությունների (ուսումնամեթոդական, գիտահետազոտական, հրատարակչական, դաստիարակչական-կազմակերպական և այլ) վերաբերյալ,
- տեղեկատվություն ունենալ «Լավագույն դասախոս» մրցույթին դասախոսներին երաշխավորելու համար,
- անուղղակիորեն վերհանել դասախոսների կարիքները վերապատրաստման ուղղությամբ,
- ուսումնասիրել և տարածել լավագույն փորձը:

Դասախոսի հաշվետվության ձևաչափ

Դասախոսի անուն, ազգանուն_____

Ամբիոնի անվանումը _____

1. Դասախոսի ծանրաբեռնվածության վերաբերյալ նյութեր

դասաժամեր /տարեկան ծավ/	պրակտիկայի ղեկավարում /պրակտիկայի վայր այցե-լությունների քանակը/	ղեկավարած կուրսային աշխատանքների քանակը	ղեկավարած ավարտա-կան աշխատանքների կամ մագիստրական թեզերի քանակը	ուսանողներին անհատա-կան խորհրդատվության տրամադրում, /նշել ինչ աշխատանք/	ուսանողների հետ արտա-լսարանային միջոցառումների կազմա-կերպում /մի-ջոցառումների անվանումը

2. Ուսումնամեթոդական աշխատանք

№	Դասավանդվող առարկաների անվանում	Առարկայական ծրագրի առկայություն /նշել ամբիոնի կողմից հաստատման ամսաթիվը/	Էլեկտրոնային դասախոսություններ ի կամ այլ նյութերի առկայություն /նշել ինչ նյութեր/	Ուսուցման նոր տեխնոլոգիաների կիրառում, ա.թ. տեսալսողական /առուդիովիզուալ/ միջոցների
1				
2				
3				
4				

3. Ուսումնամեթոդական աշխատանքներ վերջին 5 տարիների ընթացքում

№	դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, /անվանումը, հրատարակման ամսաթիվ, էջաքանակը, պատրաստ է հրատարակման, հրատարակման/	ուսումնամեթոդական հոդվածներ /վերնագիրը, որտեղ է տպագրվել և երբ/	մասնակցություն դասագրքերի խմբագրմանը կամ ուսումնամեթոդական այլ աշխատանքներ	մասնակցություն առարկայական ծրագրի մշակման աշխատանքներին

4. Գիտահետազոտական աշխատանքներ վերջին 5 տարիների ընթացքում

№	մենագրություններ, հրատարակման ամսաթիվ, տեղը, էջաքանակը, պատրաստ է հրատարակման, նշել էջաքանակը/	գիտական հոդվածներ հարենական և արտասահմանյան գիտական ամսագրերում /վերնագիրը, որտեղ է տպագրվել և երբ/	մասնակցություն դասագրքերի խմբագրմանը կամ այլ ուսումնամեթոդական աշխատանքներ	մասնակցություն առարկայական ծրագրի մշակման աշխատանքներին

5. Մասնակցություն գիտական խորհրդաժողովներին, սիմպոզիումներին, քննարկումներին

	Միջոցառման անվանումը	Կազմակերպիչը	Ամսաթիվը	Ելքային արդյունքը

6. Մասնակցությունը որպես փորձագետ ՀՀ ԿԳՆ կամ այլ գիտակրթական կառույցների աշխատանքին

	Կազմակերպության անունը	Կատարած կամ կատարվող աշխատանքը	Ամսաթիվը	Ելքային արդյունքը

7. Մագիստրական աշխատանքի, թեկնածուական կամ դոկտորական թեզի ղեկավարում

Աշխատանքի բնույթը	Թեման	Պաշտպանության ամսաթիվը	Ելքային արդյունքը

8. Մագիստրական աշխատանքի, թեկնածուական կամ դոկտորական թեզի ընդդիմախոսություն

Կազմակերպությունը	Աշխատանքի բնույթը	Թեման	Գրախոսման տարեթիվը

9. Կազմակերպչական-մեթոդական աշխատանք

Դասախոսի մասնակցությունը համալսարանի ստորաբա-ժանումների աշխատանքին	Մասնակցել է բոլոր նիստերին	Հիմնականում մասնակցել է	Չի մասնակցել կամ ունի շատ բացթողումներ
Գիտական խորհրդի նիստերին /նշումը կատարել, եթե ԳԽ անդամ է/			
Ֆակուլտետային խորհուրդների նիստերին /նշումը կատարել, եթե ՖԽ անդամ է/			
Ամբիոնի նիստերին			
Պրոֆեսորադասախոսական կազմի ժողովներին			

9.1. Այլ նշում (օրինակ, դասախոսը նորարարական առաջարկներ է ներկայացրել և այլն):

_____

_____

10. Դասախոսի մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին (լրացնում է վերապատրաստման դասընթացների համադասողը)

Դասախոսի մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին	Նշել, որ կառույցն է կազմակերպել վերապատրաստման դասընթացը, որտեղ և երբ է այն անցկացվել	Նշել վերապատրաստման թեմաները	Նշել վերապատրաստման ժամաքանակը
Մասնագիտական բարեփոխումներ			
Կրթական բարեփոխումներ			
Օտար լեզու			
Համակարգչային տեխնոլոգիաներ			

11. Դասախոսի մասնակցությունը որակավորման բարձրացման այլ ձևերին (նշել համապատասխան վանդակում)

Դոկտորանտուրա	Ասպիրանտուրա	Ստաժիրովկա	Կազմակերպությունը	Անցկացման վայրը, ամսաթիվը

12. Մասնակցությունը դրամաշնորհային ծրագրերին (վերջին 5 տարիների ընթացքում)

	Դրամաշնորհային ծրագիր	Ում կողմից է տրված	Կատարման ժամանակահատվածը	Ելքային արդյունքը

13. Տվյալներ դասախոսների՝ փոխանակման ծրագրերին մասնակցության վերաբերյալ (նշել մանրամասները):

_____

_____

_____

_____

_____

_____

14. Ավելացրեք, խնդրում ենք, տեղեկություններ Ձեր մասին, որոնք կարևոր եք համարում Ձեր հաշվետվության գնահատման համար:

_____

_____

_____

_____

_____

Դասախոսի ստորագրությունը_____

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը_____

2.8.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ՁԵՎԱՉԱՓ

Ձևաչափի նպատակն է բուհի գիտահետազոտական աշխատանքների կատարման շարժընթացի վերաբերյալ նյութ տրամադրել ուսումնասիրության համար:

Ձևաչափի խնդիրները

- Հետևել, ըստ մասնագիտությունների, ուսանողների հետազոտական ակտիվության շարժընթացին,
- հետևել դասախոսների հետ համատեղ հետազոտական ծրագրերում ուսանողների ընդգրկմանը,
- հետազոտական աշխատանքի արդյունքների ուսումնասիրության համար տեղեկատվություն տրամադրել:

Տարեթիվ	Մասնագիտությունը	Հետազոտություններում ընդգրկված ուսանողների տեսակարար կշիռը	Ա.թ.՝ հետազոտա-կան նախագծերում դասախոսների հետ համատեղ	Հետազոտությունների արդյունքը /հետազոտության հրատարակում, շնորհանդես
Բակալավրիատ				
2014				
2015				
2016				
Մագիստրատուրա				
2014				
2015				
2016				

2.9. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՈՒԳԸ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Չևաչափի նպատակն է տեղեկություններ ստանալ բուհի ուսանողական գիտական ընկերության աշխատանքի վերաբերյալ:

Չևաչափի խնդիրները

- Հետևել, ըստ մասնագիտությունների, ուսանողների հետազոտական ակտիվության շարժընթացին,
- հետազոտական աշխատանքի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել ուսումնասիրության և գնահատման համար:

Մասնագիտությունը	ՈՒԳԸ-ի կողմից հաստատված թեմա	Հետազոտության ժամկետը	Ղեկավարը	Նշում թեմայի կատարման մասին

III.ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ 3-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Արտաքին կապերի զարգացման, դրանց որակի ու արդյունավետության բարձրացման նպատակով բուհում մշակվել են հետևյալ գործիքները՝

3.1. արտաքին շահակիցների կողմից Հյուսիսային համալսարանի հետ համագործակցության արդյունավետության գնահատման ձևաչափ,
3.2. բուհի արտաքին կապերի հարստացմանն ու միջազգայնացմանն ուղղված աշխատանքային պլանի կատարողականի գնահատման ձևաչափ,
3.3. Հյուսիսային համալսարանում սովորող արտասահմանյան ուսանողների հետ տարվող աշխատանքի արդյունավետության գնահատման հարցաշար,
3.4. Փոխանակման և շարժունության ծրագրերի (ա.թ.՝դրամաշնորհով) մասնակիցների թվաքանակի շարժընթացի վերլուծություն:

3.1.ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Ձևաչափը համապիտանի է և հնարավորություն է տալիս հետևել համալսարանի համագործակցությանը արտաքին տարբեր շահակիցների հետ՝ պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, գործատու կազմակերպությունների և ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների, միջնակարգ ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, գիտական հիմնարկների, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի հետ:

Նույն ձևաչափը նախատեսված է ներքին և արտաքին շահակիցների համար. արտաքին շահակիցները կարող են գնահատել Հյուսիսային համալսարանի հետ համագործակցության արդյունավետությունը, իսկ ներքին շահակիցները՝ արտաքին շահակիցների հետ համագործակցության արդյունավետությունը: Ստացված տեղեկատվությունը հնարավորություն կտա որակի ապահովման վարչությանը գնահատել համագործակցության արդյունավետությունը և բարելավման ուղիներ որոնել:

Արտաքին շահակիցը	Համագործակցության ժամկետը	Համագործակցության էությունը	Գնահատեք համագործակցության արդյունավետությունը		Համագործակցության արդյունքը	Նշումներ
			արդյունավետ է	արդյունավետ չէ		

3.2.ԲՈՒՀԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Ձևաչափի նպատակն է մշտադիտարկել արտաքին կապերի բաժնի աշխատանքները: Այն կարող է կիրառվել նաև որպես բաժնի հաշվետվողականության ձևաչափ, որը կիրառվում է յուրաքանչյուր կիսամյակի վերջին՝ արված աշխատանքը ամփոփելու համար:

Նախատեսված միջոցառումը	Գործընկեր կազմակերպությունը	Համագործակցության ոլորտը	Ժամանակաշրջանը	Համագործակցության արդյունքը

3.3.ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Հարցաշարի նպատակն է պարզել Հյուսիսային համալսարանում մատուցվող ծառայություններից ուսանողների գոհունակությունը, վերհանել խնդիրները, նպաստել գործընթացի բարելավմանը: Հարցաշարում կա 17 փակ հարց և վերջում՝ մեկ բաց հարց: Հարցաշարը կազմված է երկու մասից: Առաջին մասում նշվում է միայն կատարման փաստը, իսկ երկրորդում՝ ծառայության որակի գնահատումը 3 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր ցուցանիշն է, 3-ը՝ ամենաբարձր:

№	Հարցաշար	Նշում կատարման մասին		Որակի գնահատում		
		այո	ոչ	1	2	3
1.	Մինչև ժամանումը տեղեկատվության տրամադրում					
2.	Ժամանման օրը դիմավորել են					
3.	Հայ ժողովրդի պատմության և մշակույթի ներկայացում, հայ հասարակության ներկայիս քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի ներկայացում					
4.	Էքսկուրսիաների կազմակերպում տեսարժան վայրերով					
5.	Բուհի կառավարման կառուցվածքի և կրթական մոդելի ներկայացում					
6.	Ծանոթացում բուհի էլեկտրոնային միջոցներին					
7.	Գրադարանին ծանոթացում					
8.	Կացարանի տրամադրում կամ առաջարկում					

9.	Հեռախոսային համարի տրամադրում					
10.	Ինտերնետի ապահովում					
11.	Հյուրասիրության կազմակերպում					
12.	Դժվարին իրավիճակում հայտնվելու դեպքում խորհրդատվության տրամադրում					
13.	Անվտանգության ապահովում					
14.	Մասնագիտության ներածություն					
15.	Օտար լեզվով կրթության կազմակերպում					
16.	Լրացուցիչ կրթական ծառայությունների տրամադրում					
17.	Ուսանողական խորհրդի և բուհի ուսանողական այլ կազմակերպությունների ներկայացում					
այլ						

3.4. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ (Ա.Թ.՝ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ) ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Ձևաչափը հնարավորություն է տալիս տեղեկատվություն հավաքել և գնահատել փոխանակման և շարժունության ծրագրերի իրագործումը, հետևել ուսանողների և դասախոսների մոբիլության արդյունավետությանը:

Արտերկիր մեկնած	2014		2015		2016	
Աշխատակիցներ	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Դասավանդող						
Վարչական աշխատող						
Ուսանողներ	2014		2015		2016	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Բակալավր						
Մագիստրոս						
Հետազոտող						

Արտերկրից ժամանած /քանակ/	2014	2015	2016
Աշխատակիցներ			
Դասավանդող			
Վարչական աշխատող			

	ՄԿԾ-ի անվանումը
Արտերկիր մեկնած	
Արտերկրից ժամանած	

ՀԱՎԵԼՎԱԾ

1.ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԸ: ԲՈՒՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հյուսիսային համալսարանը ոչ պետական առևտրային կազմակերպություն է: 2001թ. բուհը ստացել է պետական հավատարմագրում:

Կազմակերպության կառավարման համակարգում գործում են ինչպես, վարչական ենթահամակագի կառավարող սուբյեկտներ (ռեկտոր, պրոռեկտոր, ուսվարչության պետ, դեկաններ, ամբիոնների վարիչներ), այնպես էլ կառավարման կոլեգիալ մարմիններ (գիտխորհուրդ, ուսումնամեթոդական խորհուրդ, ֆակուլտետային խորհուրդներ, ամբիոններ): Ընդորում առաջինները հաշվետու են կոլեգիալ մարմինների առջև: Կարգերի համաձայն ռեկտորին կից որպես խորհրդակցական մարմին գործում է ռեկտորատը, գիտական խորհուրդին են վերապահված համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:

Բուհի կառավարման համակարգը բավականին պարզ է և մատչելի անձնակազմի համար: Այն ներկայացված է համալսարանի հրատարակած ձեռնարկներում, գրքույկներում, տեղադրված է կայքում:

Համալսարանի կառավարման բարձրագույն մարմիններն են՝

ա/ հիմնադիրների ընդհանուր ժողովը,

բ/ համալսարանի ռեկտորը,

գ/ համալսարանի գիտխորհուրդը ,

դ/ համալսարանի ռեկտորատը:

Հիմնադիրների ընդհանուր ժողովը համալսարանի կանոնադրությամբ նախատեսված կարգով կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք ունի: Հիմնադիրների ընդհանուր ժողովը ընտրում կամ նշանակում է ռեկտորին, կանոնակարգում է բուհի իրավանորմատիվային դաշտը:

Համալսարանի գործադիր իշխանությունը իրականացնում է համալսարանի ռեկտորը: Համալսարանի ռեկտորը իրականացնում է համալսարանի ընթացիկ գործունեության ղեկավարումը՝ կնքում պայմանագրեր, համաձայնագրեր, տնօրինում համալսարանի գույքը, համալսարանի այլ աշխատակիցների հետ կնքում աշխատանքային պայմանագրեր, հաստատում աշխատանքային հաստիքներ, աշխատանքի է ընդունում և օրենքով սահմանված կարգով աշխատանքից ազատում համալսարանի աշխատողներին: Համալսարանի ռեկտորը հաշվետվություն է ներկայացնում համալսարանի գիտական խորհրդին և կոլեկտիվին:

Հյուսիսային համալսարանի գիտական խորհուրդը լուծում է համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցեր, քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ համալսարանում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին, շնորհում է գիտական կոչումներ, լսում է դեպարտամենտների, ամբիոնների և համալսարանի մյուս ստորաբաժանումների ուսումնական, գիտահետազոտական և ուսումնադաստիարակչական, միջանկյալ և վերջնական ամփոփիչ ատեստավորման գրծընթացի կազմակերպման, անցկացման աշխատանքների վիճակի և դրանց բարելավման վերաբերյալ միջանկյալ և տարեկան հաշվետվություններ: Համալսարանի գիտխորհրդի առնվազն 25 տոկոսը ուսանողներ են: Համալսարանի ռեկտորը ի պաշտոնե հանդիսանում է համալսարանի գիտխորհրդի նախագահ:

Համալսարանի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է: Ռեկտորատի ձևավորման կարգը և լիազորությունները սահմանվում են համալսարանի կանոնադրությանը համապատասխան: Ռեկտորատի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, ռեկտորի խորհրդականները, գիտխորհրդի քարտուղարը, ուսումնական վարչության պետը, գլխավոր հաշվապահը, արհմիութենական կազմակերպության նախագահը (արհմիութենական կազմակերպություն լինելու դեպքում՝ կազմակերպություն), դեկանները, ամբիոնի վարիչները և առնվազն 25 տոկոս ուսանողներ:

2.ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հյուսիսային համալսարանը կրթական գործունեություն է իրականացնում բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթական ծրագրերով, այդ թվում՝ բակալավրիատով՝ 8 մասնագիտությունների գծով, մագիստրատուրայով՝ 6 :

2007-2009 թթ. Հյուսիսային համալսարանում ներդրվել է ուսուցման ECTS համակարգը:

Ուսման որակի բարձրացումը խրախուսելու նպատակով համալսարանում ստեղծվել է ռոտացիայի սկզբունքով գործող անվճար և զեղչերով ուսումնառության, ինչպես նաև անվանական կրթաթոշակների շնորհման համակարգ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ուսումնական գործընթացը իրականացվում է բարձրագույն դպրոցի լավագույն ավանդույթների, ՀՀ օրենսդրության և Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան: Ուսման ընթացքում սովորողները ստանում են խոր գիտելիքներ և ունակություններ, զարգացնում վերլուծական, հաղորդակցական և գործնական որակները:

Ուսումնական գործընթացը վերահսկվում է ուսումնական վարչության, մասնագիտական ամբիոնների, դեպարտամենտների դեկանների, որակի ապահովման վարչության և որակի ապահովման հանձնաժողովների կողմից:

Բուհի դասախոսները մշտապես համալրում են իրենց տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, մշակում և կատարելագործում են առարկայական ծրագրերը, մեթոդական ձեռնարկները: Բուհում կազմակերպվում են դասախոսների վերապատրաստման դասընթացներ հետևյալ ուղղություններով՝ համակարգչային գրագիտություն, օտար լեզվի ուսուցում, կրթական բարեփոխումներ: Պարբերաբար անցկացվում է պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորում:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ

N	*շիֆր*	*մասնագիտության անվանումը*	*ուսուցման ձևը*	*կրթական աստիճանը*
1.	031000.62 031000.62.1	Հայոց լեզու և գրականություն	առկա, հեռակա	բակալավր
2.	031300.62 031300.62.1 031300.68 031300.68.1	Օտար լեզու և գրականություն	առկա, հեռակա	բակալավր, մագիստրոս
3.	030500.62 030500.62.1 030500.68 030500.68.1	Իրավագիտություն	առկա, հեռակա	բակալավր, մագիստրոս
4.	030600.62 030600.68	Լրագրություն	առկա, հեռակա	բակալավր, մագիստրոս
5.	230100.62 230100.68	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	առկա, հեռակա	բակալավր, մագիստրոս
6.	080600.62 080600.68	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	առկա, հեռակա	բակալավր, մագիստրոս
7.	051100.62 051100.68	Մանկավարժություն և մեթոդիկա	առկա, հեռակա	բակալավր, մագիստրոս
8.	030300.62	Հոգեբանություն	առկա	բակալավր
9.	Ժ.01.01	Հայ դասական գրականություն		ասպիրանտուրա
10.	Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում		ասպիրանտուրա

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2011-2015 ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ[12]

1. Ծրագրի նպատակը

Հյուսիսային համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նպատակն է առաջիկա 5 տարիների համար ձևավորել այն քաղաքականությունը և միջոցառումների համախումբը, որոնց իրականացումը կստեղծի ժամանակակից գիտակրթական գործունեությամբ համալսարանի կայուն զարգացման և կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ պայմաններ:

Համալսարանի ընթացիկ գործունեության վերլուծությունից, այդ թվում՝ այս ուղղությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունից հետևում է, որ նշված նպատակն ապահովելու համար անհրաժեշտ է ձեռնարկել համալիր միջոցառումներ՝ ներքոշարադրյալ ուղղություններով՝

1. համալսարանի ընթացիկ վիճակի գնահատում,
2. ծրագրային ժամանակահատվածի համար համալսարանի առաքելության և նպատակների հստակեցում, դրանց համապատասխանեցում որակավորումների ազգային շրջանակին, ներքին շահակիցների կարիքներին,
3. համալսարանում կրթության որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործում, որակի կառավարման ամբողջական համակարգի ներդրում,
4. համալսարանի կազմակերպչական և ֆինանսատնտեսական կառավարման, ռեսուրսների բաշխման արդյունավետ համակարգի ձևավորում,
5. համալսարանի ուսումնամեթոդական փաստաթղթերի շարունակական կատարելագործում,

[12] Ռազմավարական ծրագիրը Հյուսիսային համալսարանի երկարատև պլանավորման առաջին փորձն էր և, բնականաբար, զերծ չէր թերություններից: Արդեն 2012 թ. վերանայվեց բուհի առաքելությունը, իսկ բուհի ինքնավերլուծության ընթացքում գնահատվեց նաև ռազմավարական ծրագիրը, վերհանվեցին հիմնական թերությունները: 2013 թ.որոշվեց ՌԾ-ից առանձնացնել առաջնահերթություններ առաջիկա՝ 2013-2018 թթ. համար, իսկ ծրագիրը ավելի երկար ժամանակաշրջանի՝ մինչև 2025 թ. համար մշակել 2015 թ.-ի ընթացքում: Որոշվել է նաև պահպանել ՌԾ-ի բոլոր 10 ուղղությունները, սակայն դրանք կդառնան առավել չափելի, իրատեսական և կանխատեսելի:

6. համալսարանի ուսանողական համակազմի ընդլայնում, ուսանողակենտրոն համակարգի արդյունավետության բարձրացում,
7. համալսարանի գիտակրթական գործընթացներում նորարարական տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում,
8. կադրային քաղաքականության իրականացման ընթացքում պլանավորման և զարգացման արդյունավետ մեխանիզմների ներդրում,
9. համալսարանի նյութատեխնիկական բազայի ամրապնդում, ուսումնական տարածքների ընդլայնում,
10. համալսարանի տարածքային ստորաբաժանումների ուսումնական և ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացում, կառավարման ինտերակտիվ տեխնոլոգիաների ներդրում,
11. մասնագիտական կրթական ծրագրերի կազմման, մշտադիտարկման և վերանայման արդյունավետ մեխանիզմների շարունակական կատարելագործում,
12. համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողական համակազմի համար գիտակրթական գործունեության նպաստավոր և արդյունավետ պայմանների ստեղծում,
13. արտաքին կապերի ձևավորման և զարգացման, այդ թվում՝ օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ ակտիվ համագործակցության ծրագրերի իրականացման միջոցով բուհի միջազգայնացում,
14. կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի շարունակական բարելավում՝ ներքին և արտաքին շահակիցների պահանջներին համապատասխան:

2. Հյուսիսային համալսարանի 1996 - 2011 թթ. գործունեության արդյունքները

1996 թվականին հանրապետության մասնագիտական կրթության բնագավառում կրթության կազմակերպման ապակենտրոնացման նոր համակարգի ներդրման պայմաններում հիմնադրվեց և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով գործունեության թույլտվություն ստացավ Հյուսիսային համալսարանը՝ իր առջև նպատակ դնելով ապահովել գիտականության, օրինապաշտության, մարդասիրության,

հայրենասիրության և արդարացիության սկզբունքները: Հիմնադրման պահից ի վեր բուհը ձեռնամուխ եղավ ինքնատիպ և համարձակ առաջադիմական ծրագրերի իրագործմանը՝ նպատակաուղղված համակարգում հասանելի, որակյալ և մրցակցային կրթական պայմանների ձևավորմանն ու զարգացմանը: 1998 թ. բուհը համակարգում առաջիններից էր, որ կրթության որակի բարձրացման և մրցակցային կրթության պայմանների ապահովման նկատառումներից ելնելով, բուհի միջոցների հաշվին տեղեր հատկացրեց անվճար կրթության համար, որին հաջորդեց նաև ուսման առաջադիմության և սոցիալական տարբեր կրթաթոշակների սահմանումը, անվճար և վճարովի համակարգում սովորողների տեղակալման համակարգի ներդրումը: Հիմնադրման առաջին տարիների զարգացումներից անմասն չէր մնում նաև համալսարանի կրթամշակութային առօրյան, որի արդյունքում, նախ, 1998 թվականին հիմնադրվեց «Հյուսիսային համալսարան» թերթը, լրագրության ֆակուլտետի «Ուսումնասեր» պարբերականը, գործարկվեցին տարբեր մշակութային ակումբներ, կազմակերպվեցին կրթամշակութային և ռազմահայրենասիրական միջոցառումներ: Իր գործունեության ողջ ընթացքում համալսարանն անվերապահորեն ապահովել է կրթության նորմատիվային, այդ թվում՝ լիցենզավորման և հավատարմագրման համար սահմանված որակյալ գիտամանկավարժական կազմի, ուսումնամեթոդական և նյութատեխնիկական հագեցածության ապահովման պայմաններն ու պահանջները, ինչի շնորհիվ 2001 թ.-ին ստանալով պետական հավատարմագիր, բուհն իր բոլոր շրջանավարտներին արժանանացրեց պետական ավարտական փաստաթղթերի:

1996 - 2006 թթ. ժամանակահատվածը Հյուսիսային համալսարանի համար բնութագրվում է որպես ձևավորման, ինքնահաստատման և շարունակական զարգացման ժամանակահատված, որն ամուր հիմք է առաջիկա տարիների կայուն և առաջանցիկ զարգացման համար: 2006 թ. ունենալով ոչ պետական բուհական համակարգում 10-ամյա գործունեության փորձ՝ համալսարանը թևակոխեց որակական զարգացման նոր փուլ, որի շրջանակներում բուհի կողմից ձեռնարկված և իրականացված ծրագրային միջոցառումները մեծապես պայմանավորված էին Բոլոնիայի գործընթացի շրջանակներում, մասնավորապես, ECTS համակարգի ներդրման հետ կապված, հանրապետության կրթական համակարգի առջև ծառացած խնդիրներով և առաջադրված նախապայմաններով: Վերոնշյալի շրջանակներում 2006-2008թթ. համալսարանում

մշակվեցին և ներդրվեցին ուսումնական գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, որոնցով կանոնակարգվեց Հյուսիսային համալսարանի ուսումնական գործընթացի՝ կրեդիտային համակարգով կազմակերպումը, սահմանվեց ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի ներդրման և կիրարկման ընթացքում համալսարանի կառավարման օղակների ու պաշտոնատար անձանց լիազորությունները և պարտականությունները, ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի ներդրման և իրականացման ընթացքում համալսարանի ուսանողների պարտականություններն ու իրավունքները: ECTS համակարգի լիարժեք ներդրումն իրականացնելու և կանոնակարգելու նպատակով հիմնադրվեց կրեդիտային կենտրոն, մշակվեց ECTS համակարգով ուսանողների գիտելիքների գնահատման էլեկտրոնային տարբերակ: Կանոնակարգվեց Հյուսիսային համալսարանում կրեդիտային համակարգի պայմաններում ստուգարքների և քննությունների անցկացման գործընթացը, իրականացվեց ուսումնական պլանների կատարելագործում (ներդրվեց մոդուլավորման համակարգ), բարելավվեցին և արդիականացվեցին համալսարանում ուսուցանվող մասնագիտությունների առարկայական ծրագրերը: Համալսարանի ուսումնամեթոդական քաղաքականության մշակման պատասխանատու օղակներում տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում ձևավորվեց նոր ուսումնական վարչություն՝ իր կազմում ընդգրկելով ուսումնական մասը, կրեդիտային կենտրոնը և պրակտիկայի բաժինը: Բոլոնյան գործընթացի դրույթների համաձայն՝ ուսանողակենտրոն ուսուցման կայացմանը նպաստելու նպատակով համալսարանում ամբիոններին կից ձևավորվեցին ուսանողական գիտական ընկերություններ: Առավել ակտիվացավ համալսարանի ուսխորհրդի մասնակցությունը ընթացիկ աշխատանքներին, որի արդյունքում, ուսխորհրդի անմիջական մասնակցությամբ և նախաձեռնությամբ հիմնադրվեց համալսարանի շրջանավարտների հետ հետադարձ կապի և շրջանավարտների համապատասխան մասնագիտական զբաղվածությանն աջակցող կառույցը՝ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը:

Միաժամանակ, նշված ժամանակահատվածում, համալսարանում իրականացվող ընդհանուր զարգացման ծրագրերին համապատասխան, ուսումնական գործընթացին աջակցելու, ուսանողներին ժամանակակից գրականությանն ու նորագույն

տեղեկատվական տեխնոլոգիաներին հաղորդակից դարձնելու համար ստեղծվեց էլեկտրոնային գրադարանը: Հովհ. Թումանյանի ծննդյան 140-ամյակին նվիրված տոնակատարությունների օրերին համալսարանում բացվեց «Վերնատուն» թումանյանագիտական կենտրոնը: «Օտար լեզու և գրականություն» մասնագիտությամբ ուսումնական պարապմունքներն առավել արդյունավետ և ժամանակին համընթաց կազմակերպելու նպատակով ստեղծվեց լինգաֆոնային կաբինետ, իրավագիտություն մասնագիտությամբ սովորողների համար հիմնադրվեց կրիմինալիստիկայի լաբորատորիան, ժամանակակից սարքավորումներով և գույքով կահավորվեց մարզասրահը, կառուցվեց ժամանակակից տեխնիկայով հագեցված դահլիճ, որը յուրահատուկ որակ է հաղորդում համալսարանում տեղի ունեցող բոլոր հանդիսավոր միջոցառումներին: Համալսարանի պաշտոնական էլեկտրոնային կայքի գործարկումը հնարավորություն տվեց առավել հրապարակային դարձնել համալսարանի գործունեությանն առնչվող տեղեկատվությունը, ինչպես նաև, շնորհիվ էլեկտրոնային հետադարձ կապի ներդրման, հնարավոր եղավ առավել օբյեկտիվ վերհանել համալսարանի գործունեության, այդ թվում՝ ձեռքբերումների և հնարավոր բացթողումների վերաբերյալ հասարակական գնահատականը:

3. Հյուսիսային համալսարանի առաքելությունը [13]

Համալսարանի ընթացիկ գործունեությունը, համալսարանի կողմից նախատեսվող ծրագրային միջոցառումները, այդ թվում՝ բուհի գործունեության գնահատումը մեծապես կախված է այն առաքելությունից և դրա իրագործումից, որն իր առջև դնում է հաստատությունը: Տարիների ընթացքում տեղի ունեցած զարգացումները, արտաքին միջավայրի ազդեցությունը որոշակի նոր իրավիճակներ և նոր մարտահրավերներ առաջադրեցին բուհերին, ուստի վերանայվեց նաև Հյուսիսային համալսարանի առաքելությունը:

Հյուսիսային համալսարանն իր առաքելությունն է համարում՝

կրթության որակի գերակայությամբ ազգային լավագույն ավանդույթների և միջազգային առաջավոր փորձի զուգակցմամբ ու կրթության մատչելիության, հասանելիության,

[13] Նոր առաքելությունը հաստատվել է Հյուսիսային համալսարանի 27.04.2012 թ. գիտխորհրդի նիստում:

կազմակերպման թափանցիկության, մարդասիրական արժեքների ապահովմամբ գիտակրթական գործունեության իրագործում՝ ուղղված ձեռնարկատիրության կառավարման, իրավաբանության, ծրագրավորման, լրագրության, բանասիրության, հոգեբանության, կրթության որորտների համար ստացված գիտելիքները գործնականում կիրառելու ունակ կադրերի պատրաստմանը:

Նշված առաքելությանը հավատարիմ՝ Հյուսիսային համալսարանը առաջիկա տարիներին իր նպատակն ու գործունեության առաջնային խնդիրներն է համարում.

- Հայ հասարակության ներքին պահանջների արժևորմամբ ու շուկայի կարիքների հաշվառմամբ և բարձրագույն մասնագիտական կրթության միջազգային փորձի ու սեփական նախաձեռնությունների զուգակցմամբ ՀՈԱՇ-ի 6-րդ և 7-րդ մակարդակներում բարձրորակ կադրեր պատրաստել առավել հեռանկարային մասնագիտությունների գծով:
- Կրթադաստիարակչական գործունեության միջոցով ապահովել ուսանողների հայրենասիրական ոգու դաստիարակումն ու ամրապնդումը, նպաստել մարդասիրության, ժողովրդավարության գաղափարների, հասարակության բարոյական, մշակութային և գիտական արժեքների արմատավորմանն ու տարածմանը:
- Ապահովել գիտության, կրթության, մշակույթի բնագավառի ականավոր գործիչների ստեղծագործությունների արժևորումն ու այդ արժեքների յուրովի սերմանումը հայ իրականության մեջ:
- Ուշադրության կենտրոնում պահել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական ներուժի զարգացումը, համալսարանի դասախոսների կատարելագործման խնդիրները ոչ միայն մասնագիտական, այլև օտար լեզուների, համակարգչային հմտությունների և նորարարական մեթոդների ներդրման ուղղությամբ:
- Քայլեր ձեռնարկել օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կապերի ընդլայնման ու սերտացման և բուհի միջազգայնացման ուղղությամբ՝ արտաքին հարաբերությունների ոլորտում առաջնային համարելով հայ-ռուսական կրթամշակութային կապերը:

- Նպաստել ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերի իրականացմանը տարածաշրջանների համաչափ զարգացման ուղղությամբ, հզորացնել հանրապետության փոքր քաղաքներում գործող Հյուսիսային համալսարանի մասնաճյուղերի ուսումնամեթոդական բազան, կատարելագործել գիտամանկավարժական պոտենցիալը:

4. Կառավարում ու վարչարարություն

4.1. Կառավարման և վարչարարության բարելավում

Հյուսիսային համալսարանում կառավարումն ու վարչարարությունը համակարգված գործընթաց է, նպատակաուղղված աշխատակիցների գործունեության պլանավորմանը, աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը, մոտիվացիայի ձևավորմանը, գործունեության իրականացման նկատմամբ հսկողության և գնահատման համակարգերի ապահովմանը:

Այս ուղղությամբ բուհի զարգացմանը ներդաշնակ ծրագրային միջոցառումները պետք է ուղղված լինեն կառավարման համակարգի բարելավմանը, վարչական ռեսուրսների օպտիմալացմանը: Մասնավորապես, գործընթացի շրջանակներում պետք է շարունակական բնույթ կրեն վարչական օղակների գործունեության վերլուծությունը, գնահատումը, հնարավոր ճգնաժամային իրավիճակների վերհանումը, աշխատանքային իրավունքների ու պարտականությունների հստակեցումը, ստորաբաժանումների և աշխատակիցների աշխատանքային գործունեության կրկնորդությունների բացառումը, պատասխանատվության բարձրացումը, ուղղահայաց և հորիզոնական մակարդակներում ինֆորմացիոն հոսքերի անընդհատության ապահովումը, դասախոսական կազմի համար համապատասխան ռեսուրսների հասանելիությունը: Ծրագրային միջոցառումները նպատակաուղղված կլինեն նաև համալսարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ներբուհական ինտեգրացման ակտիվացմանը, ստորաբաժանումների միջև տեղեկատվության, ինչպես նաև որոշակի տեխնոլոգիաների փոխանակման հնարավորությունների ընդլայնմանը, թիմային գործելաոճի մշակույթի ներդրմանն ու զարգացմանը: Վարչարարության բարելավման գործընթացներում կիրականացվեն ֆակուլտետների հնարավորությունների ընդլայնման փորձնական ծրագրեր, որոնց ընթացքում ֆակուլտետներին հնարավորություն կտրվի ներքին

ռեսուրսների հաշվին իրենց գոծունեության վերաբերյալ իրականացնել հասարակական իրազեկման ակտիվ աշխատանքներ, ֆակուլտետի և բնագավառի շահագրգիռ կազմակերպությունների հետ ձեռնարկել ակտիվ համագործակցություն, փորձարկել և ներդնել կրթության որակի ապահովման ինքնուրույն մեխանիզմներ: Ընդ որում, գործընթացի արդյունավետության ապահովման համար, ըստ անհրաժեշտության, կմշակվեն համապատասխան ներքին կանոնակարգեր, կձևավորվեն ենթակառուցվածքներ:

4.2. Համալսարանի ֆինանսատնտեսական կառավարման համակարգ

Համալսարանի ֆինանսատնտեսական կառավարման համակարգում գործում է համալսարանի կազմակերպաիրավական ձևին բնորոշ մոդել, որի շրջանակներում համակարգի կառուցվածքային մասում նախատեսված են համապատասխան պաշտոններ, որոնց վերապահված համապատասխան իրավունքների և պարտականությունների ներքո կազմակերպվում է համալսարանի ֆինանսատնտեսական գործունեությունը: Ընդ որում, ֆինանսատնտեսական հարցերի վերաբերյալ վերջնական որոշումների կայացման իրավասությունը պատկանում է համալսարանի ռեկտորին: Կառավարման նման մոդելի փորձարկումը տարիների ընթացքում ենթարկվել է ինքնահոկման, և այս ուղղությամբ անհրաժեշտություն է առաջանում առավել արդյունավետ դարձնել ֆինանսատնտեսական գործընթացում վերահսկողության, հաշվետվողականության, կատարողականների գնահատման համակարգերը: Այլ խնդիր է համալսարանի ֆինանսատնտեսական քաղաքականությունը, որը ենթակա է շարունակական բարելավման: Մասնավորապես, տարիներ շարունակ համալսարանի ֆինանսատնտեսական կառավարման համակարգում ֆինանսական ռեսուրսների հիմք են եղել բարձրագույն մասնագիտական կրթության ուսման վարձավճարիներից գոյացող միջոցները, որոնք հիմնականում ուղղորդվել են համալսարանի նյութատեխնիկական բազայի համալրմանը, նոր ուսումնական տարածքների օգտագործման հնարավորությունների ընդլայնմանը, որակյալ կադրային համակազմի ձևավորմանը: Ընդ որում, համալսարանի 15-ամյա գործունեության ընթացքում ֆինանսական միջոցների հասցեագրման համամասնությունները զարգացման տարբեր ժամանակահատվածների համար փոփոխվել են: Մասնավորապես, համալսարանի ուսանողական համակազմի

ընդլայնման արդյունքում նյութատեխնիկական բազայի հարստացմանն ուղղված ծախսերը եղել են առաջանցիկ, քան, օրինակ, դասավանդող կազմին ուղղվող աշխատավարձի ծախսերը (ուսանողական համակազմի օպտիմալ ձևավորման պայմաններում անհրաժեշտություն չի առաջանում ներգրավել նոր դասախոսներ): Այսպիսով, ինչպես հետևում է առաջիկա զարգացումների կանխատեսումից, միաժամանակ գիտակցելով, որ մրցունակ կրթություն կազմակերպելու համար անհրաժեշտ նախապայման է կրթության բնագավառում արդյունավետ ֆինանսատնտե-սական քաղաքականության իրականացումը, որոշակի վերափոխման կարիք ունեն համալսարանի և՛ եկամտային, և՛ ծախսային քաղաքականությունները:

Մասնավորապես, համալսարանի եկամտային համակարգում շարունակում է գերակշիռ մաս կազմել ուսման վարձավճարներից գոյացող միջոցները, ընդ որում, ինչպես հետևում է բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների ներքին և արտաքին շուկաների ուսումնասիրությունից, համալսարանում սահմանված ուսման վարձավճարները հնարավորություն են տալիս, համալսարանի առաքելությանը համապատասխան, կազմակերպել մրցունակ կրթություն, սակայն զարգացման նոր ծրագրեր իրականացնելու, այդ թվում՝ գիտակրթական գործունեության ընդլայնման համար լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտություն է առաջանում:

Մասնավորապես, համալսարանի համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ կարող են ներգավվել համալսարանի հիմնական՝ բարձրագույն մասնագիտական կրթական գործունեության ընդլայնման, հետևաբար և վերոնշյալի արդյունքում ուսանողների (այդ թվում՝ օտարերկրացի) համակազմի ավելացման միջոցով (շնորհիվ գոյություն ունեցող մասնագիտությունների գծով ուսանողների թվակազմի ավելացման, նոր մասնագիտությունների գծով կրթության կազմակերպման, մագիստրոսի կրթական ծրագրով համալսարանի մասնագիտությունների հավատարմագրման, համալսարանի մասնաճյուղերի ցանցի ընդլայնման), լրացուցիչ ֆինանսատնտեսական գործունեության միջոցով (լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում՝ համակարգչային դասընթացներ, լեզուների դասավանդման կարճաժամկետ դասընթացներ, հաշվապահական հաշվառման դասընթացներ, գիտահետազոտական աշխատանքների իրականացում, հրատարակչական գործ, տպագրական գործ, տնտեսական գործունեությամբ զբաղվող

համալսարանին կից այլ կառույցների ստեղծում), ինչպես նաև դրամաշնորհային ծրագրերի և այլ անհատույց միջոցների ներգրավման միջոցով:

Առաջիկա տարիների համար այս ուղղությամբ նախատեսվող ծրագրային միջոցառումները կարելի է ամփոփել հետևյալ ուղղություններով՝

- նոր և պահանջված մասնագիտություններով, այդ թվում, ըստ տարբեր կրթական ծրագրերի՝ համալսարանի գործունեության ընդլայնում,
- մարզային բուհական միավորների համախմբման հնարավորությունների ուսումնասիրություն, Հյուսիսային համալսարանի հետ, վերջիններիս միավորման հնարավորությամբ և նպատակահարմարությամբ պայմանավորված, համապատասխան միջոցառումների իրականացում,
- լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում,
- գիտահետազոտական աշխատանքների իրականացում՝ կրթական գործընթացների զարգացմանը դրանց հնարավոր նպատակաուղղվածությամբ,
- գիտահրատարակչական գործունեության ընդլայնում,
- համալսարանի ուսումնական տարածքները համալսարանի կողմից չօգտագործվող ժամանակահատվածում այլ անձանց վարձակալության տրամադրելու հնարավորությունների ուսումնասիրություն,
- դրամաշնորհային ծրագրերի և այլ անհատույց միջոցների ներգրավում:

5. Որակի ներքին ապահովման համակարգ

Այս ուղղությամբ համալսարանի կողմից ձեռնարկված միջոցառումները համալսարանի գործունեության ողջ տարիների ընթացքում ունեցել են ռազմավարական նշանակություն և շարունակաբար գտնվել են համալսարանի ղեկավարության և ողջ անձնակազմի ուշադրության կենտրոնում: Որակի ապահովման ներբուհական համակարգի կատարելագործման աշխատանքները առավել ակտիվացան 2009-2010թթ., որի արդյունքում նախատեսվեց կրթության որակի ապահովման ներբուհական գործընթացները ներառել միասնական համակարգում, այսինքն՝ կրթության որակի ապահովման նպատակադրմամբ համակարգել կրթական գործընթացի կազմակերպման բոլոր մակարդակներում առաջացող հարաբերությունները: Մասնավորապես, 2010թ.

փետրվարին համալսարանում ստեղծվեց Որակի ապահովման վարչություն: Վարչության առջև դրվեցին հետևյալ խնդիրները՝ ապահովել, արդիականացնել և զարգացնել կրթության որակի ապահովման ներբուհական համակարգը, ապահովել համալսարանում որակի կառավարման ժամանակակից, միջազգային պրակտիկայում փորձարկված տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը, ձևավորել ուսումնական ստորաբաժանումների որակի ապահովման ներքին համակարգերը, ձևավորել համալսարանի առաքելության իրագործման համար անհրաժեշտ պայմաններ կրթության որակի ապահովման ուղղությամբ: Հյուսիսային համալսարանի որակի ապահովման քաղաքականությունն ուղղված է համալսարանի առաքելության և նպատակների իրագործմանը, բուհի ներգրավմանը միջազգային կրթական տարածք: Որակի ապահովման քաղաքականության նպատակներն են՝

- մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում,
- մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության հարստացում,
- կրթության վերջնարդյունքների համապատասխանեցում ներքին և արտաքին շուկայի պահանջներին և հայ հասարակության կենսական շահերին,
- գիտահետազոտական աշխատանքի որակի բարձրացում, բարձրորակ գիտական ներուժի պատրաստում,
- բուհի նյութատեխնիկական բազայի համապատասխանեցում բարձրագույն կրթության ոլորտի միջազգային չափորոշիչներին,
- համալսարանի կրթական գործունեության համապատասխանեցում գործող նորմատիվային դաշտին,
- միջազգային կրթական ծառայությունների շուկայում Հյուսիսային համալսարանի բարձր վարկանիշի ապահովում,
- կրթական, գիտական, տեղեկատվական, վարչական, տնտեսական, սոցիալական և ֆինանսական գործունեության միջոցով ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարում,
- ստեղծված մեխանիզմների միջոցով որակի մշակույթի ձևավորում,
- որակի ամբողջական կառավարման համակարգի ներդրում,

- որակի ապահովման համար անհրաժեշտ իրավանորմատիվային բազայի ստեղծում:

Հյուսիսային համալսարանը որակի ապահովման հարցում որդեգրել է հետևյալ մոտեցումը՝ բուհի բոլոր մակարդակներում և ոլորտներում անցում արտաքին վերահսկողությունից ներքին վերահսկողության, որակի ապահովման այնպիսի մեխանիզմների ներդրում, որոնք բոլոր ոլորտներում և ստորաբաժանումներում անհնար կդարձնեն ոչ որակյալ աշխատանքը: Նոր պայմաններում առավել կարևորվում է յուրաքանչյուր ուսանողի և աշխատակցի գիտակցական մոտեցումը որակի ապահովման հարցերին:

Այսպիսով, որակի ապահովման ուղղությամբ համալսարանում որդեգրված սկզբունքներին և մոտեցումներին համապատասխան՝ համալսարանի ռազմավարական ծրագրային բոլոր միջոցառումները որակի ապահովման համակարգի բաղադրիչներ են, որոնք նպատակաուղղված են եղել և առաջիկայում նույնպես նպատակադրվելու են՝ ապահովելու համալսարանի առաքելությանը համապատասխան գերակայությունների իրագործում:

6. Արտաքին կապեր և միջազգայնացում

Կրթական համակարգում համալսարանի կայացմանն ու զարգացմանը զուգընթաց, գիտակրթական բնագավառում արդյունավետ համագործակցության իրականացման նպատակով անհրաժեշտ է դառնում բնագավառի կազմակերպությունների, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների, գիտական կազմակերպությունների, բնագավառի գործատուների հետ կապերի ընդլայնումը, նոր կապերի հաստատումն ու զարգացումը: Վերոնշյալի շրջանակներում առաջիկայում նախատեսվում է օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ ակտիվ համագործակցության ծրագրերի իրականացում, ուսանողական համակազմի գծով փոխանակման ծրագրերի կազմակերպում: Գործատուների հետ կապի ամրապնդման շրջանակներում Հյուսիսային համալսարանի համապատասխան կրթական ծրագրերի վերաբերյալ բնագավառի գործատուների գնահատականը ստանալու նպատակով վերջիններիս քննարկմանն են ներկայացվում մասնագիտական կրթական ծրագրերը, ստեղծվում է կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատող մեխանիզմ:

Մասնավորապես, բնագավառի գործատուների հետ կապերի ամրապնդման միջոցառումները նախատեսվում են համալսարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման՝ 2010 թվականին ստեղծված շրջանավարտների և կարիերայի կենտրոնի տարեկան աշխատանքային ծրագրերով:

Միաժամանակ, արտաքին կապերի ձևավորմանն ուղղված միջոցառումների շրջանակներում կարևորվում է նաև նորանոր կապերի հաստատումն ու ընդլայնումը բնագավառի այլ մասնագիտական հաստատությունների հետ:

Արտաքին կապերի գործարկման շրջանակներում ուսանողության և բուհի անձնակազմի շարժունության խրախուսման նպատակով համապատասխան քաղաքականությունը դրված է Հյուսիսային համալսարանի կրթական ծրագրերի մշակման քաղաքականության և իրագործման հիմքում: Ընդ որում, թեև գործող իրավական ակտերը ուսանողական շարժունության համար խթանիչ միջավայր չեն ձևավորում, այդուհանդերձ, համալսարանում գործող կարգերը հնարավորինս նպաստում են շարժունության քաղաքականության իրագործմանը: Աշխատանքներ են տարվում բուհի արտաքին կապերի հաստատման և միջազգային ճանաչման ուղղությամբ:

Քանի որ բուհի առաքելության մեջ առանձնահատուկ դեր է հատկացված հայ-ռուսական մշակութային կապերի ապահովմանը, Հյուսիսային համալսարանը համագործակցում է Սանկտ Պետերբուրգի կառավարման և տնտեսագիտության ակադեմիայի հետ: Կնքված պայմանագրում հատուկ կետեր կան, որոնք վերաբերում են ուսանողական շարժունությանը. բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին առնվազն մեկ կիսամյակ հնարավորություն է տրվում սովորելու այդ բուհում, նախատեսվում է երկու բուհերի նույնատիպ ամբիոնների միջև համագործակցություն, մասնագիտական կրթական ծրագրերի, գիտամեթոդական գրականության և գիտամանկավարժական փորձի փոխանակում, ուսումնամեթոդական ձեռնարկների համատեղ պատրաստում, մասնագիտության պրոֆիլային դասընթացների ուղղությամբ դասախոսների փոխանակում և այլն:

Արտաքին կապերի ընդլայնման ուղղությամբ առաջիկայում նախատեսված ծրագրային միջոցառումները կունենան հետևյալ ուղղությունները՝

1. արտաքին կապերի համար պատասխանատու ինքնուրույն ստորաբաժանման ստեղծում,

2. համալսարանի գործունեության իրականացման վերաբերյալ տեղեկատվության տարածման ծրագրի մշակում և իրականացում, ներքին և արտաքին հնարավոր շահառուներին հասցեագրված PR նյութերի՝ օտար լեզուներով ներկայացում,
3. բնագավառի, այդ թվում հանրապետական և օտարերկրյա շահագրգիռ կազմակերպությունների, գործատուների և գիտակրթական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնում,
4. ուսանողական և դասախոսական համակազմի գծով փոխանակման նոր ծրագերի իրականացում:

7. Հյուսիսային համալսարանի ուսանողական համակազմի ընդլայնման հնարավորությունների ապահովում

Հանրապետությունում վերջին տարիների ժողովրդագրական պատկերի վերլուծությունից հետևում է, որ առաջիկա տարիներին հանրապետության ուսանողական համակազմը նվազման միտում ունի: Վերոնշյալով, ինչպես նաև հանրակրթական դպրոցում 12-ամյա կրթական համակարգի ներդրմամբ 2011 թվականին շրջանավարտներ չլինելու հանգամանքով պայմանավորված, առաջիկայում լուրջ մարտահրավերներ են կանխատեսվում ուսանողական համակազմի ձևավորման ուղղությամբ: Անհրաժեշտություն է առաջանում ուսանողական համակազմի ընդլայնման ուղղությամբ ձեռնարկել համալիր միջոցառումներ: Մասնավորապես, անհրաժեշտ է՝

- նյութատեխնիկական բազային համապատասխան՝ ըստ մասնագիտությունների՝ ընդլայնել կրթության հեռակա ձևով ընդունելությունը,
- համալսարանում կրթության հեռավար ձևի ներդրման համար իրականացնել նախապատրաստական աշխատանքներ, իրականացնել հեռավար ձևով ուսուցման փորձնական ծրագրեր,
- ընդլայնել լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունը՝ միաժամանակ այն մատչելի դարձնելով համալսարանի ուսանողների համար,
- ակտիվացնել համալսարանի և հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև համագործակցային կապը, կազմակերպել հանդիպումներ դպրոցներում և կամ համալսարանում, անցկացնել օլիմպիադաներ և այլն,

- ակտիվացնել համալսարանի մասին տեղեկատվության տարածման աշխատանք-ները,
- ուսման վարձերի համակարգը դարձնել առավել ճկուն,
- իրականացնել ուսանողների փոխանակման ծրագրեր:

8. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

Հյուսիսային համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի գծով արդյունա-վետ կադրային քաղաքականությունը երկարաժամկետ հատվածում շարունակաբար որակյալ կրթության կազմակերպման համար կարևոր նախապայման է: Այսինքն՝ բուհի անձնակազմի, այդ թվում պրոֆեսորադասախոսական կադրերի հետ պարբերաբար և բազմակողմանիորեն տարվող աշխատանքները կազմում են բարեփոխումների անբաժան մասը:

Համալսարանում կադրային քաղաքականություն իրականացնելիս, ի թիվս կադ-րային ռեսուրսի քանակական և որակական ուսումնասիրման և գնահատման, հետազոտվում է կադրային ներուժն ամբողջությամբ: Մասնավորապես, կադրերի ներուժն ուսումնասիրելիս ոչ միայն հաշվի է առնվում վերջիններիս պատրաստվածության փաստացի մակարդակը, այլ նաև երկարաժամկետ հատվածում վերջիններիս ամբողջական հնարավորությունները՝ սեռատարիքային կազմը, գիտամանկավարժական որակները, աշխատանքի փորձառությունը, գործարար ակտիվությունը, գործունեության որակը, գործունեության արդյունքները, մասնագիտական շարժունակությունը, նորարարությունների նկատմամբ ճկունությունը, մոտիվացիան և այլն: Վերոնշյալին միտված՝ պարբերաբար իրականացվում է պրոֆեսորադասախոսական կադրերի կողմից մասնագիտական գործունեության մոտիվացիոն հիմքերի ուսումնասիրություն (որպես մոտիվացիա՝ դիտարկվում են կոմպետենցիաների զարգացումը՝ ինքնահիրացվելիությունը, դասավանդվող առարկայի նկատմամբ հետաքրքրասիրությունը, գիտահետազոտական աշխատանքով զբաղվելու հնարավորությունը, ստեղծագործական կոլեկտիվի հետ շփվելու ցանկությունը, ուսանողների հետ աշխատելու նախասիրությունը, նյութական բավարարումը, անկախությունը արտաքին գործոններից, իր գիտելիքները այլ անձանց փոխանցելու ձգտումը, մանկավարժական ունակությունները և այլն), ինչպես նաև իրականացվում է բուհի աշխատանքային առօրյայի վերլուծություն՝

նպատակաուղղված աշխատանքային պայմանների բարելավմանը, կոլեկտիվում առողջ բարոյահոգեբանական միջավայրի ձևավորմանը, բուհում աշխատելու ընթացքում պրոֆեսորադասախոսական կադրերի անձնական պահանջմունքների բավարարման հնարավորությունների վերհանմանը:

Վերոնշյալ խնդիրները և դրանց լուծման ուղիները ներառված են բուհի կառավարման ընդհանուր համակարգում, որի կազմակերպման գործընթացում ընգրկված են մի շարք կառուցվածքային ստորաբաժանումներ՝ կադրային գործի վարման ստորաբաժանում, ռեկտորի աշխատակազմ, ֆակուլտետներ, ամբիոններ և այլն, ինչպես նաև մշակված են մի շարք ներքին փաստաթղթեր, որոնք սահմանում են պրոֆեսորադասախոսական կադրերի իրավունքներն ու պարտականությունները, պաշտոնի նշանակման ընթացակարգը, ատեստավորման կարգը, վերապատրաստման կարգը:

Այսպիսով, ծրագրային ժամանակահատվածի համար կադրային քաղաքականության բարելավմանն ուղղված միջոցառումների շրջանակներում նախատեսվում է՝

- բնագավառի աշխատուժի շուկայի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության պարբերաբար վերլուծություն, կադրերի պահանջարկի վերլուծություն,
- համապատասխան պաշտոնների բնութագրերի որոշակիացում, իրավունքների և պարտականությունների հստակեցում և սահմանում,
- կադրերի աշխատանքային ներուժի գնահատում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման մակարդակի ուսումնասիրություն, գիտահետազոտական աշխատանքների ծավալի որոշակիացում, կադրերի ատեստավորման համակարգի ներդրում, անձնակազմի, առավել ևս նոր կադրերի ադապտացման հնարավորությունների ձևավորում,
- անձնակազմի զարգացման ծրագրերի իրականացում, մասնագիտական նախապատրաստում, մասնագիտական վերապատրաստում, որակավորման բարձրացման համար համապատասխան դասընթացների կազմակերպում,
- աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ անձնակազմի շահագրգռման և մոտիվացիոն համակարգերի ձևավորում, սոցիալական ծրագրերի իրականացում,

- համալսարանում կոլեգիալ սկզբունքով ընդունվող համապատասխան որոշումներին բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության ապահովում,
- անձնակազմի կառավարման արդյունավետության նպատակով անձնակազմի կառավարման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների ձևավորում:

9. Հետազոտություն և զարգացում

Ներկայումս հանրապետությունում բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից գիտահետազոտական գործունեության պահանջները նորմավորված չեն, այսինքն՝ սահմանված չեն բուհերի գիտահետազոտական գործունեության հստակ չափանիշներ, այլ, որպես ընդհանուր պահանջ՝«Կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված է բուհի կողմից գիտահետազոտական գործունեությունը որպես բուհական գործունեության բաղադրիչ: Ընդ որում, նման միտում առկա է նաև զարգացած կրթական համակարգեր ունեցող մի շարք այլ երկներում, որտեղ գիտահետազոտական գործունեությունը անհրաժեշտ նախապայման չէ բուհական գործունեության համար, և բարձրագույն մասնագիտական գործունեություն իրականացնող հեղինակավոր մի շարք հաստատություններ զբաղվում են հիմնականում կրթական գործունեությամբ առանց գիտահետազոտական գործունեության՝ անհրաժեշտության դեպքում գիտահետազոտական աշխատանքների մասով իրենք դառնալով պատվիրատու այլ կառույցների: Վերոնշյալով պայմանավորված՝ համալսարանն իր ձևավորման առաջին 5 տարիների ընթացքում ակտիվ գործունեություն չի ծավալել գիտահետազոտական գործունեության ուղղությամբ: 2000 թվականից ի վեր գիտահետազոտական գործունեության ուղղությամբ լրագրության, հասարակագիտության, բանասիրության, տնտեսագիտության բնագավառներում կատարված աշխատանքների արդյունքում համալսարանի կողմից հրատարակվել են 3 տասնյակ աշխատություններ: Ընդ որում, գիտահետազոտական աշխատանքների շարունակական ընդլայնումը, այդ թվում՝ համապատասխան նյութատեխնիկական միջոցների համալրումը շարունակում է մնալ համալսարանի առաջիկա տարիների

համար ծրագրային աշխատանքների բաղադրիչ: Մասնավորապես, այս ուղղությամբ նախատեսվում է՝

- գիտահետազոտական լաբորատորիաներ հիմնադրելու նպատակով լրացուցիչ տարածքների օգտագործման իրավունքի ձեռքբերում,
- համալսարանի գիտակրթական գործունեության իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկական միջոցների ձեռքբերում,
- գիտակրթական գործունեության բնագավառում ներպետական և միջազգային համագործակցության հնարավորությունների ընդլայնում,
- առաքելությանը համապատասխան՝ համալսարանի գիտահետազոտական ռեսուրսների համակարգում, ռեսուրսների ներուժի գնահատմամբ շահագրգիռ կազմակերպություններից գիտահետազոտական աշխատանքների իրականացման համապատասխան պատվերների ընդունում:

10. Ենթակառուցվածք և ռեսուրսներ

10.1 Համալսարանի ուսումնամեթոդական ապահովվածության համակարգ

Կրեդիտային համակարգի ուղղությամբ աշխատանքները Հյուսիսային համալսարանում սկսվեցին 2006թ.՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 22-ի N2307 որոշման ընդունումից հետո: Համակարգի փորձնական ներդնումը տեղի ունեցավ 2007-2008 ուստարում, երբ բուհի 3 մասնագիտություններ («Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու և գրականություն», «Լրագրություն») անցան այդ համակարգին: Մինչ այդ կատարվել էր Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների բարձրագույն կրթության համակարգում արդեն առկա կրեդիտային համակարգի փորձի ուսումնասիրություն: Հյուսիսային համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման և հաջող իրականացման համար ստեղծվեց կրեդիտային կենտրոնը, որը «Բուհում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» օրինակելի կարգի հիման վրա մշակեց անհրաժեշտ մեթոդական և կանոնադրական գործողությունների հիմքերն ու կարգերը: Սկսվեց մոդուլային սկզբունքով ուսումնական պլանների մշակումն ու կատարելագործումը: Մշակվեց «Ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի

ներդրման և իրականացման ընթացքում համալսարանի ուսանողի իրավունքների ու պարտականությունների ուղեցույցը»:

2007-2008 ուստարվա ընթացքում տեղի ունեցավ նաև նոր չափորոշիչներին համապատասխան ուսումնական գործընթացի ECTS համակարգով կազմակերպման հետ կապված գործավարության նոր փաստաթղթերի, ուսանողների կրեդիտների կուտակման տվյալների բազայի ստեղծում :

2008-2009 ուստարվանից կրեդիտային համակարգով ուսուցման անցան արդեն բոլոր մասնագիտությունների ուսանողները: Նոր համակարգին պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի և ուսանողների ադապտացիան հեշտացնելու համար ոլորտի փորձագետների ներգրավմամբ սեմինար-խորհրդակցություններ և կլոր սեղաններ անցկացվեցին հետևյալ թեմաներով՝ «Բոլոնիայի գործընթացի խոչընդոտները և հաղթահարման ուղիները» (2009թ. հունվարի 30), «Օրենքի արժևորումը՝ բարձրագույն կրթության համակարգում իրականացվող բարեփոխումների անհրաժեշտ պայման» (2009թ. փետրվարի 9), «Կրթության որակի ներբուհական ապահովման մոդելը» (2009թ. փետրվարի 13), «Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կրթական բարեփոխումների գործընթացում» (2009թ. փետրվարի 20), «Բոլոնիայի գործընթաց. համալսարանական կրթությունը և ակադեմիական ազատությունները» (2009թ. փետրվարի 27), «Ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի ներդրման փորձը» և այլն:

2009-2010 ուստարվանից սկսած՝ կրեդիտային համակարգով ուսուցման անցավ նաև հեռակա ուսուցման դեպարտամենտը: 2009 - 2010թթ. ընթացքում ստեղծվեցին հեռակա ուսուցման համար նախատեսված նոր ուսումնական պլաններ:

2010-2011 ուստարում համալսարանը ունեցավ կրեդիտային համակարգով ուսումնառող առաջին շրջանավարտները: Նրանց համար հայերեն և անգլերեն լեզուներով կազմվեցին հանրապետությունում հաստատված նմուշի համապատասխան դիպլոմի և դիպլոմի հավելվածների նախագծերը:

Ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ծրագրային միջոցառումները պետք է կրեն շարունակական բնույթ և միտված են հետևյալին՝ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման և բարելավման գործընթացում նշված փաստաթղթերի պարբերական փորձաքննության ներկայացում ներքին և արտաքին շահակիցներին՝ միաժամանակ ապահովելով դրանց

համապատասխանությունը կրթության բնագավառի իրավանորմատիվային պահանջներին:

10.2 Նյութատեխնիկական, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցվածություն

Համալսարանի կայուն զարգացման ծրագրերն անիրագործելի կլինեն առանց նյութատեխնիկական բազայի շարունակական ընդլայնման: Մասնավորապես, վերոնշյալի շրջանակներում համալսարանը տարեցտարի լրացուցիչ միջոցներ է հատկացնում նոր ուսումնական տարածքների օգտագործման իրավունքների ընդլայնման, նոր տեխնիկական միջոցների, լաբորատոր սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ: Այսպիսով, վերջին 5 տարիների ընթացքում նյութատեխնիկական հագեցվածության ծավալները տարեկան ավելացել են միջինը 20 տոկոսով: Այս ուղղությամբ ձեռքբերումներն առավել ակնառու են ժամանակակից տեխնոլոգիաների բազայի ընդլայնման առումով: Կրթական ծառայությունների մատուցման բնագավառում նորարարական տեխնոլոգիաներով հագեցվածությունը անխուսափելիորեն դարձել է արդի ժամանակների հրամայականը, որով պայմանավորված՝ յուրաքանչյուր տարի համալսարանը լրացուցիչ միջոցներ է ուղղորդում համալսարանի թե՛ նորագույն տեխնոլոգիաներով տեխնիկական վերազինմանը, թե՛ համապատասխան տեխնոլոգիաների կիրառման նպատակով համապատասխան մասնագետների ներգրավմանը: Արդյունքում, ներկայումս համալսարանում հաշվառվում է շուրջ հարյուր համակարգիչ, որից ուսանողական և դասախոսական համակազմի կողմից օգտագործվող համակարգիչները կազմում են շուրջ 6 տասնյակ, այսինքն՝ երկհերթ պարապմունքների դեպքում յուրաքանչյուր 15 ուսանողին և համապատասխանաբար յուրաքանչյուր 2 դասախոսին բաժին է ընկնում մեկ համակարգիչ, իսկ վարչական աշխատակիցներին բաժին ընկնող համակարգիչների թիվը կազմում է շուրջ 4 տասնյակ, այսինքն՝ 1-ական համակարգիչ յուրաքանչյուր աշխատողին: Ընդ որում, համալսարանի բոլոր համակարգիչները միացված են համացանցին, որն ավելի ամբողջական է դարձնում դրանց կիրառական հնարավորությունները: Միաժամանակ, համակարգիչներով հագեցման գործընթացին զուգահեռ վերջին տարիներին ներգրավվել են լրացուցիչ մասնագետներ, որոնց կողմից իրականացվում են համակարգչային հավելյալ դասընթացներ ուսանողական համակազմի համար: Նախատեսվում է առաջիկայում

կազմակերպել համակարգչային դասընթացներ համալսարանի այն դասախոսների համար, որոնք լիարժեք չեն տիրապետում տեղեկատվական տեխնոլոգիաների նշված տեսակին:

Համալսարանում համակարգիչների կիրառման ծավալներին զուգընթաց՝ շարունակվում է ընդլայնվել նաև պրոեկտորներով կազմակերպվող դասընթացների ծավալը:

Համալսարանում կրթության ժամանակակից ձևերից մեկի՝ հեռավար կրթության ձևի ներդրման փորձնական ծրագրին համապատասխան՝ նախատեսվում է համալսարանի նյութատեխնիկական բազան համալրել անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

Տեխնոլոգիական հագեցվածության պահանջի առումով որպես ծրագրային միջոցառում նախատեսվում է՝

- համակարգչային հագեցվածության ցուցանիշը Երևանում տարեկան ավելացնել 10 տոկոսով, մասնաճյուղերում ՝ 15 տոկոսով,
- պարբերաբար թարմացնել տեխնիկական բազան՝ ֆիզիկապես և բարոյապես հնացող տեխնիկական միջոցները փոխարինելով նորերով,
- համալսարանի նյութատեխնիկական բազան համալրել ժամանակակից՝ ինտերակտիվ և հեռավար դասավանդման մեթոդների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով,
- կրթական չափորոշիչների հնարավոր փոփոխությունների պահանջներին համապատասխան՝ վերազինել համալսարանի լաբորատորիաները:

11. Հասարակական պատասխանատվություն և հետադարձ կապի համակարգ

Հյուսիսային համալսարանում սովորողների պրակտիկայի կազմակերպման և շրջանավարտներին աշխատատեղով ապահովելու քաղաքականությունը ներառում է ինստիտուցիոնալ և բովանդակային բարեփոխումներ: Մասնավորապես, ինստիտուցիոնալ բարեփոխումների շրջանակներում կանոնակարգվել են պրակտիկայի կազմակերպման գործում պատասխանատու ստորաբաժանումների իրավասություններն ու պատասխանատվությունը, ինչպես նաև համալսարանի շրջանավարտների մասնագիտական զբաղվածության ապահովման ուղղությամբ համապատասխան

աշխատանքների իրականացման նպատակով հիմնադրվել են համապատասխան կառույցներ: Բովանդակային բարեփոխումների շրջանակներում ձեռնարկվում են անհրաժեշտ աշխատանքներ, որոնց արդյունքում պարբերաբար իրականացվում է աշխատաշուկայի ուսումնասիրություն՝ նպատակաուղղված բնագավառի գործատուների պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման գործընթացի բովանդակության և կառուցվածքի բարելավմանը, ինչպես նաև իրականացվում են աշխատանքի տեղավորման համար տարաբնույթ մրցույթների, հարցազրույցների մասնակցելու համար շրջանավարտների նախապատրաստում, գործատուների հետ համատեղ շրջանավարտների և բարձր կուրսեցիների համար մասնագիտական աշխատանքի կողմնորոշմանն ուղղված հանդիպումներ, ժողովներ: Կոնկրետ աշխատատեղերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն է մշակվում և տրամադրվում շահագրգիռ ուսանողներին և շրջանավարտներին:

Ծրագրային ժամանակահատվածի համար այս ուղղությամբ նախատեսվող միջոցառումներն են՝

- բուհի սովորողների և շրջանավարտների համար լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում (օտար լեզուների խորացված ուսուցում, համակարգչային դասընթացներ և այլն), դրանց մատչելիության ապահովում,
- բուհի և բնագավառի կազմակերպությունների միջև բազմակողմանի փոխհամագործակցության ձևավորում և զարգացում,
- շրջանավարտների համար մասնագիտական և սոցիալական աղապտացման ծրագրերի իրականացում,
- բնագավառի գործատուների, աշխատատեղերի, աշխատանքի գործակալությունների վերաբերյալ տեղեկատվական բազայի մշակում:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հյուսիսային համալսարանը 2012 թվականից ներգրավվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներում, որի շրջանակներում իրականացվել է բուհի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն՝ ՈԱԱԿ-ի մշակած ձևաչափի համաձայն: Դրան հաջորդել է փորձագիտական այցը, որից հետո բուհին ներկայացվել է փորձագիտական զեկույց և խորհրդատվություն: Այս ամենից հետո կազմվել է Հյուսիսային համալսարանի կրթության որակի շարունակական բարելավման գործողությունների ծրագիրը: Ստորև ներկայացվում է վերոնշյալ գործողությունների ծրագիրը, որն իր մեջ ներառում է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափի տասը չափանիշների ուղղությամբ նախատեսվող և իրականացվող բոլոր աշխատանքները:

ՉԱՓԱՆԻՇ Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ					
Մասնագիտական ուսումնական հաստատության վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին					
Գործողության նկարագիր	Քայլեր	Ընթացիկ վիճակ	Քայլերի համար նախատեսված ժամանակ	Վերջնարդունք	Վերջնարդյունքի գնահատման ցուցիչներ
1	2	3	4	5	6
Բուհի առաքելության, նպատակների իրականացման և 2011-2015 թթ. գործունեության արդյունքների գնահատում: Բուհի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների վերլուծությամբ, շահակիցների կարծիքների	1. Բուհի առաքելությանը համապատասխան 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների առանձնացում շահակիցների կարիքների հաշվառմամբ: Դրանց իրագործման գնահատման	Կատարված է:	2014 թ. հուլիս-սեպտեմբեր:	1.2011-2015 թթ. բուհի գործունեության ամփոփում: 2. Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանմամբ վերանայված առաքելության և 2015-2020 թթ. ռազմավարական ծրագրի առկայություն:	1.Որակի ապահովման վարչության վերլուծություն: 2.Բուհի վերանայված առաքելության և նպատակների վերաբեր

հաշվառմամբ բուհի առաքելության ու նպատակների վերանայում, 2015-2020 թթ. ռազմավարական ծրագրի մշակում և հաստատում:	մեխանիզմների ստեղծում:				յալ շահակիցների կարծիքների առկայություն:
	2. Բուհի 2013-2015 թթ. կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի իրականացման մշտադիտարկման անցկացում:		Ավարտել մինչև 2015 թ. հուլիս:		
	3.Արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմների լրամշակում:	Իրագործման փուլում է:	Ավարտել մինչև 2015 թ. հուլիս:		
	4. Արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմների կիրառում, գնահատում և բարելավում:	Իրագործման փուլում է:	Ավարտել մինչև 2015 թ. հունիս:		
	5. Բուհի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին վիճակագրական և այլ գործոնների ուսումնասիրություն, և դրանց արդյունքների հաշվառում ՌԾ կազմելիս:	Իրագործման փուլում է:	Գործընթացը ավարտել մինչև 2015 թ. հունիս:		
	6. 2015-2020 թթ. համար նոր ռազմավարական ծրագրի նախագծի մշակում, շահակիցների հետ քննարկում և հաստատում:	Պլանավորվում է:	2015 թ. փետրվար-հունիս:		
	7.Բուհի ՌԾ-ի իրականացման ընթացիկ արդյունքների պարբերական	Պարբերաբար իրականացվում է:	Յուրաքանչյուր ուստարվա ավարտի		

	հրապարակում՝ ինչպես ներքին շահակիցների համար, այնպես էլ արտաքին:		ն:		
ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ					
ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը					
1	2	3	4	5	6
1.Եվրոպական առաջավոր փորձի ուսումնասիրությամբ ժողովրդավարացնել կառավարման մշակույթը՝ լայնորեն ներգրավելով շահակիցների ն բուհի կառավարմանը:	1.Ներքին շահակիցների կարծիքների ներառմամբ վերանայել բուհի կառավարմանը վերաբերող կարգերը, դրանցում ներառելով կառավարման էթիկայի կանոններ, շահակիցներին կառավարմանը մասնակից դարձնելու մեխանիզմներ:	Պլանավորվում է:	2014-2019 թթ.	Կառավարման մշակույթի ժողովրդավարացում և շահակիցների ակտիվ ներգրավում:	Բուհի կառավարման գործընթացներով շահակիցների բավարարվածություն:
	2. Բուհի բոլոր ստորաբաժանումների համար վերից վար հաշվետվողականությա ն ապահովում:	Մշակվել է հաշվետվողականության ծրագիրը:	Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:		
	3.Ուսանողների կարիքների վերհանմամբ կառավարման ոլորտում ուսանողների ներգրավվածությունը ապահովող հատուկ մեխանիզմների ստեղծում:	Անցկացվել են ուսանողների տեղեկացվածությունը բարձրացնող հանդիպումներ:	2015 սեպտեմբեր-նոյեմբեր:		
2.Ներդնել ընթացիկ գործընթացների արդյունավետ	1.Մշակել հաշվետվողականությա ն և դրանց գնահատման ձևաչափեր բոլոր ստորաբաժանումների	Պլանավորվում է:	2014 թ. դեկտեմբեր:	Կառավարման արդյունավետության բարձրացում, պլանավորված	Որակի ապահովման ուսումնամեթոդա

ության և բուհի առաքելությանը դրանց համապատասխանության համալիր գնահատման մեխանիզմներ:	համար:			գործընթացների իրականացում, գնահատում և բարելավում:	կան և ուսանողական հանձնաժողովների հետազոտությունների արդյունքների համադրում:
	2.Բուհի բոլոր ստորաբաժանումների կողմից 2013/2014 ուստարվա ավարտին կատարողականների հիման վրա փորձարկել ստեղծված գնահատման մեխանիզմները:	Համալրվել են ՊԴ կազմի աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմները:	2014 թ. հուլիս:		
	3. Ստեղծել ուսանողներից կազմված մշտադիտարկման խումբ: Մշտադիտարկել գիտխորհրդի և ռեկտորատի որոշումների կատարումը, խախտումների վերաբերյալ կազմել հաշվետվություններ:		Ամբողջ ընթացքում:		
	4. 2015-2020 թթ. ՌԾ-ի հիման վրա մշակել կաճաժամկետ և միջնաժամկետ պլան-ժամանակացույցեր:	Պլանավորվում է:	2015/2016 ուստարվա սկիզբ:		

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ					
ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը					
1	2	3	4	5	6
1.Որակավորումների ազգային շրջանակին համապատասխան շուկայամետ մասնագիտական կրթական ծրագրերի ներդրում:	1. Կատարելով շուկայի ուսումնասիրություն, հարցումներ անցկացնելով շրջանավարտների և գործատուների շրջանում՝ մշակել ՄԿԾ-ների ակնկալվող ուսումնառության	ՄԿԾ-ների մշակում:	2014 թ. հոկտեմբեր:	Մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանություն շուկայի կարիքներին:	Ներքին և արտաքին շահակիցների բավարարվածություն:

	արդյունքները՝ հաշվի առնելով դուբլինյան նկարագրիչները:				
	2.ՄԿԾ-ների վերջնարդյունքների և համապատասխան առարկայական ծրագրերի և դրանց կրթական ելքային արդյունքների վերանայում:		2014 թ. դեկտեմբեր:		
	3.ՄԿԾ-ի և դասավանդվող առարկաների ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ներդրում:		2015 թ. փետրվար:		
	4.ՄԿԾ-ի և դասավանդվող առարկաների ակնկալվող վերջնադյունքներին համապատասխան ուսանողների գնահատման մեխանիզմների մշակում և ներդրում:		2015 թ. փետրվար:		
	5.Միջամբիոնային փոխքննարկումների, սեմինարների կազմակերպմամբ ամբիոններում առկա լավագույն փորձի ուսումնասիրում:		2015 թ. փետրվար-հունիս		
2. Ակադեմիական	1.Ակադեմիական ազնվության մշակույթի		2014 թ. փետրվար-	Ուսուցման գործընթացում ակադեմիական	Հարցախույզների

ազնվության համար բարենպաստ մթնոլորտի ձևավորում:	ձևավորման համար ՊԴ կազմի և ուսանողության շրջանում տեղեկատվական հանդիպումների անցկացում, հայեցակարգային մոտեցումների մշակում:		մարտ:	անազնվության դրսևորումների կրճատում:	արդյունքներ:
	2. Ակադեմիական անազնվության կրճատման տեսանկյունից գնահատման համակարգի փորձաքննության անցկացում և վերանայում: Լավագույն փորձի տարածում:	Որոշ դասախոսների կողմից ներդրվել են ուսուցման և գնահատման նոր մեխանիզմներ:	2014 թ. փետրվար-մարտ:		
ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ					
ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով					
1	2	3	4	5	6
1. Լրամշակել ուսանողների հավաքագրման քաղաքականությունը:	1.Հյուսիսային համալսարանի 2014/2015 ուստարվա ընդունելության նախապատրաստական աշխատանքների կարճաժամկետ ծրագրի մշակում, իրագործում:	Այցելություններ դպրոցներ, գովազդային հոլովակների թողարկում:	2014-2016 թթ. ուս.տարվա սկիզբ:	Ուսանողների հավաքագրման քաղաքականության լրամշակում:	Ուսանողական համակազմի պահպանում:
	2.Դպրոցականների մասնակցությամբ միջոցառումների (օլիմպիադա, ընթերցումներ, մրցույթներ, դատախաղեր և այլն)	Իրականացվում է:	Պարբերաբար:		

	իրականացում :				
2.Լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների արդյունավետության գնահատում:	1. Ուսանողների կարիքների վերհանմամբ լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների կատարման վերաբերյալ կարգի մշակում:	Կարիքների վերհանման փուլում է:	2014 թ. հոկտեմբեր:	Լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների արդյունավետության բարձրացում:	Շահակիցների հարցախույզեր:
	2.Լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների արդյունավետության գնահատման համար ուսանողների և դասախոսների շրջանում հարցումների անցկացում:	Պլանավորվում է:	2014 թ. դեկտեմբեր:		
3.Ուսանողության իրավունքների վերաբերյալ իրազեկման ծրագրի իրագործում:	1.Ուսանողության իրազեկման բարձրացման ծրագրի մշակում, իրազեկման սեմինարների անցկացում:	Պլանավորվում է:	2015 թ. մարտ:	Ուսանողության իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացում:	Որոշումների կայացման մակարդակում ուսանողների ակտիվության աճ:
	2. Ուսանողության իրազեկվածության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:		Պարբերաբար		

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով

1	2	3	4	5	6
1. ՄԿԾ-ների պահանջների համապատասխան ՊԴ կազմի անհրաժեշտ մասնագիտական որակների	1. Մշակվող ՄԿԾ-ներում ՊԴ կազմին ներկայացվող պահանջների մանրամասն նկարագրում:	Կատարման ընթացքում է:	2014/ 2015 ուսումնական տարի:	ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան ՊԴ կազմի առկայություն:	Հարցախույզի արդյունքներ:
	2. Կադրերի	Պլանավ	2014/		

ապահովում:	ընտրության ընթացակարգերի լրամշակում և ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան կաղրերի ընդունում:	որվում է:	2015 ուսումն ական տարի:		
	3.ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությա ն մշակում:	Պլանավ որվում է:	2014/ 2015 ուսումն ական տարի:		
	4. ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան ՊԴ կազմի վերապատրաստու մների անցկացում:	Պլանավ որվում է:	2014/ 2015 ուսումն ական տարի:		

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ

1	2	3	4	5	6
1.Բուհում գիտական հետազոտությունների կատարման ավելացման և նորարարական նախագծերի կրթական գործընթացում կիրառման համար մշակել երկարաժամկետ քաղաքականություն և ընթացակարգեր:	1. Ստեղծել գիտության և նորարարության կենտրոն, մշակել երկարաժամկետ ռազմավարություն, քաղաքականություն և ընթացակարգեր:	Բուհի ՌԾ-ում որպես առաջնահերթություն առանձնացվել է գիտական հետազոտությունների զարգացումը: Որակի ապահովման հայեցակարգը ներառել	2014 թ. սեպտեմբեր:	Հետազոտահեն կրթական համակարգի ձևավորում:	1.Շահակիցների բավարարվածություն: 2.Բուհի գիտական հետազոտությունների թվաքանակի դինամիկա: 3. Բուհի դասախոսների արտասահմանյան
	2.Անցկացնել կրթության ու գիտության արդի առավել հրատապ հիմնախնդիրներին նվիրված ներհամալսարանական, հանրապետական ու միջազգային գիտաժողովներ:		պարբերաբար		

		է գիտական հետազոտությունների որակի ապահովման գործիքակազմը: Մշակվել է գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների հեռանկարային ծրագիր:			գիտական ամսագրերում հրատարակված հոդվածների դինամիկա 4. Գիտական հետազոտություններում ընդգրկված ուսանողների թվաքանակի դինամիկա:
	3.Ամբիոնների աշխատանքային պլաններում հստակ ժամանակացույցով նախատեսել գիտակրթական սեմինարներ, գիտական ընթերցումներ ապահովելով ուսանողների մասնակցությունը:		Յուրաքանչյուր ուստարվա սկզբին:		
	4. Դասավանդման և ուսումնառության ընթացքում գիտական հետազոտությունների ներդրման արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակում:		2014 թ. հոկտեմբեր:		

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

1	2	3	4	5	6
ՄԿԾ-ները անհրաժեշտ ռեսուրսների ապահովման նպատակով մեխանիզմների ստեղծում, ռեսուրսների համալրում:	1. ՄԿԾ-ների ռեսուրսներով ապահովվածության վերաբերյալ կարիքների վերհանման համար հարցումների անցկացում դասախոսների և ուսանողների շրջանում:	Կազմվել են հարցաշարերը:	2014թ. սեպտեմբեր:	Բարձրորակ կրթության համար անհրաժեշտ ռեսուրսային բազայի առկայություն:	Հարցախույզների արդյունքներ:

	2. Մշակվող ՄԿԾ-ներում ելքային արդյունքների ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների մանրամասն ներկայացում:	ՄԿԾ-ները մշակվել են:	2014թ.սեպտեմբեր:		
	3. Մշակվելիք նոր ՌԾ-ում ռեսուրսների ապահովմանն ուղղված պահանջների վերանայում:	Պլանավորվում է:	2015թ. հունվար:		
2.Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմների ստեղծում:	1. Ներքին և արտաքին շահակիցների՝ ՄԿԾ-ով բավարարվածության վերաբերյալ տեղեկատվության պարբերական հավաքագրում և վերլուծում:	ՊԴ կազմի և ուսանողության ռեսուրսների վերաբերյալ հարցաշարերի կազմում:	Պարբերաբար:	Ռեսուրսների մասով առկա կարիքների անընդհատ բացահայտում, գնահատում և բարելավում:	Հարցախույզների արդյունքներ:
	2.Արտաքին փորձագետի/բնագավառի գործատուի կարծիքի ապահովում:		Պարբերաբար:		

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը

1	2	3	4	5	6
1.Մշակել բուհի կողմից հասարակությանը տրամադրվող ծառայություններ	1. Վերապատրաստումների դասընթացների ծրագրի կազմում, դրա վերաբերյալ հասարակությանը		Պարբերաբար, սկսած 2015 թ.:	Բուհ-հասարակություն հետադարձ կապի կայունացում:	Շահակիցների բավարարվածությունը ստուգող

րի մատուցման համապարփակ ծրագիր և դասակարգել ըստ ուղղությունների:	տեղեկատվության տրամադրում:				հարցումների արդյունքներ:
	2.Ակտիվացնել բուհի իրավաբանական կլինիկայի աշխատանքը:		2014/ 2015 ուստարվանից:		
	3.Օժանդակել հանրակրթական հաստատություններին կրթադաստիարակչական հարցերում, զեղչված գներով բուհի դիմորդների համար ապահովել նախապատրաստական դասընթացներ:		Սկսած 2014/ 2015 ուստարվանից:		
	4. Կատարած աշխատանքի արդյունավետության ստուգման համար հարստացնել հետադարձ կապի մեխանիզմները, այդ թվում՝ սոց.ցանցերի միջոցով հասարակության շրջանում հարցման անցկացման միջոցով: Հավաքած տվյալների վերլուծման արդյունքների հիման վրա բարելավել գործընթացները:		Պարբերաբար, սկսած 2014/2015 ուստարվանից:		
ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ					
Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը					
1	2	3	4	5	6

1. Զարգացնել բուհի արտաքին կապերը: Վարել բուհի միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն:	1. Մշակել Հյուսիսային համալսարանի արտաքին կապերի հայեցակարգը և քաղաքականությունը, վերանայել և ընդլայնել բուհի արտաքին կապերի բաժնի կանոնակարգը:	2015 թ. մարտ:		Արտաքին կապերի հարստացում, բուհի մասին կայուն տեղեկատվության ապահովում, բուհի ճանաչում արտաքին գործընկերների կողմից:	Բուհի արտաքին կապերի զարգացման դինամիկա:
	2. Արտաքին կապերի զարգացման ծրագրերի մշակմանը մասնակից դարձնել շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, PR պատասխանատուներին, օգտագործել բուհի պաշտոնական կայքէջն ու ֆեյսբուքյան էջը՝ ուշադրության կենտրոնում պահելով օտարալեզու նյութերի հրապարակումը:		Պարբերաբար:		
	3. Ակադեմիական մոբիլության միջազգային ծրագրերում մասնակցելու համար ավելի լայնորեն ընդգրկել ուսանողներին և դասախոսներին օտար լեզվի ինտենսիվ դասընթացներում:	Մեկ փուլով օտար լեզուների գծով դասախոսների վերապատրաստման իրականացում:	Պարբերաբար:		
	4 .Հնարավորինս շատ հայտեր ներկայացնել	5. Դրամաշնորհայի	Պարբերաբար:		

	դրամաշնորհային ծրագրերի մասնակցելու համար, ակտիվացնել ֆոնդռեյզինգի քաղաքականություն:	ն ծրագրե րի առկայու թյուն:			
	5. Մշտադիտարկել, պարբերաբար վերլուծել և գնահատել բուհի միջազգայնացմանը ուղղված քայլերը:		Պարբեր աբար:		

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը

1	2	3	4	5	6
1.Որակի ապահովման համակարգի զարգացում, որակի ապահովման ամբողջական համակարգի ներդրման համար ծրագրի ստեղծում: Շահակիցների տեղեկացվածության աստիճանի վերաբերյալ հավաստի տվյալների հավաքագրման համար հետադարձ կապի մեխանիզմների համալրում: Միջազգային փորձագետի կողմից բուհի որակի ապահովման	1.Որակի ապահովման գործընթացներում հնարավորինս շատ շահակիցների ներգրավում վերապատրաստման դասընթացների, կարճաժամկետ և միջնաժամկետ աշխատանքային խմբերի, մշտադիտարկման խմբերի ձևավորման միջոցով:	Ստեղծված է որակի ապահովման համակարգի զարգացման գործընթացի մշտադիտարկման խումբը:	2014 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր:	Որակի ապահովման ամբողջական համակարգին անցման մեխանիզմների առկայություն:	1.Որակի ամբողջական կառավարմանն անցնելու ծրագրի հաստատման վերաբերյալ Հյուսիսային համալսարանի Գիտխորհրդի որոշման առկայություն:
	2.Որակի ապահովման ձեռնարկի մշակում և տպագրում:		2014 թ. հոկտեմբեր:		
	3.Որակի ամբողջական կառավարմանն անցնելու ծրագրի նախագծի մշակում:		2014թ. հունիսի 5-սեպտեմբերի 5:		
	4.Որակի		2014թ.		

համակարգի զարգացման ծրագրի և գործընթացների գնահատում:	ապահովման համակարգի և զարգացման ծրագրերի արտաքին գնահատում:		հոկտեմբեր:		
	5. Որակի ապահովման ամբողջական համակարգի ներդրման ծրագրի համապատասխան կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի մշակում:		2015թ. մայիս:		

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՑԱՆԿ

Շահակիցների իրազեկվածության բարձրացման նպատակով ներկայացնում ենք բուհում գործող բոլոր կարգերի ցանկը: Նշենք, որ կարգերը պարբերաբար վերանայվում են և բարելավվում: Դրանք հասանելի են բուհի կայքում: Բուհի ՌԾ առաջնահերթությունների և որակի ապահովման հայեցակարգի ընդունման հետ կապված առաջիկայում որոշ կարգեր հնարավոր է, որ վերանայվեն:

№	Կարգի անվանումը	Հաստատման տարեթիվը
1.	Ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի ներդրման և կիրարկման ընթացքում Հյուսիսային համալսարանի կառավարման օղակների ու պաշտոնատար անձանց լիազորությունները և պարտականությունները:	2008 թ.
2.	Կարգ Հյուսիսային համալսարանի արխիվի գործունեության:	2009 թ.
3.	Կարգ Հյուսիսային համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման ու պաշտպանության:	2009 թ.
4.	Կարգ Հյուսիսային համալսարանում անվանական կրթաթոշակներ նշանակելու:	2009 թ.
5.	Կարգ Հյուսիսային համալսարանում ուսանողներին վճարովի համակարգից անվճար համակարգ տեղափոխելու:	2009 թ.
6.	Կանոնակարգ Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի:	2009 թ.
7.	Կանոնակարգ Հյուսիսային համալսարանի դեպարտամենտի խորհրդի:	2009 թ.
8.	Կանոնակարգ Հյուսիսային համալսարանում ամբիոնների վարիչների ընտրությունների	2010 թ.
9.	Կանոնակարգ Հյուսիսային համալսարանում կրթական ծրագրերի ու մասնագիտությունների ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման	2010 թ.
10.	Կանոնակարգ Հյուսիսային համալսարանում «Լավագույն ուսանող» մրցույթի անցկացման:	2010
11.	Կանոնադրություն Հյուսիսային համալսարանի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի:	2010 թ.
12.	Հյուսիսային համալսարանում ուսանողների և դասախոսական կազմի կողմից դիմում-բողոքների	2010

	ներկայացման, քննարկման և որոշումներ կայացնելու մասին:	
13.	Կանոնադրություն Հյուսիսային համալսարանի գրադարանի:	2010
14.	Կարգ և պայմաններ Հյուսիսային համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անդամների վերապատրաստման:	2010
15.	Կարգ և պայմաններ Հյուսիսային համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորման:	2010
16.	Հյուսիսային համալսարանում վարչակազմի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների իրավունքներն ու պարտականությունները:	2010
17.	Հյուսիսային համալսարանի ներքին կարգապահական կանոնները:	2010
18.	Կարգ Հյուսիսային համալսարանում աշխատանքային և ուսումնական կարգապահական խախտումների դեպքում պատասխանատվության միջոցների կիրառման:	2010
19.	Կարգ Հյուսիսային համալսարանի «Լավագույն ֆակուլտետ» անվանակարգի շնորհման մասին:	2010
20.	Կարգ Հյուսիսային համալսարանի «Տարվա լավագույն ամբիոն» անվանակարգի շնորհման մասին:	2010
21.	Կարգ Հյուսիսային համալսարանի «Տարվա լավագույն շրջանավարտ-մասնագետ» անվանակարգի շնորհման մասին:	2010
22.	Կանոնակարգ Հյուսիսային համալսարանի ուսումնական վարչության:	2010
23.	Կանոնակարգ ուսանողների կուրսային աշխատանքների:	2010
24.	Կանոնակարգ ուսանողների ավարտական աշխատանքների:	2010
25.	Կարգ Հյուսիսային համալսարանի գործավարության:	2010
26.	Կանոնադրություն Հյուսիսային համալսարանի էլեկտրոնային գրադարանի:	2011
27.	Կարգ Հյուսիսային համալսարանում մագիստրատուրայի ընդունելության:	2011 թ.
28.	Կանոնակարգ Հյուսիսային համալսարանում որակի բարելավման, որակյալ բարձրագույն կրթության ապահովման նպատակով ուսանողական հարցման և դասախոսների գնահատման:	2011 թ.
29.	Կանոնակարգ Հյուսիսային համալսարանի	2012 թ.

	ամբիոնների գործունեության:	
30.	Կանոնակարգ Հյուսիսային համալսարանի դեպարտամենտի:	2012 թ.
31.	Կանոնակարգ Հյուսիսային համալսարանում ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման:	2012 թ.
32.	«Հյուսիսային համալսարանի» կանոնադրություն	2013 թ.
33.	Կարգ Հյուսիսային համալսարանում ուսանողների գիտելիքների գնահատման:	2013 թ.
34.	Կանոնադրություն և կառուցվածք Հյուսիսային համալսարանի որակի ապահովման վարչության:	2014 թ.
35.	Կարգ Հյուսիսային համալսարանի արտաքին կապերի բաժնի:	2014 թ.

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1.ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Կոմպետենցիան գիտելիքի, կարողությունների ու ունակությունների դինամիկ համակցությունն է, որը, ըստ էության, կրթական ծրագրի հիմնական նպատակն է:

Բուհի մանկավարժական կադրերի մասնագիտական կոմպետենցիաների կատարելագործումը մեծապես նպաստում է նաև բուհի հեղինակության բարձրացմանը, քանի որ այս դեպքում համալսարանն ստանում է հնարավորություններ, որոնք թույլ են տալիս գործատուներին և ընդհանրապես հասարակությանը պարզորոշ ցույց տալ, թե շրջանավարտների մեջ ինչպիսի իրազեկություններ է ձգտում ապահովել բուհը և համապատասխանաբար ինչպիսի պահանջներ է առաջադրում իր դասախոսական կազմին:

Այսպիսով, եթե գծապատկերով փորձենք պատկերել աշխատաշուկա-շրջանավարտ, կոմպետենցիա-դասախոս, կոմպետենցիա-վերապատրաստում հարաբերությունը, ապա կստացվի հետևյալ պատկերը՝





Հիմք ընդունելով մասնագիտական գրականության մեջ կատարված տարաբնույթ դասակարգումները՝ փորձենք ներկայացնել մանկավարժական կադրերի հետևյալ իրազեկությունները՝ հնարավորինս իրատեսական պահանջներով.

Մասնագիտական (առարկայի խոր իմացություն, գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, առարկայի շրջանակներում գիտության վերջին նվաճումների մասին տեղեկացվածություն, առարկայական չափորոշիչների ու ծրագրերի իմացություն):

Անձնային (տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու և ինքնակառավարվելու կարողություն, ուսումնական գործընթացում հնարավոր պրոբլեմային իրավիճակները հարթելու կարողություն, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և էթիկայի նորմեր ձևավորելու կարողություն, ուսումնառողների ներուժի գնահատում, լսարանին համոզելու կարողություն):

Մանկավարժական (մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում, գործող օրենսդրական փաստաթղթերի իմացություն, ուսանողների քննադատական մտածողության զարգացում, ուսումնառողների հետ իրենց ուժեղ և թույլ կողմերը վերլուծելու կարողություն, ուսուցման գործընթացում ինչպես մարդկային, այնպես էլ նյութական ռեսուրսների ուսումնասիրություն և վերլուծություն անելու

ունակություն, դասապրոցեսը սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան կառուցելու կարողություն, սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու հմտություն, մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների, եղանակների համադրում, անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում ինչպես լսարանային, այնպես էլ արտալսարանային գործունեություն իրականացնելիս, սովորողների ուսուցողական-ճանաչողական գործունեության խթանում, ուսումնառողների մեջ սովորելու կայուն դրդապատճառների ձևավորում և խթանում):

Գիտահետազոտական (հետազոտական նախագծերում ընդգրկվելու պատրաստակամություն, գիտական աշխատանքներ հրատարակելու հմտություններ, մասնակցություն գիտաժողովներին, ուսանողների հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ):

Կազմակերպչական (բանավեճեր, քննարկումներ կազմակերպելու կարողություն, ուսանողների ակտիվությունը խթանելու կարողություն, լաբորատոր աշխատանքներ, անհատական խորհրդատվություն, դիպլոմային և կուրսային աշխատանքներ, արտադրական պրակտիկա կազմակերպելու և ղեկավարելու հմտություն:

Հաղորդակցական (խոսքի բարձր մշակույթի դրսևորում, ինչպես նաև խոսքի կատարելագործման ձգտում, միջանձնային հարաբերությունների պայմանական մեխանիզմների ձևավորում դասախոսի կողմից՝ հստակ մշակված խոսք, պահանջների և առաջադրանքների հստակ ձևակերպում, հիմնադրույթների հակիրճ ձևակերպում, օտար լեզուների իմացություն, օտար լեզուներով մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություն):

Հար և նման պահանջներից էլ բխում է դասախոսների մանկավարժական կոմպետենցիաների կատարելագործման խնդիրը՝ իր հերթին առաջ քաշելով մանկավարժական կադրերի վերապատրաստման, որակավորման և վերաորակավորման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է առանձնացնել դասախոսի վերապատրաստման հետևյալ ուղղությունները՝

- համակարգչային գրագիտություն,
- օտար լեզուների կատարելագործում,
- մանկավարժական կոմպետենտություն:

2.ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԱԹԵՐԹ

Ծրագրի անվանումը	Մասնագիտության թվանիշը	Շնորհվող որակավորումը	Մասնագիտության ծրագրի յուրացման ժամկետը

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Հիմնավորել նոր կրթական ծրագիր ստեղծելու անհրաժեշտությունը՝ այն կապելով Հյուսիսային համալսարանի առաքելությանը և աշխատաշուկայի պահանջներին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մասնագիտության ծրագիրը նպատակ ունի՝

1.
2.
3.

ՏՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Նշել տվյալ մասնագիտությամբ բակալվարի գործունեության ոլորտները, օրինակ՝

մանկավարժական,

մշակութային,

գիտահետազոտական:

ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՈԱՇ-ԻՆ ԵՎ ՈՍՇ-ԻՆ

Այս մասում անհրաժեշտ է նշել, թե ծրագրի հաջող ավարտին ուսանողներն ինչ գիտելիքների, կարողությունների և հմտությունների կտիրապետեն: Պարտադիր է, որ ակնկալվող վերջնարդյունքները համադրելի լինեն Որակավորումների ազգային և սեկտորալ շրջանակների պահանջների հետ և նշված լինեն այդ վերջնարդյունքների ձևավորմանը միտված ուսումնառության/ դասավանդման մեթոդները և գնահատման մեթոդները:

	Դասընթացները ըստ ուսումնական պլանի	Վերջնարդյունք	Ուսուցման մեթոդներ	Գնահատ. մեթոդներ
ԲԱԺԻՆ 1	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ	գիտելիք		
		կարողություն		
		հմտություն		
ԲԱԺԻՆ 2	Մաթեմատիկական և բնագիտական դասընթանցներ	գիտելիք		
		կարողություն		
		հմտություն		
ԲԱԺԻՆ 3	Ընդհանուր մասնագիտական դասընթացներ	գիտելիք		
		կարողություն		
		հմտություն		
ԲԱԺԻՆ 4	Հատուկ մասնագիտական դասընթացներ	գիտելիք		
		կարողություն		
		հմտություն		
ԲԱԺԻՆ 5	Պրակտիկա	գիտելիք		
		կարողություն		
		հմտություն		

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ներկայացնել կրթական ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և բնագիտական դասընթացների ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացները, դրանց բաշխումն ըստ կիսամյակների, կրեդիտները և այլն:

ՊՐԱԿՏԻԿԱ

Պետք է հստակ նշված լինեն ուսումնական և արտադրական պրակտիկաների ժամկետները և այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որտեղ հնարավոր է կազմակերպել պրակտիկան:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Ուստարի	Քննության անվանում

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նշել տեղեկություններ գնահատման համակարգի վերաբերյալ, եթե տվյալ ՄԿԾ-ի շրջանակներում գնահատման համակարգն ունի առանձնահատկություններ մյուսների համեմատությամբ:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Պրոֆեսորադասախոսական կազմ

Հիմնավորել մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածությունը՝ ներկայացնելով կազմը անհրաժեշտ որակավորումով և թվակազմով:

2. Նյութատեխնիկական և ուսումնաօժանդակ միջոցներ

Հիմնավորել, որ մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար ստեղծված է համապատասխան անհրաժեշտ ուսումնական միջավայր՝ համակարգչային լսարաններ, ուսուցման տեխնիկական միջոցներ, մասնագիտական գրականություն, ուսումնամեթոդական ու տեղեկատվական նյութեր:

Կրթական ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար՝

Անդամներ՝

Ծրագիրը քննարկվել և հավանության է արժանացել ֆակուլտետային խորհրդի կողմից (որոշում թիվ, ամսաթիվ):

Ֆակուլտետի դեկան՝

Ուսումնական վարչության պետ՝

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը	Հյուսիսային համալսարան
Ծրագրի անվանումը	Հայոց լեզու և գրականություն
Ծրագիրը հաստատվել է	Ծրագիրը հաստատվել է ռեկտորատի 1.10.2014 թ. նիստում
Մասնագիտության թվանիշը	031000.62, 031000.62.1
Շնորհվող որակավորումը	Կրթական ծրագիրը թույլ է տալիս պատրաստել մասնագետ երկու որակավորմամբ՝ բանասիրության բակալավր և մանկավարժության բակալավր, ուսուցիչ:
Ուսուցման ձևը	Առկա
Մասնագիտության կրթական ծրագրի տևողությունը	4 տարի
Ծանրաբեռնվածությունը	240 կրեդիտ
Կրթական ծրագրի իրականացման լեզուն	Հայերեն
Մասնագիտության կրթական ծրագրի մշակող՝	Ծովինար Ասատրյան, բանասիրական գիտությունների թեկնածու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի հիմնավորումը:

1.2. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ նորմատիվային փաստաթղթերը:

1.3. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի նպատակը:

1.4. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակման սկզբունքները:

1.5. Դիմորդին ներկայացվող պահանջները:

2. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի մասնագիտական գործունեության ոլորտները և ձևերը:
3. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի հիմնական ուսումնառության արդյունքները:
4. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացման ընթացքում ուսումնական պրոցեսի բովանդակությունը և կազմակերպումը կարգավորող փաստաթղթերը՝

4.1. ուսումնական պրոցեսի ժամանակացույց,

4.2. ուսումնական պլան,

4.3. դասընթացների ուսումնական ծրագրեր,

4.4. պրակտիկայի ծրագիր:

5. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ռեսուրսները՝

5.1. պրոֆեսորադասախոսական կազմը,

5.2. մասնագիտության կրթական ծրագրի ուսումնամեթոդական ապահովվածությունը,

5.3. մասնագիտության կրթական ծրագրի նյութատեխնիկական ապահովվածությունը:

6. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացումն ու գնահատումը:

Ընդհանուր դրույթներ

«Հյուսիսային համալսարան» բարձրագույն ուսումնական հաստատության կողմից իրականացվող «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը փաստաթղթերի փաթեթ է, որը մշակվել և հաստատվել է բուհի առաքելությանը համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնելու համար:

Մասնագիտության կրթական ծրագիրը կարգավորում է ողջ ուսումնական գործընթացը, հստակեցնում դրա նպատակները, սահմանում է ակնկալվող արդյունքները, մշակում դրանց միտված դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունը, շրջանավարտի մասնագիտական պատրաստվածության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող հիմնական պահանջները: Ծրագիրը ներառում է ուսումնական պլանը, դասընթացների առարկայական ծրագրերը, ուսումնական և արտադրական պրակտիկաների ծրագրերը, օրացուցային ուսումնական ժամանակացույցը, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական և նյութատեխնիկական ապահովածությանը վերաբերող պահանջները, որոնք ապահովում են «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության որակը:

1.1. **Մասնագիտության կրթական ծրագրի հիմնավորումը**

Ժամանակակից իրականությունն ու հարափոփոխ աշխատաշուկան կրթության ոլորտին նորանոր մարտահրավերներ են ներկայացնում: Եթե նախկինում աշխատաշուկան կարող էր բուհերի շրջանավարտներին ապահովել աշխատանքով՝ հիմնվելով միայն նրանց ստացած որակավորումների վրա, ապա այսօր տեղի է ունենում անցում որակավորումներից դեպի ուսումնառության ելքային արդյունքները: Հարկ է նշել, որ որակավորումը ոչ թե մղվում է երկրորդ պլան, այլ իր մեջ ներառում է շրջանավարտների որոշակի մասնագիտական որակներ, գիտելիքներ, ինչպես նաև ընդհանուր կարողություններ և հմտություններ:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության շրջանավարտը կարող է զբաղվածություն գտնել իր մասնագիտությամբ, եթե իր աշխատանքին կարողանում է ցուցաբերել անհատական, ստեղծագործական մոտեցում, եթե օժտված է քննադատական մտածողությամբ, եթե ունի նորարարական տեխնոլոգիաների (այս դեպքում՝ մանկավարժական, համակարգչային, հաղորդակցական և այլն) վերաբերյալ բարձր իրազեկվածություն: Միայն այսօրինակ պատրաստվածությունը շրջանավարտին կարող է դարձնել մրցունակ, իսկ արդեն աշխատողին՝ բնութագրել այնպիսի անհատական գծերով, որոնք կդարձնեն նրան անփոխարինելի տվյալ աշխատանքային կոլեկտիվում: Շրջանավարտի նմանօրինակ հատկանիշների ձևավորումը ուսուցման միայն

ավանդական մոտեցումներով ապահովելն այլևս անհնարին է: Այն ենթադրում է համապատասխան ուսումնական միջավայրի ստեղծում, որը հնարավորություն կընձեռի շրջանավարտին աշխատաշուկա մտնելու թվարկված բոլոր անհրաժեշտ որակներով: Այս նպատակով Հյուսիսային համալսարանը առաքելության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ուսանողակենտրոն միջավայրի ստեղծմանը:

Բացի դրանից՝ աշխատաշուկայում այսօր ավելի հաճախ կարճաժամկետ ծրագրեր, նախագծեր են առաջարկվում, քան երկարամյա աշխատանքներ: Սա ևս վկայում է այն մասին, որ բուհի շրջանավարտը բարձր պատրաստվածություն, աշխատանքում արագ ներգրավվելու կարողություններ ու համագործակցելու հմտություններ պետք է ունենա իր մասնագիտական ոլորտում զբաղվածություն գտնելու համար:

Նորանոր պահանջներ են ներկայացվում նաև այն իմաստով, որ ցանկացած մասնագիտություն անընդհատական զարգացման և կատարելագործման ուղիով է ընթանում: Այսօր թերևս հնարավոր չէ գտնել այնպիսի աշխատատեղեր, որտեղ հնարավոր է աշխատել ամբողջ կյանքի ընթացքում առանց մասնագիտական աճի և վերապատրաստումների:

Այսինքն՝ շրջանավարտների առջև դրվում է նաև ամբողջ կյանքի ընթացքում ուսումնառելու պարտավորություն:

Ահա թե ինչու այսօր աշխատաշուկայում կարևորվում է ոչ միայն մասնագիտական որակավորումը, այլ նաև որոշակի գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետելը:

Հյուսիսային համալսարանի առաքելության մեջ նույնպես շեշտվում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, գիտակրթական գործունեություն իրականացնելու և ստացած գիտելիքները գործնականում կիրառելու ունակ կադրերի պատրաստումը:

Այսպիսով, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագիրը մշակելիս անկյունաքար են ընդունվում համալսարանի առաքելությունն ու ժամանակակից աշխատաշուկայի հիշյալ պահանջները, որոնք պարտադրում են իրականացնել՝

- վերջնարդյունքների ձևավորմանը միտված ուսուցում,
- ուսանողակենտրոն միջավայրի ապահովում,

- տեսական և գործնական բաղադրիչների փոխկապակցվածություն,
- համապատասխան ռեսուրսների տրամադրում:

1.2 «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերը

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագիրը մշակելու համար ուսումնասիրվել են արտաքին հղման հետևյալ աղբյուրները՝

- ՀՀ օրենքը կրթության մասին (ընդունվել է 14.04.1999թ.),
- ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական կրթության մասին (ընդունվել է 14.12 2004թ.),
- ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակը (31 մարտի 2011 թվականի N 332-Ն),
- Օրինակելի կարգ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման (հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունիսի 19-ի N 588-Ա/Ք հրամանով):

1.3. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի նպատակը

Հյուսիսային համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագիրը միասնական, ամբողջական, աստիճանակարգված համակարգ է, որի նպատակն է՝

1. ՀՈԱՇ-ի 6-րդ մակարդակի բնութագրիչներին համապատասխան բարձրորակ կադրեր պատրաստելը «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության գծով,
2. համալսարանի առաքելությանը համապատասխան՝ գիտակրթական գործունեություն իրականացնելու ունակ կադրեր պատրաստելը,
3. աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ ստացած գիտելիքները մասնագիտական ոլորտում կիրառելու կարողություն ունեցող կադրեր պատրաստելը:

1.4 «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակման սկզբունքները

Մասնագիտության կրթական ծրագիրը կազմելու հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

1. **Համակարգվածություն.** այն ենթադրում է լեզվական տարբեր մակարդակներն ու ենթամակարդակները, փաստերն ու երևույթները, գրական ընթացքի փուլերը ուսումնասիրել ոչ միայն առանձին-առանձին, այլև համակարգված, մի ամբողջական ծրագրի սահմաններում: Այդպիսի մոտեցման դեպքում մեկ ընդհանուր համակարգում միավորվում են տարբեր դասընթացներ և բացահայտվում է վերջիններիս փոխպայմանավորվածությունը:
2. **Կրթության ակադեմիականություն**. այն ներառում է լեզվի և գրականության ուսուցման ժամանակային (լեզուն ուսումնասիրվում է համաժամանակյա և տարաժամանակյա դիտակետերով, գրականությունը՝ ըստ զարգացման շրջանների) և տարածական գործոնները (արևելահայերենի և արևմտահայերենի, բարբառների, ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությունը):
3. **Գիտականություն.** լեզվի և գրականության ուսուցումը կազմակերպվում է պատմահամեմատական, վերլուծական, կենսագրական, կառուցվածքային, տիպաբանական մեթոդների կիրառմամբ և համադրությամբ:
4. **Ազգային և համամարդկային արժեքների զուգակցում**. հայոց լեզուն և հայ գրականությունը ազգային հոգևոր մշակույթի կարևոր մասն են, հայ ժողովրդի գոյապահպանության ամուր կռվաններից հզորագույնը: Ուստի հայագիտության այս ոլորտի ուսուցումը հետապնդում է ազգապահպանության նպատակ: Գլոբալացման ժամանակակից փուլում, երբ մարդկությունը բախվում է տեխնոգեն հասարակության խնդրին, կարևորվում է նաև հումանիստական աշխարհայացքի ձևավորումը, ինչը նույնպես ընկած է մասնագիտության կրթական ծրագրի հիմքում:

5. **Կրթության շարունակականություն.** անհերքելի է, որ գիտելիքը սահման չունի. մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները կատարելագործվում են ամբողջ կյանքի ընթացքում:

6. **Հաջորդականություն,** առանց որի հնարավոր չէ համակարգված գիտելիքներ ապահովել:

1.5 Դիմորդին ներկայացվող պահանջները

Դիմորդներին ներկայացվող պահանջները կարգավորվում են հետևյալ փաստաթղթերով.

- ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ (ըստ բակալավրի կրթական ծրագրի) (հաստատված է ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 26-ի 597- Ն որոշմամբ):
- Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսուցումը շարունակելու կարգ (հաստատված է ՀՀ կառավարության 2002 թվականի 20.05.2002թ. N 589 որոշմամբ):
- Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգ (հաստատված է ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1240 - Ն որոշմամբ):

2. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի գործունեության ոլորտները և ձևերը

Այս կրթական ծրագիրը թույլ է տալիս պատրաստել մասնագետ երկու որակավորմամբ՝ բանասիրության բակալավր և մանկավարժության բակալավր, ուսուցիչ:

ա) «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բանասիրության բակալավրը բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել հետևյալ բնագավառներում՝

- գիտահետազոտական,

- մշակութային,
- խորհրդատվական:

բ) «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության բակալավր, ուսուցիչը բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել հետևյալ բնագավառներում՝

- գիտահետազոտական,
- կրթադաստիարակչական,
- մշակութային:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բանասիրության բակալավրը բուհն ավարտելուց հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝ ՀՀ և արտերկրի հայկական դպրոցներում՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, խմբագիր, սրբագրիչ, թանգարաններում, արխիվներում, Մատենադարանում՝ լաբորանտ, թարգմանիչ, էքսկուրսավար:

3. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի հիմնական ուսումնառության արդյունքները

Հետևյալ աղյուսակում ներկայացված են ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները՝ դրանց ձևավորմանը միտված դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությամբ: Աղյուսակի առաջին սյունակում ներկայացված են ուսումնական պլանի կրթամասերը, երրորդում՝ այդ կրթամասերին համապատասխան ուսումնառության արդյունքները, իսկ հաջորդ երեքում՝ դրանց ձևավորմանը միտված մեթոդաբանությունը:

Ուսումնական պլանի կրթամասեր	N	Ուսումնառության արդյունքներ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրը պետք է.	Դասավանդման մեթոդ	Ուսումնառության մեթոդ	Գնահատման մեթոդ

Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս	ՈՒԱ 1	Նկարագրի ժամանակակից փիլիսոփայական ուղղությունները, կեցության մասին գիտության հիմնադրույթները, նյութականի և վերացականի հասկացությունները, մատերիայի կազմակերպման ձևերը, սոցիալական գլոբալ զարգացում-ները:	Խոսքային մեթոդներ[14] (դասախոսություն, զրույց, քննարկում, ուսումնական բանավեճ) և զննական մեթոդներ:	Խմբային և անհատական աշխատանք, վերարտադրողական մեթոդներ, գործնական մեթոդներ:	Բանավոր անհատական հարցում[15], ինքնագնահատում, փոխադարձ գնահատում:
	ՈՒԱ 2	Ներկայացնի հայ ժողովրդի պատմությունը, քննադատորեն վերլուծի ազգային և միջազգային քաղաքական գործընթացները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում) և զննական մեթոդներ:	Խմբային և անհատական աշխատանք, վերարտադրողական մեթոդներ, զույգերով աշխատանք, գործնական մեթոդներ:	Բանավոր անհատական հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային)[16] կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
Ընդհանուր մաթեմատիկական և	ՈՒԱ 3	Բացատրի մշակութաբանության բարդ հիմնա-հարցերը:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում) և	Խմբային և անհատական աշխատանք, զույգերով աշխատանք,	Բանավոր անհատական հարցում, ինքնագնահատում,

[14] Ե՛վ դասավանդման, և՛ ուսումնառության, և՛ գնահատման մեթոդները այստեղ նկարագրված են ընդհանուր գծերով, առավել մանրամասն նախատեսվում է ներկայացնել յուրաքանչյուր դասընթացի առարկայական ծրագրի համապատասխան բաժնում:

[15] Բանավոր ներկայացումների ընթացքում հաշվի են առնվում հետևյալ չափանիշները՝ բովանդակությունը և առաջացած հարցերի պատասխանները, խոսքի տրամաբանական կառուցվածքը, առարկայի իմացությունը, կապը լսարանի հետ:

[16] Խմբային աշխատանքի պարագայում հաշվի են առնվում հետևյալ չափանիշները՝ թիմային աշխատանքի ներկայացումը, բովանդակությունը և եզրահանգումները, թիմային աշխատանքին մասնակցելու աստիճանը, թիմային աշխատանքի ձևավորված հմտությունները:

բնագիտական կրթամաս			զննական մեթոդներ:	գործնական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն:	փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 4	Համառոտի և նկարագրի օտար լեզվով գրված գեղարվեստական երկերը, գիտական աշխատանքները և փաստաթղթերը:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ:	Գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական):	Գրավոր հարցում, բանավոր անհատական հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 5	Բացատրի իրավական փաստաթղթերից օգ-տվելու հմտությունները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում,բանավեճ) և զննական մեթոդներ:	Տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ, մասնակցություն քննարկումներին:	Բանավոր անհատական հարցում, գրավոր հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ

					փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 6	Օգտագործի ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, կարողանա աշխատել գլոբալ համացանցում:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում) և գնանական մեթոդներ:	Տեղեկատվության ինքնուրույն որոնում համացանցում, անհրաժեշտ գրականության բեռնում և վերլուծություն, նոր ձեռք բերված տեղեկատվության մշակում, վերլուծություն, ինքնուրույն աշխատանքի ներկայացում:	Բանավոր անհատական հարցում, գրավոր հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 7	Բնութագրի հոգեբանության, գեղագիտության, բարոյագիտության հիմունքները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և գնանական մեթոդներ:	Վերարտադրողական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն, անհատական աշխատանք:	Բանավոր անհատական հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 8	Նկարագրի տնտեսագիտության	Խոսքային մեթոդներ	Վերարտադրողական	Բանավոր անհատակա

		տեսության հիմնա-դրույթները և արդի քաղաքագիտական հայեցակարգերը:	(դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ:	մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն, անհատական աշխատանք:	ն հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 9	Նկարագրի դժբախտ պատահարների, տարերային աղետների դեպքում բնակչության առաջին բժշկական օգնություն տրամադրելու միջոցները, թվարկի քաղաքացիական պաշտպանության հիմնական մեթոդները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական), պրոբլեմային իրավիճակի վերլուծություն:	Համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 10	Ներկայացնի ժամանակակից բնագիտության հիմնական հայեցակարգերը, բնապահպանական գլոբալ և տա-րածաշրջանային հիմնախնդիրները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ:	Խմբային, անհատական և զույգերով աշխատանք. տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, պրոբլեմային իրավիճակի վերլուծություն:	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:

	ՈՒԱ 11	Կիրառի ֆիզիկական դաստիարակության, առողջության պահպանման ու ամրապնդման ինքնուրույն, մեթոդապես ճիշտ միջոցներ:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց) և ցուցադրում:	Գործնական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական), վարժություններ:	Անհատական ներկայացում:
Ընդհանուր մասնագիտական կրթամաս	ՈՒԱ 12	Կիրառի հայոց լեզվի գրավոր և բանավոր հաղորդակցության հիմնական մեթոդները, միջոցներն ու ձևերը:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային, անհատական և զույգերով աշխատանք. գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական):	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 13	Ներկայացնի հայերենի տեղը լեզուների ծագումնաբանական, տիպաբանական և տարածքային դասակարգման մեջ:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական աշխատանք, տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական):	Բանավոր անհատական հարցում, գրավոր հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր/գրավոր հարցում :
	ՈՒԱ 14	Համադրի գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի ու արևմտահայերենի	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց,	Խմբային և անհատական հետազոտություն,	Բանավոր անհատական հարցում, համագործա

		կառուցվածքային հատկանիշները, հնչյունական, բառային և քերականական համակարգերը, բացատրի հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները:	քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական):	կցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 15	Բնութագրի հայոց լեզվի բարբառները և թվարկի բարբառների դասակարգման սկզբունքները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական հետազոտություն, հավաքագրական աշխատանք, թղթապանակների կազմում, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական):	Բանավոր կամ գրավոր անհատական հարցում:
	ՈՒԱ 16	Մեկնաբանի հայոց լեզվի և հայ գրականության տեսության և պատմության հիմնարար գիտելիքները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական հետազոտություն, տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ:	Անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 17	Կատարի բնագրի գրականագիտական, պատմաբանասիրակ	Խոսքային մեթոդներ (դասախոսու	Խմբային և անհատական հետազոտությ	Տեքստի գրականագիտական և

		ան, լեզվաոճական վերլուծություն և մեկնաբանություն:	թյուն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	ուն, տեսական նյութի վերլուծություն, թղթապանակների կազմում, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ:	պատմաբան ասիրական վերլու-ծություն (գրավոր[17] կամ բանավոր եղանակով):
	ՈՒԱ 18	Նկարագրի, մեկնաբանի, վերլուծի հայ գրականության պատմության (հին և միջնադարյան, նոր, նորագույն), հայ բանասիրության արդի փուլի զարգացման միտումները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական հետազոտություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն, թղթապանակների կազմում:	Բանավոր կամ գրավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր/գրավոր հարցում:
	ՈՒԱ 19	Մասնակցի գրական և գիտական բանավեճերին, բանավոր, գրավոր և էլեկտրոնային տարբերակներով ներկայացնի զեկուցումներ, հետազոտու-թյուններ:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Անհատական հետազոտություն, ռեֆերատների, զեկուցումների պատրաստում և ներկայացում, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ:	Բանավոր և գրավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր և գրավոր հարցում:
	ՈՒԱ	Գնահատի	Խոսքային	Խմբային և	Բանավոր

[17] Գրավոր աշխատանքը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ չափանիշները՝ բովանդակային կառուցվածքը, փաստարկումները, ստեղծագործականությունը, ոճը, ձևավորումը, ծավալը, գրագիտությունը, հղումների առկայությունը:

	20	մասնագիտական գործունեության բնագավառում նորամուծությունների դերը:	մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	անհատական հետազոտություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ:	անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր/գրավոր հարցում հարցում:
Հատուկ մասնագիտական կրթամաս (բանասիրության բակալավր)	ՈԻԱ 21	Կատարի գիտական ղեկավարի օգնությամբ բանա-սիրության կոնկրետ թեմայի վերաբերյալ մասնագիտական հետազոտական աշխատանք:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Անհատական հետազոտություն, գործնական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն:	Գրավոր անհատական աշխատանքի բանավոր ներկայացում,
	ՈԻԱ 22	Կազմի գիտական համառոտագրություններ, ծանոթագրություններ, մատենագիտական ցանկեր՝ ժամանակակից մեթոդների՝ գրական սկզբնաղբյուրների որոնման և հայտնաբերման համակարգի կիրառման ճանապարհով:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Վերարտադրողական մեթոդներ, գործնական մեթոդներ (վարժություն, աշխատանք գրքով, աշխատանք բնագրերի շուրջ), խմբային և անհատական հետազոտություն:	Տեքստի գրականագիտական և պատմաբանասիրական վերլուծություն (գրավոր կամ բանավոր եղանակով):
	ՈԻԱ 23	Կարողանա գիտական և գեղարվեստական տեքստեր ուսումնասիրել, դրանք սրբագրել, խմբագրել, ծանոթագրել:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Վերարտադրողական մեթոդներ, գործնական մեթոդներ (վարժություն, աշխատանք գրքով, աշխատանք բնագրերի	Տեքստի գրականագիտական և պատմաբանասիրական վերլուծություն (գրավոր կամ բանավոր

				շուրջ), խմբային և անհատական հետազոտություն:	եղանակով):
	ՈՒԱ 24	Կմասնակցի մշակութային, հասարակական, հումանիտար-կազմակերպական հաստատություններում, գրահրատա-րակչական, զանգվածային լրատ-վամիջոցների և հաղորդակցական ոլորտներում զանա-զան ծրագրերի մշակման ու իրակա-նացման աշխատանքներին:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Անհատական և խմբային աշխատանքներ:	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր կամ գրավոր հարցում:
Հատուկ մասնագիտական կրթամաս (մանկավարժության բակալավր)	ՈՒԱ 25	Կատարի գիտական ղեկավարի օգնությամբ մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի թեմայով մասնագիտական հետազոտական աշխատանք:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Անհատական հետազոտություն, տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ:	Գրավոր հետազոտական աշխատանքի բանավոր ներկայացում:
	ՈՒԱ 26	Կարողանա միջնակարգ և ավագ դպրոցներում հայոց լեզու և հայ գրականություն դասավանդել, արտադասարանական միջոցառումներ կազմակերպել, պատրաստել ուսումնամե-թոդական նյութեր:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Անհատական աշխատանք, գործնական մեթոդներ, թղթապանակների կազմում, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական), պրոբլեմային իրավիճակի վերլուծություն:	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 27	Կիրառի ժամանակակից	Խոսքային մեթոդներ	Խմբային և անհատական	Բանավոր անհատակա

		մանկավարժա-կան մեթոդներ:	(դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	հետազոտություն, հավաքագրական աշխատանք. գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական):	ն հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 28	Կմասնակցի կրթական, հասարակական-մանկավարժական ոլորտներում զանազան ծրագրերի մշակման ու իրակա-նացման աշխատանքներին:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Վերարտադրողական մեթոդներ, անհատական աշխատանք, պրոբլեմային իրավիճակի վերլուծություն:	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:

4. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացման ընթացքում ուսումնական գործընթացի բովանդակությունը և կազմակերպումը կարգավորող փաստաթղթերը

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման կրթական գործընթացի բովանդակությունը և կազմակերպումը իրականացվում է տվյալ ոլորտը կարգավորող հետևյալ փաստաթղթերով՝

- ուսումնական գործընթացի ժամանակացույց,
- բակալավրիատի ուսումնական պլան,
- դասընթացների ուսումնական ծրագրեր,
- ուսանողների ուսուցման և դաստիարակության որակն ապահովող նյութեր,
- ուսումնական և արտադրական պրակտիկաների ծրագիր:

4.1. Ուսումնական գործընթացի ժամանակացույց

Ուսումնական գործընթացի ժամանակացույցը հիմք է ծառայում ուսուցման կազմակերպման համար. ՄԿԾ-ի յուրացման ընթացքում ուսուցման բոլոր ձևերը մշակվում են մասնագիտության կրթական ծրագրի և ուսումնական պլանի յուրացման համար նախատեսված ժամկետներին համապատասխան: Ուսումնական գործընթացի ժամանակացույցը ներկայացված է ուսումնական պլանում:

4.2. Ուսումնական պլանը

Ուսումնական պլանը բաղկացած է ուսումնական գործընթացի ժամանակացույցից, ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր և մասնագիտական կրթամասերից, դասավանդվող առարկաների ցանկից և դրանց աշխատածավալից, ըստ կիսամյակների՝ դրանց բաշխումից, կրեդիտներից, ուսումնական և արտադրական պրակտիկաներից, կուրսային և գիտահետազոտական այլ աշխատանքներից, ավարտական ամփոփիչ ատեստավորումից (ներառյալ ավարտական քննությունները): Կրթամասերը կազմված են պարտադիր դասընթացներից, որոնք ուսումնասիրում են բոլոր ուսանողները, և կամընտրական, որոնց ուսուցումը կատարվում է ուսանողների նախընտրությամբ:

4.3. Դասընթացների ուսումնական ծրագրերը

Դասընթացների ծրագրերը մշակելիս հաշվի է առնվել դասընթացի վերջնարդյունքների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքներին: Դասընթացի կրթական վերջնարդյունքները սահմանելիս, ինչպես նաև գնահատելիս հաշվի են առնվել Բենջամին Բլումի կողմից առաջարկված հարցերի բուրգի վեց մակարդակները: Դասընթացների առարկայական ծրագրերը ներառում են՝

- դասընթացը սկսելու համար անհրաժեշտ նախնական գիտելիքներ,
- կրթական արդյունքներին միտված դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդները,
- դասընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները,

- գնահատվող աշխատանքի կատարման չափանիշները և գնահատման սանդղակը,
- թեմատիկ պլանը,
- քննական հարցաշարը,
- հետազոտական և վերլուծական աշխատանքի թեմաները (անհատական աշխատանքներ, կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, էսսեներ և այլն),
- բանավոր և գրավոր հարցման հարցաթերթիկների, թեստերի օրինակներ,
- հանձնարարվող պարտադիր և լրացուցիչ գրականության ցանկը:

4.4. Պրակտիկայի ծրագիրը

Պրակտիկան ծրագրված և նպատակաուղղված գործընթաց է, որի նպատակն է ուսանողների մասնագիտական որակների և ունակությունների զարգացումը, պրակտիկ գիտելիքների ձեռքբերումը, տեսական գիտելիքների խորացումը, ստեղծագործական հնարավորությունների ընդլայնումը: Ընդ որում, պրակտիկայի ընթացքում ստուգվում են ուսանողների ոչ միայն մանկավարժական հմտությունները, այլև առարկաների իմացությունը, գրագիտության աստիճանը: Այսինքն՝ պրակտիկայի ընթացքում միավորվում են ուսանողի իմացական կարողություններն ու դասավանդման մեթոդիկայի հմտությունները հայոց լեզու և գրականություն առարկաներից:

Պրակտիկան բաժանվում է երկու փուլի՝ ուսումնական և արտադրական: Դա ուսանողներին հնարավորություն է տալիս դեռ ուսումնառության ընթացքում ակտիվորեն մասնակցել կրթական հիմնարկների գործունեությանը և ապահովել մասնագիտական առաջընթացը: Պրակտիկայի տեղերի բաշխումը, ինչպես նաև ուսումնամեթոդական ղեկավարումը իրականացնում է ամբիոնը: Ուսումնական պրակտիկայի նպատակն է ծանոթացնել ուսանողներին դպրոցների աշխատանքի կազմակերպման հիմունքներին, դասալսումների միջոցով տալ բանասեր-մանկավարժի վարպետության առաջին դասերը: Արտադրական պրակտիկայի ընթացքում ուսանողներն արդեն դասավանդում և ակտիվորեն մասնակցում են դպրոցի ներքին կյանքին: Պրակտիկայի բոլոր փուլերը պարտադիր են առկա ուսուցման ուսանողների և հեռակա ուսուցման այն ուսանողների համար, որոնք չեն աշխատում տվյալ մասնագիտությամբ:

Պրակտիկայի ժամկետներն ու ձևերը ամրագրված են ուսումնական պլանում, իսկ նրա կազմակերպմանն ու բովանդակությանն առնչվող հարցերը մանրամասն ներառված են պրակտիկայի ծրագրերում: Պրակտիկայի ծրագրերը ներառում են պրակտիկայի ղեկավարմանը, պրակտիկանտի իրավունքներին ու պարտականություններին վերաբերող նկարագրությունները, պրակտիկայի արդյունքում նախատեսվող ելքային արդյունքների նկարագրությունները, պրակտիկայի հաշվետվության ձևը, արդյունքների ամփոփումը և ուսանողների գնահատումն ու կատարման չափանիշները:

5. Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ռեսուրսները

5.1 .Պրոֆեսորադասախոսական կազմը

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրումը, ինչպես նաև հարափոփոխ աշխատաշուկան բուհական համակարգից այսօր պահանջում են այնպիսի մասնագետներ, որոնք կարող են արդյունավետ աշխատանք իրականացնել արագ փոփոխվող շուկայի պայմաններում՝ ցուցաբերելով ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պատրաստակամություն: Բուհի շրջանավարտներին ներկայացվող այս պահանջներն իրենց հերթին նորանոր խնդիրներ են առաջադրում բուհի պրոֆեսորադասախոսական կազմին: Ի թիվս կրթության ավանդական պահանջների ու նպատակների՝ դասախոսի առջև դրվել են նաև սովորողների մեջ քննադատական և վերլուծական մտածողություն, միջանձնային հաղորդակցական հմտություններ, ապագա մասնագիտության նկատմամբ ստեղծագործական մոտեցումներ ձևավորելու և այլ պահանջներ, ինչից էլ բխում են դասախոսների մասնագիտական իրազեկությունների ձևավորման և զարգացման առաջնահերթությունները:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական այնպիսի կադրերով, որոնք աչքի են ընկնում այսօրինակ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով հետևյալ ոլորտներում.

Մասնագիտական՝

- առարկայի խոր իմացություն, գիտելիքներ, կարողություններ, հմտություններ,
- ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն,
- առարկայի շրջանակներում գիտության վերջին նվաճումների մասին տեղեկացվածություն,
- առարկայական չափորոշիչների ու ծրագրերի իմացություն:

Անձնային՝

- տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու և ինքնակառավարվելու կարողություն,
- ուսումնական գործընթացում հնարավոր պրոբլեմային իրավիճակները հարթելու կարողություն,
- ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և էթիկայի նորմեր ձևավորելու կարողություն,
- ուսումնառողների ներուժի գնահատում,
- լսարանին համոզելու կարողություն:

Մանկավարժական՝

- մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում,
- գործող օրենսդրական փաստաթղթերի իմացություն (ՀՀ Սահմանադրություն, Աշխատանքային օրենսգիրք, Բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենք և այլն),
- ուսանողների քննադատական մտածողության զարգացում,
- ուսումնառողների հետ իրենց ուժեղ և թույլ կողմերը վերլուծելու կարողություն,
- ուսուցման գործընթացում ինչպես մարդկային, այնպես էլ նյութական ռեսուրսների ուսումնասիրություն և վերլուծություն անելու կարողություն,

- դասապրոցեսը սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան կառուցելու կարողություն,
- սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու կարողություն,
- մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների, եղանակների համադրում,
- անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում ինչպես լսարանային, այնպես էլ արտալսարանային գործունեություն իրականացնելիս,
- սովորողների ուսուցողական-ճանաչողական գործունեության խթանում,
- ուսումնառողների շրջանում սովորելու կայուն դրդպատճառների ձևավորում և խթանում:

Գիտահետազոտական՝

- ունեն գիտական աստիճան (գիտական կոչում),
- հետազոտական նախագծերում ընդգրկվելու պատրաստակամություն,
- գիտական հետազոտություններ իրականացնելու հմտություններ,
- մասնակցություն գիտաժողովներին,
- ուսանողների հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ:

Կազմակերպչական՝

- բանավեճեր, քննարկումներ կազմակերպելու կարողություն,
- ուսանողների ակտիվությունը խթանելու կարողություն
- լաբորատոր աշխատանքներ, անհատական խորհրդատվություն, դիպլոմային և կուրսային աշխատանքներ, արտադրական պրակտիկա կազմակերպելու և ղեկավարելու կարողություն:

Հաղորդակցական՝

- խոսքի բարձր մշակույթի դրսևորում, ինչպես նաև խոսքի կատարելագործման ձգտում,

- միջանձնային հարաբերությունների պայմանական մեխանիզմների ձևավորում դասախոսի կողմից՝ հստակ մշակված խոսք, պահանջների և առաջադրանքների հստակ ձևակերպում, հիմնադրույթների հակիրճ ձևակերպում,
- օտար լեզուների իմացություն,
- օտար լեզուներով մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություն:

5.2. Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնամեթոդական ապահովվածությունը

Պարտադիր պահանջ է անհրաժեշտ ուսումնամեթոդական բազայի ստեղծումը, առանց որի հնարավոր չէ բարձրորակ մասնագետ պատրաստել: Այն ենթադրում է գրադարանային ֆոնդերի համալրում բոլոր դասընթացների համար մասնագիտական գրականությամբ, ուսումնամեթոդական փաթեթներով, ուսանողների համար նախատեսված տեղեկագրքերով, դասընթացների առանձին բաղադրիչներին՝ դասախոսություններին, գործնական, անհատական, կուրսային աշխատանքներին վերաբերող մեթոդական ուղեցույցներով ու փաթեթներով: Ամբիոնները պետք է համալրվեն դասախոսների աշխատանքային թղթապանակներով, որոնցում զետեղված կլինեն դասընթացի համար անհրաժեշտ ամենակարևոր նյութերը:

5.3. Մասնագիտության կրթական ծրագրի նյութատեխնիկական ապահովվածությունը

Համալսարանը պետք է ապահովված լինի դասընթացների տարբեր բաղադրիչների արդյունավետությունը ապահովելու համար պահանջվող նյութատեխնիկական անհրաժեշտ բազայով: ՄԿԾ-ի ուսուցման մեթոդաբանության մեջ գերակշիռ մաս են կազմում համագործակցային մեթոդները, իսկ սա ենթադրում է, որ լսարանների կահավորածությունը պետք է համապատասխանի այդ մեթոդներով դասի իրականացման պահանջներին: Նույն մեթոդաբանության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նաև ցուցադրությունն ու ինտերակտիվ դասախոսությունները, ինչը ենթադրում է լսարանների հագեցվածություն պրոեկտորներով, ինտերակտիվ գրատախտակներով և համացանցին ու

էլեկտրոնային գրադարանների ցանցին միացված համակարգիչներով: Հետազոտական արդյունավետ և նպատակային աշխատանքի իրականացման համար համալսարանը պայմանավորվածություն պետք է ունենա Երևան քաղաքի գրադարանների, Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Մատենադարանի և այլ հաստատությունների հետ՝ ապահովելու համար ուսանողների մուտքը այդ կառույցներ:

6. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացումն ու գնահատումը

Ամփոփիչ ատեստավորում (ավարտական քննություններ)		
«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավր մանկավարժի համար		
N	Դասընթացի անվանումը	Անցկացման ձևը
1.	Հայոց լեզու	Բանավոր
2.	Հայ գրականության պատմություն	Բանավոր
3.	Մանկավարժություն	Բանավոր
«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բանասիրության բակալավրի համար		
N	Դասընթացի անվանումը	Անցկացման ձևը
1.	Հայոց լեզու	Բանավոր
2.	Հայ գրականության պատմություն	Բանավոր

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացումն ու գնահատումը կանոնակարգվում է բուհում գործող հետևյալ փաստաթղթերով.

- Կանոնակարգ Հյուսիսային համալսարանում կրթական ծրագրերի ու
- մասնագիտությունների ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման:
- Կարգ Հյուսիսային համալսարանում ուսանողների գիտելիքների գնահատման:
- Կարգ Հյուսիսային համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման ու պաշտպանության:
- Կանոնակարգ ուսանողների կուրսային աշխատանքների:
- Կանոնակարգ ուսանողների ավարտական աշխատանքների:

3. ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳ.
ԷՏԱԼՈՆԱՅԻՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ Է ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԸ

Բենչմարքինգ բառը առաջացել է «benchmark» անգլերեն բառից, որը նշանակում է չափման գիծ: Վերջին տասնամյակում բենչմարքինգը դարձել է բուհերի ռազմավարության կարևոր մաս: Այն համեմատություն է էտալոնային որևէ միավորի հետ: Բենչմարքինգը նպաստում է կառավարման առաջավոր մեթոդների ներդրմանը: Բենչմարքինգը բուհերի գործունեության համադրության, համեմատության, չափման մշտական գործընթաց է, արդեն գոյություն ունեցող լավագույն փորձի վերլուծություն և այդ փորձի ադապտացում՝ բուհի յուրահատկությունների և առանձնահատկությունների հաշվառմամբ:

Բենչմարքինգը կարևոր տվյալների հավաքման և ներկայացման մեթոդ է, որը թույլ է տալիս համադրել տարբեր բուհերի կամ կրթական ծրագրերի արդյունավե-տությունը, որոշել լավագույն փորձը, ժամանակին ախտորոշել խնդիրները, հայտնաբերել ուժեղ կողմերը: Այն նաև որակը սահմանելու միջոց է:

ԲԵՆՉՄԱՐՉՔԻՆԳ ԿԱՐՈՂ Է ԱՐՎԵԼ

- Մասնագետների միջև, երբ հաջողությունների հասած մասնագետի փորձը ուսումնասիրվում և կիրառվում է:
- Բուհի ներսում տարբեր ստորաբաժանումների միջև, երբ յուրացվում է լավագույն աշխատաոճն ունեցող կամ լավագույն արդյունքների հասած ստորաբաժանման փորձը:
- Բուհերի միջև, երբ մեծ հաջողությունների հասած բուհերի փորձը վերլուծվում և կիրառություն է գտնում զարգացող բուհում:
- Բենչմարքինգի կարող է ենթարկվել բուհական գործունեության այս կամ այն կողմը, գործընթացները, ինչպես նաև առանձին մասնագիտական կրթական ծրագրերը:

ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ուղղակի արդյունք	Անուղղակի արդյունք
Վերլուծվում է բուհի գործունեությունը	Պարզորոշ ի հայտ է բերում բուհի վիճակը
Համեմատվում են բուհի ներքին ստորաբաժանումները	Կանխորոշվում են նպատակները
Որոշվում են լավագույն ձեռքբերումները	Ստուգվում է բիզնես ռազմավարությունը
Պարզվում են բացթողումները	Բարձրանում է բուհի մրցունակությունը
Գնահատվում են այլընտրանքային լուծումները	Նախաձեռնում է անընդհատ բարելավում

ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- **Փոխհամաձայնություն:** Բենչմարքինգ հնարավոր է անցկացնել միայն փոխադարձ համաձայնությամբ, որը վերաբերելու է և՛ տրամադրվող տեղեկատվության սահմաններին, և՛ հրապարակայնության աստիճանին:
- **Նույնականություն:** Համեմատվող ոլորտները և գործընթացները պետք է նույնը լինեն:
- **Չափում:** Մի քանի բուհերի արդյունքների չափման միջոցով լավագույն փորձի հայտնաբերում:
- **Հավաստիություն:** Բենչմարքինգը պետք է հիմնվի փաստերի, կոնկրետ վերլուծությունների վրա:

ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ՓՈՒԼԵՐԸ

- Պլանավորում
- Փնտրտուք
- Վերլուծություն
- Ադապտացում

Այս փուլերը ներկայացնում են բենչմարքինգի անիվը, որը գործում է նաև մշտադիտարկման պայմաններում:

ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

- Բուհի ինքնավերլուծություն և SWOT– վերլուծություն
- Բենչմարքինգի ոլորտի որոշում
- Բենչմարքինգի գործընթացի հստակեցում
- Կայքերի որոնում
- Գրանցում
- Բենչմարքինգ
- Աշխատանքի ավարտ

4. ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Նպատակը՝ համալսարանի կրթական գործընթացների իրականացման որակի վերլուծության և բարելավման ապահովում:

Դեկանատի /դեպարտամենտի աշխատանքների արդյունավետ գործընթացի պայմանները և անհրաժեշտ փաստաթղթերը

N	Անհրաժեշտ պայմանները	Առկայությունը, *
1.	Հրամաններ, կարգեր, որոշումներ	
2.	Դեկանատի /դեպարտամենտի աշխատանքային պլան	
3.	Մասնագիտությունների ուսումնական պլանների առկայություն	
4.	Ուսանողների առաջադիմության ամփոփաթերթեր և տեղեկագրեր /ա.թ.՝ տարբերությունների հանձնման տեղեկագրեր	
5.	Դասացուցակի առկայություն	

6.	Համապատասխան ցուցտախտակների վրա դասախոսներին և ուսանողներին վերաբերվող կարգերի ներկայացում	
7.	Դեպարտամենտի խորհրդի նիստերի արձանագրություններ	
8.	Ուսանողների ուսումնական, արտադրական պրակտիկաների կազմակերպման հետ կապված փաստաթղթերի առակայություն	
9.	Ուսման առաջադիմության արդյունքների վերլուծություն և խրախուսական միջոցների և կարգապահական պատասխանատվության կիրառման վերաբերյալ փաստաթղթերի առկայություն	
10.	Ուսանողի անձնական գործի փաթեթի առկայություն	
11.	Մատյանների առկայություն	

5. ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Նպատակը՝ համալսարանում կրթական և գիտական գործընթացների իրականացման որակի վերլուծություն և բարելավում:

Արդյունավետ գործընթացի պայմանները և անհրաժեշտ փաստաթղթերը

N	Անհրաժեշտ աշխատանքային պայմաններ և փաստաթղթեր	Առկայությունը ամբիոնում							
		Իրավագիտության ամբիոն	Տնտեսագիտության և կառավարման ամբիոն	Ռոմանագերմանական և ռուս բանասիրության ամբիոն	Հայոց լեզվի և գրականության ամբիոն	Լրագրության և հասարակագիտա-կան առարկաների	Մանկավարժության և հոգեբանության ամբիոն	Մաթեմատիկայի ամբիոն	Ինֆորմատիկայի ամբիոն
1.	Կրթության ոլորտին վերաբերող փաստաթղթեր, մասնագիտական կրթական								

	չափորոշիչներ, պաշտոնական հրահանգեր, ուսումնական պլաններ								
2.	Ամբիոնի գործերի անվանացանկ								
3.	Ամբիոնի ռազմավարական և կարճաժամկետ ծրագրեր, աշխատանքային պլան								
4.	Ամբիոնի դասախոսների ուսումնական բեռնվածք								
5.	Ամբիոնների նիստերի անցկացման ժամանակացույց և արձանագրություններ								
6.	Ամբիոնի տարեկան հաշվետվություններ								
7.	Ամբիոնի անդամների պորտֆոլիոն (անհատական աշխատանքային պլանները, առարկայական ծրագրերը, ուսումնամեթոդական փաթեթը:								
8.	Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման պլան								
9.	Ամբիոնի դասախոսների ատեստավորման և վերապատրաստման նյութերը								
10.	Միջանկյալ և եզրափակիչ քննությունների հարցաշարեր								
11.	Ավարտական քննությունների հարցաշար								
12.	Ավարտական քննական հանձնաժողովի նախագահների								

	հաշվետվությունները								
13.	Դաստիարակչական աշխատանքների նյութեր								
14.	Ուսանողների ուսումնական, արտադրական պրակտիկաների ղեկավարման նյութեր								
15.	Ամբիոնի առարկաների գծով ուսանողների ուսման առաջադիմության արդյունքների քննարկումներ, վերլուծություններ								
16.	Դասալսումների պլան, զեկուցագրեր և արձանագրություններ								
17.	Ամբիոնի գծով միջազգային համագործակցության փաստաթղթեր								
18.	Ամբիոնի դասախոսների գիտահետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծության նյութեր								
19.	Ամբիոնի գործունեությանն առնչվող այլ փաստաթղթեր								

II.ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԻՐԱՎԱՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հավելված
ՀՀ կառավարության
2011 թ. հունիսի 30-ի
N 978-Ն որոշման

Կ Ա Ր Գ[18]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում միջին և բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) պետական հավատարմագրման կարգը՝ անկախ դրանց գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից:

2. Պետական հավատարմագրումն (այսուհետ՝ հավատարմագրում) իրականացվում է ստորև նշված գործընթացներով՝

1) ինստիտուցիոնալ հավատարմագրում.

2) ըստ մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրում (այսուհետ՝ ծրագրային հավատարմագրում):

3. Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարբերաբար կրկնվող (շրջափուլային) պարտադիր գործընթաց է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր ուսումնական հաստատությունների համար:

4. Ծրագրային հավատարմագրումն իրականացվում է կամավորության սկզբունքով միայն ինստիտուցիոնալ հավատարմագրման դրական արդյունքի դեպքում բացառությամբ բժշկական մասնագիտությունների կրթական ծրագրերի:

5. Ուսումնական հաստատության մասնաճյուղերը ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում անցնում են ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող

[18] Կարգը երկու անգամ փոփոխվել և լրամշակվել է (*15.12.11 N 1907-Ն և 19.03.14 N 301-Ն):* Ստորև ներկայացված է այդ փոփոխություններով տարբերակը:

ուսումնական հաստատության հայտի հիման վրա, մայր ուսումնական հաստատության կազմում առանձին ժամանակացույցով: Մասնաճյուղի համար պետական հավատարմագիր տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

6. Ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացները կազմակերպում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ):

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

7. Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ուսումնական հաստատությունը պետք է՝

1) ներկայացնի դիմում-հայտ՝ ըստ ՈԱԱԿ-ի մշակած և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված համապատասխան ձևաթղթի.

2) ունենա կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա.

3) լրացնի ՈԱԱԿ-ի էլեկտրոնային համապատասխան հարցաշարը (web.survey.anqa.am):

8. Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացն իրականացվում է 3 հաջորդական փուլերով՝

1) *առաջին փուլ*՝ ինստիտուցիոնալ կարողությունների ներքին գնահատում ուսումնական հաստատության կողմից՝ ըստ ՈԱԱԿ-ի սահմանած և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված համապատասխան ձևաչափի (այսուհետ՝ ինքնավերլուծություն).

2) *երկրորդ փուլ*՝ ուսումնական հաստատության ինքնավերլուծության, կրթական և որակի ապահովման գործընթացների իրականացման արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ օրենքով սահմանված ուսումնական հաստատության տեսակին ներկայացվող պահանջներին, մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներին համապատասխան (այսուհետ՝ փորձաքննություն).

3) *երրորդ փուլ՝* ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքներով ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ հավատարմագրման հանձնաժողով), որի ձևավորման և գործունեության ընթացակարգը և կազմը հաստատվում է ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա. շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում,

բ. շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում,

գ. մերժել ինստիտուցիոնալ հավատարմագրումը:

9. Դիմում-հայտի և ուսումնական հաստատության ինքնավերլուծության ընդունումը, փորձաքննությունը և որոշման կայացումն իրականացվում են սույն կարգի պահանջների համաձայն:

10. Ուսումնական հաստատությունը կարող է ինստիտուցիոնալ հավատարմագրման համար դիմել Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR) գրանցված, ինչպես նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններին: Եվրոպական բարձրագույն կրթական տարածքից (ԵԲԿՏ) դուրս երկրների հետ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները կամ այդ երկրների մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնաճյուղերը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են հավատարմագրվել ճանաչված հավատարմագրման կառույցների կողմից, որոնց ցանկը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ նախարարություն) ղեկավարը (այսուհետ՝ նախարար): Ուսումնական հաստատությունը հինգ օրացուցային օրվա ընթացքում պետք է ՈԱԱԿ-ին տեղեկացնի օտարերկրյա կազմակերպությունների կողմից հավատարմագրման գործընթացի մեկնարկի մասին: Ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքները գրանցվում են հավատարմագրման պետական գրանցամատյանում: ՈԱԱԿ-ին չտեղեկացնելու դեպքում ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքները չեն գրանցվում հավատարմագրման պետական գրանցամատյանում: Ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունները համարվում են հավատարմագրված՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

11. ՈԱԱԿ-ը հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշումը,

հավատարմագրման վկայականի ձևաթղթի հետ միասին, ներկայացնում է նախարարություն՝ նախարարի հաստատմանը: Հավատարմագրման գործընթացի ընթացակարգային խախտման (խախտումների) հայտնաբերման դեպքում փաստաթղթերը վերադարձվում են ՈԱԱԿ՝ կրկնակի քննարկման համար: Խախտման (խախտումների) բացակայության դեպքում հավատարմագրման վկայականը հաստատվում է նախարարի կողմից և հանձնվում է ՈԱԱԿ-ին՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու համար: Մեկ աշխատանքային օրվա ընթացքում ՈԱԱԿ-ը հավատարմագրման պետական գրանցամատյանում կատարում է համապատասխան գրառում և վկայականը պատշաճ կերպով հանձնում ուսումնական հաստատությանը: Ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունները համարվում են հավատարմագրված՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից: ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման մասին ընդունված որոշումը հրապարակում է իր կայքում և զանգվածային լրատվամիջոցներով:

12. Ինստիտուցիոնալ հավատարմագիրը տրվում է 6 տարի ժամկետով:

12.1. Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ուսումնական հաստատությունը կարող է ստանալ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 կամ 4 տարի ժամկետով՝ կախված փորձագիտական զեկույցում նշված թերությունների ռիսկայնության և դրանց վերացման հրատապության գնահատականից, ինչպես նաև, եթե առկա է փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման՝ ուսումնական հաստատության կողմից հաստատված ծրագիրը:

12.2. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը չի կարող դիմել ծրագրային հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար:

12.3. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման մասին: ՈԱԱԿ-ը քննարկում է զեկույցը և տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում իր գրավոր եզրակացությունը ներկայացնում ուսումնական հաստատությանն ու հավատարմագրման հանձնաժողովին:

12.4. Փորձագիտական զեկույցում նշված թերությունները սահմանված ժամկետում չվերացվելու դեպքում պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրումը կորցնում է իր ուժը:

Այդ դեպքում տվյալ ուսումնական հաստատության վրա տարածվում են սույն կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումները:

12.5. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը փորձագիտական զեկույցում նշված թերությունները վերացնելու դեպքում դիմում է ինստիտուցիոնալ հավատարմագրման՝ նշված թերությունների վերացման մասով: Փորձագիտական խմբի կողմից սույն կարգի 48-54-րդ կետերի համաձայն պատրաստվում և ներկայացվում է զեկույց:

12.6. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում ուսումնական հաստատությունը չի կարող բացել նոր մասնագիտություն:

12.7. Նույն ուսումնական հաստատությունը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ստանալ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում:

13. Ինստիտուցիոնալ հավատարմագրումը մերժելու դեպքում, հաջորդ ուսումնական տարվանից մինչև ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալը, դադարեցվում է պետության կողմից ուսումնական հաստատությանը հատկացվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) բոլոր կրթական աստիճանների տեղերի, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը, իսկ ուսումնական հաստատությունը, սույն կարգի համաձայն, երկրորդ անգամ կարող է անցնել ինստիտուցիոնալ հավատարմագրում պայմանական հավատարմագրման ժամկետի ավարտից հետո:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

14. Ծրագրային հավատարմագրում անցնելու համար ուսումնական հաստատությունը պետք է՝

1) ներկայացնի դիմում-հայտ՝ ըստ ՈԱԱԿ-ի մշակած և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված համապատասխան ձևաթղթի.

2) ունենա կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա.

3) լրացնի ՈԱԱԿ-ի էլեկտրոնային համապատասխան հարցաշարը

(web.survey.anqa.am).

4) ներկայացնի պետական հավատարմագրման վկայականը:

15. Ծրագրային հավատարմագրման գործընթացն իրականացվում է 3 հաջորդական փուլերով՝

1) *առաջին փուլ* ՝մասնագիտության կրթական ծրագրի, ուսումնական գործունեության ներքին գնահատում ուսումնական հաստատության կողմից՝ ինքնավերլուծություն՝ ըստ ՈԱԱԿ-ի մշակած և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված համապատասխան ձևաչափի.

2) *երկրորդ փուլ*՝ ուսումնական հաստատության ինքնավերլուծության, ուսումնական գործունեության արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ծրագրային հավատարմագրման չափանիշներին համապատասխան.

3) ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքներով ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա. շնորհել ծրագրային հավատարմագրում,

բ. շնորհել պայմանական ծրագրային հավատարմագրում,

գ. մերժել ծրագրային հավատարմագրումը:

16. Դիմում-հայտի և ուսումնական հաստատության ինքնավերլուծության ընդունումը, փորձաքննությունը և որոշման կայացումն իրականացվում են սույն կարգի պահանջների համաձայն:

17. Ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրերը գրանցվում են հավատարմագրման պետական գրանցամատյանում:

18. *(կետն ուժը կորցրել է 19.03.14 N 301-Ն)*

19. Ուսումնական հաստատությունն իրավունք ունի ծրագրային հավատարմագրման համար դիմելու Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR) գրանցված, ինչպես նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններին: Ուսումնական հաստատությունը հինգ օրացուցային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի ՈԱԱԿ-ին օտարերկրյա կազմակերպությունների

կողմից ծրագրային հավատարմագրման գործընթացի մեկնարկի մասին: Եվրոպական բարձրագույն կրթական տարածքից (ԵԲԿՏ) դուրս երկրների հետ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները կամ այդ երկրների մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնաճյուղերը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են հավատարմագրվել ճանաչված հավատարմագրման կառույցների կողմից, որոնց ցանկը հաստատում է նախարարը: Ծրագրային հավատարմագրման արդյունքները գրանցվում են հավատարմագրման պետական գրանցամատյանում: ՈԱԱԿ-ին չտեղեկացնելու դեպքում ծրագրային հավատարմագրման արդյունքները չեն գրանցվում հավատարմագրման պետական գրանցամատյանում: Ուսումնական հաստատության մասնագիտության կրթական ծրագիրը համարվում է հավատարմագրված՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

20. *(կետն ուժը կորցրել է 19.03.14 N 301-Ն)*

21. ՈԱԱԿ-ը հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշումը, հավատարմագրման վկայականի ներդիրի ձևաթղթի հետ միասին, ներկայացնում է նախարարություն՝ նախարարի հաստատմանը: Հավատարմագրման գործընթացի ընթացակարգային խախտման (խախտումների) հայտնաբերման դեպքում փաստաթղթերը վերադարձվում են ՈԱԱԿ՝ կրկնակի քննարկման համար: Խախտման (խախտումների) բացակայության դեպքում հավատարմագրման վկայականի ներդիրը հաստատվում է նախարարի կողմից և հանձնվում է ՈԱԱԿ-ին՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու համար: Մեկ աշխատանքային օրվա ընթացքում ՈԱԱԿ-ը հավատարմագրման պետական գրանցամատյանում կատարում է համապատասխան գրառում և վկայականի ներդիրը պատշաճ կերպով հանձնում է ուսումնական հաստատությանը: Ուսումնական հաստատության մասնագիտության կրթական ծրագիրը համարվում է հավատարմագրված՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից: ՈԱԱԿ-ը ծրագրային հավատարմագրման մասին ընդունված որոշումը հրապարակում է իր կայքում և զանգվածային լրատվամիջոցներով:

22. Ծրագրային հավատարմագրումը տրվում է 5 տարի ժամկետով:

22.1. Ուսումնական հաստատությունը կարող է ստանալ պայմանական ծրագրային

հավատարմագրում, եթե փորձագիտական զեկույցում նշված թերությունները հնարավոր է շտկել ոչ ավելի, քան տարվա ընթացքում:

22.2. Պայմանական ծրագրային հավատարմագրում ձեռք բերելու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատությունն իրականացված բարելավման միջոցառումների մասին գրավոր զեկույց է ներկայացնում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին:

22.3. Փորձագիտական զեկույցում նշված թերությունները սահմանված ժամկետում չվերացվելու դեպքում պետական հավատարմագրման վկայականի ներդիրը կորցնում է իր ուժը:

22.4. Պայմանական ծրագրային հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը փորձագիտական զեկույցում նշված թերությունները վերացնելու դեպքում դիմում է ծրագրային հավատարմագրման նոր գործընթացին մասնակցելու համար:

22.5. Նույն ուսումնական հաստատությունը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ստանալ պայմանական ծրագրային հավատարմագրում:

22.6. Ծրագրային հավատարմագրումը մերժելու դեպքում, հաջորդ ուսումնական տարվանից մինչև ծրագրային հավատարմագրում ստանալը, դադարեցվում է ուսումնական հաստատությանը տվյալ կրթական ծրագրով պետության կողմից հատկացվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) բոլոր կրթական աստիճանների տեղերի ֆինանսավորումը: Եթե մերժվել է բակալավրի կրթական ծրագրի հավատարմագրումը, ապա հաջորդ ուսումնական տարվանից մինչև ծրագրային հավատարմագրում ստանալը դադարեցվում է ուսումնական հաստատությանը պետության կողմից հատկացվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի ֆինանսավորումը բոլոր երեք կրթական աստիճաններում: Ուսումնական հաստատությունը սահմանված ընթացակարգով կարող է անցնել ծրագրային հավատարմագրում 1 տարի հետո:

23. Վկայականի և դրա ներդիրի ձևաթղթերը՝ ՈԱԱԿ-ի ներկայացմամբ, հաստատում է նախարարը: Հավատարմագրման վկայականի և դրա ներդիրի (ներդիրների) տպագրությունը, հաշվառումը և պահպանումն ապահովում է ՈԱԱԿ-ը:

Հավատարմագրման վկայականում նշվում են՝ վկայականի համարը և սերիան, ուսումնական հաստատության լրիվ անվանումը, ուսումնական հաստատության կամ մասնաճյուղի գտնվելու վայրը, գործունեության վայրը, հավատարմագրման հանձնաժողովի որոշման համարը և ամսաթիվը, գրանցման համարը, վկայականը տալու ամսաթիվը և գործողության ժամկետը: Հավատարմագրման վկայականի ներդիրում (ներդիրներում) նշվում են պետական հավատարմագրման վկայականի համարը և սերիան, ներդիրի համարը և սերիան, ուսումնական հաստատության կամ մասնաճյուղի լրիվ անվանումը, հավատարմագրված մասնագիտության դասիչը և անվանումը, որակավորման աստիճանը, հավատարմագրման հանձնաժողովի որոշման համարը և ամսաթիվը, ներդիրը տալու ամսաթիվը և գործողության ժամկետը: Ներդիրը (ներդիրները) վավեր է (են) միայն վկայականի առկայության դեպքում:

24. Ուսումնական հաստատությունը պարտավոր է ուսանողներին տեղեկացնել ծրագրային հավատարմագրման արդյունքների մասին:

25. Ուսումնական հաստատություններն ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման մասին որոշումները կարող են երկշաբաթյա ժամկետում բողոքարկել ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդին՝ փորձաքննության անցկացման ձեռնարկով սահմանված կարգով կամ դատարան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

26. Պետական հավատարմագրման վկայական և ներդիր տալու, ինչպես նաև այդ վկայականում փոփոխություն կատարելու դեպքում գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափերով:

27. Չի թույլատրվում պետական հավատարմագրման վկայական և ներդիր օտարել, գրավ դնել կամ փոխանցել մեկ այլ անձի:

IV. ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

28. Դիմում-հայտերը կարող են ներկայացվել ՈԱԱԿ՝ ամբողջ տարվա ընթացքում:

29. ՈԱԱԿ-ը դիմում-հայտն ընդունելու կամ մերժելու հարցը քննարկում և դրա մասին դիմողին գրավոր ծանուցում է ոչ ուշ, քան դիմումն ստանալուց մեկ ամսվա

ընթացքում: ՈԱԱԿ-ը մերժում է դիմում-հայտը, եթե՝

1) ուսումնական հաստատությունը չունի կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա.

2) ներկայացված փաստաթղթերի փաթեթը թերի է.

3) ներկայացված փաստաթղթերի փաթեթը պարունակում է ոչ հավաստի տեղեկություններ.

4) ուսումնական հաստատության գործունեությունը կասեցված է.

5) չի լրացրել ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

29.1. Սույն կարգի 29-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում հայտատուն հնգօրյա ժամկետում թերությունները վերացնելու դեպքում կարող է դիմում-հայտը կրկին ներկայացնել ՈԱԱԿ:

30. ՈԱԱԿ-ը ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացնում է դիմում-հայտն ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում:

31. Դիմում-հայտի ընդունումից հետո մեկ շաբաթվա ընթացքում դիմողի և ՈԱԱԿ-ի միջև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում է ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագիր: Պայմանագրում հստակ նշվում են գործընթացի մեկնարկի ամսաթիվը և ժամանակացույցը:

32. Գործընթացի մեկնարկից հետո 12 շաբաթվա ընթացքում ուսումնական հաստատությունը պարտավոր է ՈԱԱԿ ներկայացնել ինքնավերլուծություն:

33. Ինքնավերլուծությունը ներկայացվում է հայերենով և անգլերենով, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակով:

34. Ինքնավերլուծության հայերեն և անգլերեն տեքստերի միջև հակասությունների առկայության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

35. Ինքնավերլուծությանը կից ներկայացվում է ձևաչափով պահանջվող հիմնավորող փաստաթղթերի փաթեթը:

36. Ինքնավերլուծությունն ստանալուց հետո 5 շաբաթվա ընթացքում ՈԱԱԿ-ը ընդունում է որոշում ինքնավերլուծությունն ընդունելու կամ վերադարձնելու մասին:

37. ՈԱԱԿ-ը ինքնավերլուծությունը վերադարձնում է, եթե՝

1) այն չի համապատասխանում ՈԱԱԿ-ի մշակած միասնական ձևաչափին.

2) առկա են բովանդակային, տեխնիկական, կառուցվածքային կամ այլ թերություններ.

3) ինքնավերլուծության մեջ արտացոլված տվյալները ոչ հավաստի են:

38. Նշված թերությունները վերացնելու համար ՈԱԱԿ-ը սահմանում է մեկամսյա ժամկետ:

39. Ինքնավերլուծությունում առկա թերությունները սահմանված ժամկետում վերացնելու և այն կրկին ներկայացնելու դեպքում ՈԱԱԿ-ը ընդունում է նոր որոշում ինքնավերլուծությունն ընդունելու մասին:

40. Ինքնավերլուծությունն ընդունելու մասին որոշման ընդունման պահից հինգշաբաթյա ժամկետում ՈԱԱԿ-ը ուսումնական հաստատություն է գրավոր ներկայացնում փորձագիտական խմբի կազմը: Փորձագիտական խմբի ձևավորման կարգը հաստատվում է ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից:

41. Երկշաբաթյա ժամկետում ՈԱԱԿ-ը ուսումնական հաստատության հետ համաձայնեցնում է փորձագիտական խմբի կազմը:

42. Փորձագիտական խմբի կազմի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում՝ ուսումնական հաստատության հետ կնքված պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է մեկ ամսով՝ մինչև փորձագիտական խմբի նոր կազմի հաստատումը: Մեկամսյա ժամկետի ավարտից հետո փորձագիտական խմբի նոր կազմի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում ուսումնական հաստատության հետ կնքված պայմանագրի գործողությունը դադարեցվում է:

43. Հավատարմագրման հանձնաժողովի հետ համաձայնեցված փորձագետների խմբի վերջնական կազմը, ուսումնական հաստատության հետ համաձայնեցվելուց հետո, հաստատվում է ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով: Փորձագետների հետ կնքվում են վճարովի ծառայությունների մատուցման մասին պայմանագրեր:

44. ՈԱԱԿ-ի կողմից փորձագիտական խմբի կազմը հաստատվելու օրվանից 12 շաբաթվա ընթացքում փորձագիտական խումբն այցելում է ուսումնական հաստատություն (այսուհետ՝ փորձագիտական այց):

45. Փորձագիտական այցի ժամանակացույցը, պայմանները, ընթացակարգը և տևողությունը սահմանվում են ուսումնական հաստատության և ՈԱԱԿ-ի փոխադարձ համաձայնությամբ:

46. Փորձագիտական այցը կարող է տևել 3-7 օր:

47. Փորձագիտական այցից հետո, անհրաժեշտության դեպքում, ՈԱԱԿ-ը իրավունք ունի պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր:

48. Փորձագիտական այցի ավարտից հետո վեցշաբաթյա ժամկետում փորձագիտական խումբը պատրաստում և ՈԱԱԿ է ներկայացնում փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

49. ՈԱԱԿ-ը փորձագիտական զեկույցի նախնական տարբերակն ստանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում այն ուղարկում է ուսումնական հաստատություն:

50. Ուսումնական հաստատությունը կարող է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ իր դիտողություններն ու առարկությունները երկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՈԱԱԿ, իսկ առարկություններ ու դիտողություններ չունենալու դեպքում հավաստում է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ իր համաձայնությունը: Ուսումնական հաստատության առարկություններն ու դիտողություններն ուսումնասիրությամբ հիմնավորված ճանաչվելու դեպքում փորձագիտական զեկույցի նախնական տարբերակում կատարվում է համապատասխան փոփոխություն:

51. Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի ներկայացումից հետո 7-շաբաթյա ժամկետում փորձագետների խումբը վերջնական փորձագիտական զեկույցը ներկայացնում է ՈԱԱԿ:

52. Հիմք ընդունելով ուսումնական հաստատության ինքնավերլուծությունը, փորձագետների զեկույցը և ուսումնական հաստատության կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը, ՈԱԱԿ-ը կազմում է վերջնական եզրակացության նախագիծ և այն ներկայացնում հավատարմագրման հանձնաժողով՝ որոշում ընդունելու համար:

53. Հավատարմագրման եզրակացության օրինակելի ձևը սահմանում է ՈԱԱԿ-ը:

54. Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի ներկայացումից հետո 12 շաբաթվա ընթացքում ՈԱԱԿ-ը պաշտոնական համացանցային կայք-էջում հրապարակում է ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման արդյունքների մասին եզրակացությունները և հավատարմագրման հանձնաժողովի որոշումները:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

55. Ինստիտուցիոնալ հավատարմագրման և ծրագրային հավատարմագրման ժամկետի ավարտից առնվազն մեկ տարի առաջ ուսումնական հաստատությունը կարող է դիմել ՈԱԱԿ՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման և ծրագրային հավատարմագրման նոր գործընթացներ սկսելու համար:

56. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների իրականացման համար նախատեսված փորձաքննության, գործուղման և այլ ծախսերը, անկախ գործընթացի արդյունքից, պայմանագրային կարգով հատուցում է ուսումնական հաստատությունը՝ ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված և ՈԱԱԿ-ի կողմից հրապարակված սակագների համաձայն: Ուսումնական հաստատությունները ծախսերի համար նախատեսվող գումարը պետք է փոխանցեն ՈԱԱԿ-ի հաշվարկային հաշվին:

57. Պետական հավատարմագրումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

1) հավատարմագրի վավերականության ժամկետը լրացել է.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվել է ուսումնական հաստատության գործունեությունը.

3) լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել:

58. ՈԱԱԿ-ը պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը հրապարակում է և հավատարմագրման պետական գրանցամատյանում կատարում համապատասխան գրառում:

59. Ուսումնական հաստատությունը ինստիտուցիոնալ հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է իր ստացած պետական հավատարմագրման վկայականը վերադարձնել կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

60. Պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատարանում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

61. Ուսումնական հաստատությունը պետական հավատարմագրման վկայականը կորցնելու դեպքում դիմում է կրթության պետական կառավարման լիազորված մարմին,

որը 15-օրյա ժամկետում տալիս է «Կրկնօրինակ» նշագրմամբ պետական հավատարմագրման նոր վկայական, որի համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափերով:

62. Սույն կարգի բաղկացուցիչ մասն են՝

1) ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափերը.

2) փորձաքննության անցկացման ձեռնարկը:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 30-ի N 959-Ն որոշման

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

NN ը/կ	Չափանիշը	Չափորոշիչները
1.	Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:	ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին, բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
2.	ՄՈՒՀ-ի կառավարման	ա. հաստատության կառավարման համակարգն

	համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:	ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը, գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ, դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա, ե. քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում), զ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ, է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

3. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
3.	ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են	ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների, բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների

	շարժունությանը և միջազգայնացմանը:	կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը, գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը, դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը, ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
4.	ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:	ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր, գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար, դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում,

		է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
5.	ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:	ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար, դ. պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը, զ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր, է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
6.	ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:	ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն, բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները, գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով, դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
7.	ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:	ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, բ. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար, գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը, ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ,

		գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին, է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
8.	ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:	ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ, բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը, գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
9.	Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:	ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր, բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց, գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ, դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

	Չափանիշը	Չափորոշիչը
10.	ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:	ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր, բ. որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, գ. ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, դ. որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է, ե. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար, զ. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 30-ի N 959-Ն որոշման

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

NN ը/կ	Չափանիշը	Չափորոշիչները
1.	Մասնագիտության կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման	ա. ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին, բ. ՄԿԾ-ն հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս, գ. ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է ըստ շնորհվող որակավորման ուսումնառության

	բնութագրի և պետական կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև ՄՈՒՀ-ի առաքելությանը:	ակնկալվող արդյունքների, դ. ՄԿԾ-ն համապատասխանում է ՈԱՇ-ին, մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշչին, ե. ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է և համահունչ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրի հետ և նպաստում է ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը և միջազգայնացմանը, զ. ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները, է. առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը:

2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

	Չափանիշը	Չափորոշիչները
2.	ՄԿԾ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար:	ա. ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ և դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր, բ. ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել է դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն ու ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վերհանմանը և զարգացմանը, գ. ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին, դ. հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը:

3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
3.	ՄԿԾ-ի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության	ա. ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ

	մեթոդներն ապահովում են ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:	են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար, բ. ՄԿԾ-ն իրականացվում է հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները, գ. առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
4.	ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, որը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը:	ա. ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին, բ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ, գ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ, դ. ՄԿԾ-ի շրջանակներում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները, ե. ՄԿԾ-ի շրջանակներում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:

5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
5.	ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև:	ա. ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները,

		բ. ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին, գ. ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, դ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ:

6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
6.	ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր:	ա. ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը, բ. ուսանողներին տրամադրվում են ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն, գ. ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
7.	ՄԿԾ-ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և շարունակական զարգացումը:	ա. որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակության կարիքներին և ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար, բ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր), գ. ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների

		բարելավման համար, դ. ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում, ե. ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում:

Հավելված[19]
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 31-ի N 332 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Մակարդակը	Որակավորումները	Բնութագրիչները		
		գիտելիքներ	հմտություններ	կարողություններ
1	2	3	4	5
6-րդ	Բակալավր	մասնագիտական աշխատանքի կամ ուսման կոնկրետ բնագավառին առնչվող մասնագի-տական, տեսական և գործնական խոր գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են տեսությունների ու սկզբունքների համընդգրկուն ըմ-	վարպետության և նորարարության մասին վկայող առաջանցիկ հմտություններ, որոնք անհրաժեշտ են աշխատանքի կամ մասնագիտական ուսման որևէ բնագավառում բարդ և	պատասխանատվության ստանձնում աշխատանքի և ուսման այն գործընթացների կազմակերպման ու կառավարման համար, որոնք կարող են հանգեցնել միջավայրի զգալի փոփոխությունների

[19] http://www.edu.am/DownloadFile/4277arm-Havelvac_332.pdf

		բռնման, դրանց քննադատական գնահատման ու կատարելագործման, տվյալ մասնագիտական ոլորտում առկա դպրոցների, ուսմունքների, գի-տաճյուղերի և ուղղու-թյունների մասին իրազեկվածության, դրանց համեմատության և գործնական կիրառու-թյան համար	անկանխատեսելի խնդիրներ լուծելու, բարդ ու համալիր տեղեկատվությունը քննադատաբար վերլուծելու և գնահատելու, պահանջվող ունա-կություններն ընտրելու, զարգացնելու և հարմարեցնելու, մասնագիտական գործունեության ընթացքում անհրաժեշտ մեթոդներ գործի դնելու, այդ մեթոդները կատարելագործելու և դրանց արդյունավետությունը գնահատելու համար. համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտություններ, հայտնի ծրագրային փաթեթների գործնական տիրապետում	կամ զարգացման. նախաձեռնության ցուցաբերում. որոշումներ ընդունելու ունակության դրսևորում նմանօրինակ գործողությունների իրականացման ընթացքում. աշխատանքի և ուսման գործընթացներում մյուս աշխատողների դերի որոշում. այդ գործընթացների և անհատների ու խմբերի շրջանում արհեստավարժության զարգացման համար պատասխանատվության ստանձնում. ինքնուրույնության դրսևորում աշխատանքի և ուսման ընթացքում. մասնակցություն նյութական պաշարների պլանավորման ու բաշխման գործընթացին. Օտար լեզվով կարող է կազմել հստակ տեքստ մասնագիտական թեմայի վերաբերյալ: Կարող է քննարկել իր մասնագիտության տեխնիկական մանրամասները, ներկայացնել կարծիք և իր նպատակները:
7-րդ	Մագիս տ րոս	մասնագիտական աշխատանքի կամ ուսման կոնկրետ բնագավառին	մասնագիտացված հմտություններ, որոնք անհրաժեշտ են քննադատական	էական փոփոխությունների և զարգացումների հանգեցնող

		առնչվող նեղ մասնագիտացված, արդիական, գործնական և տեսական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են այդ մասնագիտական ոլորտում նոր հայեցակարգերի և սկզբունքների մշակման, ինչպես նաև տվյալ ոլորտի շրջանակներում կամ միջառարկայական տիրույթում առանցքային նշանակություն ունեցող գիտելիքների մասին տվյալների ու տեղեկությունների հավաքման համար	վերլուծությունների, բարդ և համալիր տեղեկատվության գնահատման ու մեկնաբանման, մասնագիտացման ոլորտի մյուս ճյուղերից վերցված գիտելիքների ինտեգրման, հետագա հետազոտական աշխատանքների կատարման և այդ գործընթացի ժամանակ բարդ խնդիրների լուծման, տվյալ ոլորտում նորարարության, նոր գիտելիքների ու ընթացակարգերի մշակման, պահանջվող մեթոդների ու մոտեցումների ընտրության և մասնագիտացման ոլորտում անցկացված գործողությունների երկարաժամկետ ու կարճաժամկետ արդյունքների գնահատման համար. համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտություններ, հայտնի	գործընթացների մշակման ու պլանավորման համար պատասխանատվության ստանձնում, բարձր ինքնուրույնություն, բարդ և համալիր գործընթացների ու առաջադրանքների նախաձեռնում և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողություն, պատասխանատվություն նոր մեթոդների ներդրման ու մասնա-գիտական ասպարեզում զարգացման համար, մյուս աշխատողների կատարած աշխատանքի նկատմամբ վերահսկողություն ու նրանց առաջադիմության գնահատում, նրանց մասնագիտական ուսուցման և վերապատրաստման պլանավորում ու կազմակերպում, ուղղակի մասնակցություն նյութական պաշարների պլանավորմանն ու բաշխմանը. Օտար լեզվով կարող է կազմել հստակ, լավ կառուցված տեքստ մասնագիտական թեմայի վերաբերյալ, նկարագրել իր փորձն ու իրադարձություններ, ներկայացնել իր կարծիքների և

			ծրագրային փաթեթների գործնական տիրապետում:	նպատակների հիմնավորումները:
8	Հետազոտող (գիտական աստիճանը՝ գիտություն-ների թեկնածու)	կոնկրետ բնագավառին առնչվող առավել խոր և առաջանցիկ գիտելիքներ մասնագիտական ոլորտի և մյուս բնագավառների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են գիտահետազոտական աշխատանքի վրա հիմնված նոր հայեցակարգերի, սկզբունքների և տեսությունների մշակ-ման համար, այդ թվում՝ գիտելիքներ, որոնք կա-պահովեն համակարգչա-յին և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտություններ ու կարողություն-ներ, հայտնի ծրագրային փաթեթների՝ գործնական և ազատ տիրապետում	մասնագիտական հմտություններ, որոնք անհրաժեշտ են գիտահետազոտական աշխատանք կատարելու նպատակով զանազան բարդ գործոնների փոխազդեցության հետ կապված վճռորոշ խնդիրներ լուծելու, այդ աշխատանքի վրա հիմնված նոր սկզբունքներ և տեսություններ մշակելու, գիտելիքները և մասնագիտական փորձն ընդլայնելու և վերաիմաստավորելու տվյալ և այլ մասնագիտական բնագավառների սահմանագծում. հետազա լուծումներ մշակելու և իրականացնելու, նոր մեթոդներ ու մոտեցումներ մշակելու, մասնագիտական և հարակից ոլորտների շրջանակներում	մասնագիտական ոլորտին վերաբերող գիտելիքների և փորձի ասպարեզում էական փոփոխությունների հանգեցնող գործողությունների ծրագրում և կազմակերպում, աշխատանքային գործունեության ընթացքում բարձր ինքնուրույնություն ապահովելու, մասնագիտա-կան ոլորտում բարձր հեղինակություն վայելելու, մյուս աշխատողներին ղեկավարելու և ուղղորդելու, նոր գիտելիքների ու մեթոդների տարածումը կազմակերպելու, նյութական պաշարներն ինքնուրույնաբար ծրագրելու և բաշխելու կարողություն. Օտար լեզվով կարող է կազմել հստակ լավ կառուցված տեքստ մասնագիտական, սոցիալական և ակադեմիական թեմաների վերաբերյալ, նկարագրել իր փորձն ու

			հեռանկարային ու կարճաժամկետ գործողությունների արդյունքները գնահատելու ունակություն:	իրադարձություններ, ներկայացնել իր կարծիքների և նպատակների հիմնավորումները:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հարգելի՛ բարեկամ,

«Որակի ապահովման ձեռնարկը» կնպաստի նախ և առաջ համալսարանում կրթության որակի գործընթացների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանը:

Ձեռնարկում ներկայացված որակի ապահովման հայեցակարգը իր ընթացակարգերով, քարտեզներով, գնահատման տարբեր գործիքներով կարող է ազդակ հանդիսանալ դասախոսների և ուսանողների համար՝ վերանայելու իրենց աշխատառճը, բարելավելու ամենօրյա աշխատանքը, խստապահանջությամբ վերաբերելու արված գործին:

Ձեռնարկը ներկայացվել է նաև արտաքին փորձաքննության: Հարկ է նշել, որ փորձագետների դիտողությունների հիման վրա ձեռնարկը լրամշակվել է, որոշ հարցեր առավել մանրամասն են մեկնաբանվել, վերանայվել են որոշ գործիքներ, բարելավվել է ձեռնարկի կառուցվածքը: Ձեռնարկը քննարկվել և հաստատվել է գիտխորհրդի նիստում և Ձեր ուշադրությանն է ներկայացվում արդեն լրամշակված տարբերակը:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է գիտակցել, որ որակի ապահովման գործընթացները շարունակական բնույթ են կրում, որակի ապահովման համակարգը անընդհատ հարստացվում և բարելավվում է, ուստի այն կատարելագործելու համար անհրաժեշտ է Ձեր ուշադրությունը, խորհուրդները, դիտողություններն ու նկատառումները: Ձեր անաչառ քննադատությունն ու որակի ապահովման գործընթացներում Ձեր ներգրավվածությունը կնպաստեն կրթության որակի բարելավմանն ու մեր համատեղ աշխատանքներն առավել նպատակային կդարձնեն:

Ձեր խորհուրդների ու առաջարկների համար կարող եք այցելել Հյուսիսային համալսարանի որակի ապահովման վարչություն, գրել մեզ hyusisayin@gmail.com էլ. հասցեով կամ զանգահարել (010) 53-68-02 հեռախոսահամարով:

Սպասում ենք Ձեր արձագանքին: